

ՀՀ ԳԱԱ ՀԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ  
«ԷԹՆՈ» ԷԹՆՈ-ՄՏՍԿՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՅԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ  
«ԱՐԱՄԵ» ԳԻՏԱ-ՄՏՍԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԴՐԱՅԵ

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ НАН РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
НАУЧНЫЙ ЦЕНТР ЭТНО-КУЛЬТУРНЫХ ИССЛЕДОВАНИЙ "ЭТНОС"  
НАУЧНО-КУЛЬТУРНОЕ БЛАГОТВОРИТЕЛЬНОЕ ОБЩЕСТВО "АРАМЕ"

INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY NAS OF REPUBLIC OF ARMENIA  
"ETHNOS" SCIENTIFIC CENTRE OF ETHNO-CULTURAL RESEARCHES  
SCIENTIFIC-CULTURAL CHARITY ASSOCIATION "ARAME"

Ա. Ս. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ Ռ. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԵՂԱՀՆԵՐԻ ՎԱՆՏՈՍՊԱՆ (ՈՒՐԱՐՏԱԿԱՆ)  
ՔԱՐԱՅՐ-ԴԱՍՏՐԱԿԱՆ

Ա. Ս. ՊԻԼԻՊՈՍՅԱՆ

Ռ. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

ВАНТОСПСКАЯ (УРАРТСКАЯ) ПЕЩЕРНАЯ ГРОБНИЦА  
ГЕХОВИТА

A. S. PILPOSYAN

R. A. MKRTCHYAN

THE VANTOSPIAN (URARTIAN) CAVE-TOMB  
OF GEGHOVIT

A III  
6'935

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՐՁԱՆՆԵՐ  
АРХЕОЛОГИЧЕСКИЕ ПАМЯТНИКИ АРМЕНИИ  
THE ARCHAEOLOGICAL MONUMENTS OF ARMENIA

18


ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՐՁԱՆՆԵՐ  
УРАРТСКИЕ ПАМЯТНИКИ  
URARTIAN MONUMENTS

ՊՐԻՎ - ВЫПУСК - ISSUE

IV

«Զանգակ-97»

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN  
2001



Աշխատանքը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ  
Հնագիտության և ազգագրության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա

**Բ.Ն. Առաքելյան, Ա.Ա. Քալանթարյան, Է.Վ. Խանգաղյան,  
Ս.Ա. Եսայան, Գ.Հ. Կարախչանյան.**

Պատասխանատու խմբագիրներ՝

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, բանաս. գիտ. դոկտոր  
պատմ. գիտ. դոկտոր  
կենսաբ. գիտ. թեկնածու

Ս.Բ. Հարությունյան  
Ա.Ա. Քալանթարյան  
Ն.Հ. Թոշար

ԴՏՀ 902/904 (479.25)  
ԳՄԴ-63.4 (2Հ)  
Փ 553

Փիլիպոսյան Ա. Ա., Սկրաչյան Ռ. Ա.  
Փ 553 Գեղինվահի վանտոսայյան (ուրարտական) քարայր-դամբարանը. - Եր.:  
«Զանգակ-97», 2001.- 160 էջ:  
(Հայաստանի հնագիտական հուշարձաններ)

Փ  $\frac{0505000000}{0003(01)-2001}$  2001 թ.

ԳՄԴ-63.4 (2Հ)

ISBN 99930-2-197-0

© «Զանգակ-97»  
© Ա. Փիլիպոսյան, Ռ. Սկրաչյան

Հեղինակներն իրենց խորին շնորհակալությունն են հայտնում  
ծնունդով գեղիովիտցի, «Երևանշին» ԲԲԸ տնօրեն  
պարոն **Վազգեն Պողոսյանին**,  
զրքի հրատարակության գործում ցուցաբերած համակողմանի  
օգնության և դրամական օժանդակության համար:

\* \* \*

Авторы выражают глубокую признательность  
уроженцу с. Геховит, директору ОАО "Ереванстрой"  
господину **Вазгену Погосяну**  
за всестороннюю помощь и финансовую поддержку  
в издании книги.

\* \* \*

Autors are profoundly obliged to  
**Mr. Vazgen Poghosyan**  
director of JSC "Yerevanshin"  
for his kind support in publishing of this book.

Салындардың көмүр менен тұнба менен  
жарылғанда, олардың мөлдөмдөліктерінің  
табигаты да, өзіндең табиғаты да жарылғанда  
білдірілгендей, шарттың табиғаты да жарылғанда  
табиғаттың табиғаты да жарылғанда

Ал салындардың мөлдөмдөліктерінің табиғаты да  
жарылғанда, олардың мөлдөмдөліктерінің табиғаты да жарылғанда  
табиғаттың табиғаты да жарылғанда

Ал салындардың мөлдөмдөліктерінің табиғаты да жарылғанда  
табиғаттың табиғаты да жарылғанда

## ԱՌԱՋԱԲԱՆ

Սևանի ավագանում շուրջ մեկ հարյուրամյակ շարունակվող հնագիտական հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև դրանց լրացնող գրավոր սկզբնաղբյուրների ընձեռած տվյալները պարզորոշ վկայում են, որ առևտրա-տնտեսական և էքսոմշակութային փոխառնչությունների վերհանման, հետազոտման ու մեկնարաննան տեսանկյունից խիստ կարևոր այս տարածաշրջանը նշանակալից դեր է ունեցել Հայկական լեռնաշխարհի Բրոնզի-Երկարի դարաշրջանների պատմական գործընթացներում (Լալայան Ե. 1906, էջ 5-37: Լալայան Ե. 1910, էջ 59-84: Լալայան Ե. 1931, էջ 67-117, 194-199: Մնացականյան Հ. 1965, էջ 95-113: Միքայելյան Գ. 1968: Աղոնց Ն. 1972, էջ 179-181, 205-207: Հմայակյան Ս., Բիշիոնե Ռ., Պարմեջիանի Ն. 1996, էջ 47-49: Հմայակյան Ս., Հակոբյան Հ., Բիշիոնե Ռ., Պարմեջիանի Ն. 1998, էջ 39-41: Հմայակյան Ս., Սանամյան Հ. 1998, էջ 41-42: Կապանցյան Գ. 1931: Կապանցյան Գ. 1941: Արդյունյան Հ. 1985):

Աշխարհագրական այս միավորն ու նրա բնակիչները, ըստ V դարի պատմիչ Մովսես Խորենացու, իրենց անվանումը (Գեղարքունիք՝ սեպագիր տեքստերում «<sup>ԿՈՐ</sup>Uelikuhi» կամ «<sup>ԿՈՐ</sup>Uelikun») ստացել են հայերի առասպելական նախնի Հայկ նահապետի ժառանգ՝ Գեղամի անունից:

Պատմա-մշակութային վերոհիշյալ գործընթացների առավել վաղ ժամանակահատվածի (Վաղ Բրոնզի շրջափուլ՝ մ.թ.ա. IV հազարամյակի կեսերից մինչև մ.թ.ա. III հազարամյակի վերջին քառորդ) վերաբերյալ մեր տվյալները, հուշարձանների սակավության (նաև՝ քիչ ուսումնասիրվածության) պատճառով, առայժմ բավական սահմանափակ են ու թերի: Թեև, ըստ տարածքի երկրաբանական հետազոտության արդյունքների, վերը նշված ժամանակագրական սահմաններում Սևանի ավագանի բնակլիմայական պայմանները (մեղմ ձմեռ, տեղումներով առատ ամառ) առավել բարենպաստ պետք է եղած լինեն տեղանքի բնակեցման համար (Саяճյան Յ. 1983): Ամեն դեպքում, դատելով մինչ օրս այս կամ այն շափով ուսումնասիրված հնագիտական հուշարձանների տվյալներից, կարելի է ենթադրել, որ Սևանի վաղբրոնզեդարյան հասարակությունը չի ունեցել ընդգծված սոցիալական շերտավորում, բնակչությանը բնորոշ են եղել նատակյաց ապրելակերպը և տնտեսավարման երկրագործական-անասնապահական զուգորդված եղանակը: Այս ժամանակահատվածին բնորոշ և կուր-արաքյան մշակույթին վերաբերող հատուկենտ հսկայական մի շարք գործոնների հետ միասին, պայմանավորվել է նաև էկոլոգիական փոփոխություններով (Саяճյան Յ. 1983): Այս ժամանակահատվածից սկսած Սևանի ավագանը դառնում է ինտենսիվ բնակեցվող տարածաշրջան: Դրա լավագույն վկայությունը՝ մ.թ.ա. XXII/XXI-XIX/XVIII դարերի միջինքրոնզեդարյան (2-րդ փուլի) բռեղք-վանաձորյան մշակույթին վերաբերող հնագիտական համալիրների տարածվածությունն է Գեղարքունիքի գրեթե բոլոր հատվածներում (Ցամաքարերդ, Լճաշեն, Զկալովկա, Նորաշեն, Հայրավանք, Նորատու, Հացառատ, Լիճք, Ներքին Գետաշեն, Գեղիովիտ, Զոլաքար, Վարդենիս, Արդանիշ և

այլն) (Լալայան Ե. 1931, էջ 79-80, 151, նկ. 92, 23: Մնացականյան Հ. 1965, էջ 99-105, աղ. I-III: Փիլիպոսյան Ա. 1989, էջ 25-27: Փիլիպոսյան Ա. 1991, էջ 29-31: Փիլիպոսյան Ա., Հովհաննիսյան Վ. 1991, էջ 33-35: Ենգիբարյան Ն. 1991, էջ 69: Հմայակյան Ա., Բիշինոն Ռ., Պարմեջիանի Ն. 1996, էջ 47-49: Խաչատրյան Լ., Փիլիպոսյան Ա. 1997, էջ 14-15: Թեորոսյան Լ. 1998, էջ 52-53: Մկրտչյան Բ., Պոլիսօսյան Ա., Պալիկյան Ա. 1997, էջ 131-140: Պոլիսօսյան Ա., Մկրտչյան Բ. 1997, էջ 103-105: Պոլիսօսյան Ա., Մկրտչյան Բ. 1998, էջ 101-103): Հատկանշական է, որ վերոհիշյալ ժամանակաշրջանին վերաբերող հնագիտական նյութերը սերում են բացառապես դամբարանային համալիրներից և խապառ բացակայում տարածաշրջանում այս կամ այն չափով պեղված բնակատեղիների շերտագրական հորիզոններում: Հաճամանք, որն անուղղակի կերպով, կարծես թե վկայում է նոր մշակույթը կրողների տնտեսավարման հիմնականում անասնապահական եղանակը և ժամանակավոր (սեզոնային) վրանատիպ կացարաններում բնակվելու պարագան: Սրանով, թերևս, կարելի է բացատրել Սևանի ավազանի բազմաշերտ բնակատեղիներում մ.թ.ա. III-II հազարամյակների սահմանագծի միջինբրոնզեդարյան (քոեղք-վանաձորյան) իրողությունների բացակայության խնդիրը:

Դատելով հնագիտական հուշարձանների պեղումների արդյունքներից, մոտավորապես մ.թ.ա. XVIII դարից Սևանի ավազանի միջինբրոնզեդարյան (3-րդ փուլի) հուշարձաններում (և՝ բնակատեղիներում, և՝ դամբարանադաշտերում) մասամբ գոյատևած ուշ քոեղք-վանաձորյան իրողությունների կողքին նկատվում են սևանարցախ-կարմիրբերդյան և կարմիրվանքյան մշակութային խմբերին բնորոշ նյութական դրսևություններ: Վերջիններս վկայված են Լճաշենի, Նորատուսի, Գավառի, Մոքքի ծովականի, Երանոսի, Ծակքարի, Լիճքի, Ներքին Գետաշենի, Ջոյ կողի, Ալբերդի, Չարի դռան, Նորաբակ 1-ի, Կոլ պալի, Ծովակի և այլ բնակատեղիներում ու դամբարանադաշտերում: Այլ խոսքով, Սիջին Բրոնզի այս փուլում արդեն նկատվում է Սևանի ավազանի տևական ժամանակ (շուրջ 400 տարի) լրված վաղբրոնզեդարյան (կուր-արաքսյան) հատուկենտ բնակավայրերի աստիճանական վերաբնակեցումը նշված մշակույթների և մշակութային խմբերի կրողների կողմից: Ըստ որում, դատելով միևնույն դամբարանադաշտի սահմաններում պեղված համաժամանակյան դամբարաններում ուշ քոեղք-վանաձորյան, սևան-արցախ-կարմիրբերդյան և կարմիրվանքյան մշակութային իրողությունների համատեղ հանդես գալու հանգամանքից, կարելի է ենթադրել, որ քննարկվող ժամանակահատվածում (մ.թ.ա. XVIII-XVI դարեր) վերոհիշյալ մշակույթների և մշակութային խմբերի կրողներն արդեն բնակվել են մեկ ընդհանուր բնակավայրի սահմաններում և քաղումներ կատարել միևնույն դամբարանադաշտում՝ քաղման ծեսի արարողակարգի մանրամասների մեջ (հնարավոր է նաև կենցաղում) դեռևս շարունակելով պահպանել իրենց առանձնահատկությունները: Սևանի ավազանից հայտնաբերված և քննարկվող ժամանակահատվածներին վերաբերող հնամարդաբանական նյութերի ուսումնասիրվածության արդի մակարդակը հնարավորություն է ընձեռում փաստել գանգերի ծևաբանական տարբերակների և տեղի մշակույթների ու մշակութային խմբերի որոշակի փոխկապակցվածությունը համաժամանակյան (սինխրոն) և նրբակազմության դարաշրջանային փոփոխականությունը՝ տարաժամանակյան (ոլիախրոն) հարթություններում: Ըստ Գեղարքունիքի մ.թ.ա. XVII-XV դարերին վերաբերող գանգարանական նյութերի, քննարկվող տարածաշրջանում փաստագրվում է զանգվածեղ, երկարադեմ, արխայիկ մարդաբանական տիպ, որն իր գուգահեռներն (նախատիպերը) ունի Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. III հազարամյակի վաղբրոնզեդարյան

(շենգավիթյան փուլ) նյութերում և Սերծավոր Արևելքի ու Միջերկրականի ավազանի վերինպալեռլիթյան և մեզոլիթյան հուշարձաններում (Ակրտչյան Ռ. 1997, էջ 32-33):

Վերը նշված գործընթացների արդյունքում, մ.թ.ա. XVIII-XVI դարերի ընթացքում նույն տարածաշրջանում և անգամ միևնույն բնակավայրի սահմաններում համատեղ գոյակցող և իրենց ինքնուրույն հատկանիշները դեռևս պահպանած ուշ բուղոք-վաճածորյան, սևան-արցախ-կարմիրերյան և կարմիրվաճրյան մշակույթների և մշակության խմբերի աստիճանական սերտաճման և դրանց կրողները հանդիսացող բնակչության միախառնման հետևանքով, մ.թ.ա. XVI-XV դարերի սահմանագծից Գեղարքունիքում սկսվում են նշմարվել և մ.թ.ա. XV-XIV դարերի ժամանակագրական սահմաններում վերջնականապես ձևավորվել ընդհանուր մարդարանական նկարագիր ունեցող հասարակություն և վերջինիս պատկանող որակապես նոր մշակույթ, որը մասնագիտական գրականության մեջ ստացել է «Լճաշեն-մեծամորյան» անվանումը (Ավետիսյան Պ., Բաղալյան Ռ., Հմայակյան Ս., Փիլիպոսյան Ա. 1996, էջ 8-10): Հնագիտական հուշարձանների ընձեռած տվյալները (հզոր պարսպապատ բնակատեղիներ, մետաղագործության և հատկապես զինագործության աննախադեպ վերելք, ընդգծված սոցիալական շերտափորում ունեցող հասարակության ձևավորում, առևտրա-փոխանակային գործարքների ընդլայնում, ռազմա-քաղաքական միջազգային կապերի հաստատում մերձավորարևելյան հզոր տերությունների հետ և այլն) մատնանշում են քննարկվող ժամանակահատվածում (մ.թ.ա. XV-XIII դարեր) Սևանի ավազանում ձևավորված մարտունակ տոհմա-ցեղային (գուցեն վաղ պետական) կազմավորումների գոյությունը:

Ըստ ձեռքի տակ այսօր առկա տվյալների, վերջիններս իրենց անկախ և ինքնուրույն կարգավիճակը պահպանեցին մինչև մ.թ.ա. VIII դարը, այսինքն մինչև այն ժամանակահատվածը, երբ խնդրո առարկա տարածաշրջանը ներգրավվեց Հայկական լեռնաշխարհում ձևավորված այն հզոր ռազմա-քաղաքական միավորի կազմում, որը ժամանակակից պատմագրության մեջ հայտնի է Ուրարտու - Ուրաշտու - Բիայնիի - Բիայնելե - Վանի թագավորություն - Արարատ քազմատարրերակ, բայց ըստ էության, հոմանիշ և համարժեք անվանումներով: Հենց վերջինիս մշակույթի և պատմության մի կոնկրետ դրվագին էլ վերաբերում են այս աշխատության մեջ ներկայացված իրողություններն ու դրանց վերլուծությունը: Եվ քանի որ սույն գրքի հեղինակներն իրենց տարբերակն ունեն ավելացնելու վերը թվարկված անվանումներին, ապա, թերևս, կարիք կա հիմնավորելու նման քայլի անհրաժեշտությունը, ինչպես նաև համառոտ անդրադառնալու վերոհիշյալ անվանումներից յուրաքանչյուրի կիրառման ժամանակ ի հայտ եկող որոշ անհարթություններին և անհամապատասխանություններին:

«Ուրարտու» անվան կողմնակիցները (Ժ.Սանդալյան, Գ.Ա. Ղափանցյան, Բ.Ա. Կուֆտիմ, Բ.Բ. Թիոտրովսկի, Գ.Ա. Մելքիշվիլի, Ի.Ա. Դյակոնով, Բ.Ն. Առաքելյան, Գ.Բ. Զահուկյան, Խ.Գ. Սարգսյան, Լ. Վանդեն Բերգե, Լ. Դե Սեյեր, Մ. Սալվինի, Օ. Բելլի, Մ. Վան Լուն, Ք. Մաքսուել-Հիսլոփ և այլոք) գտնում են, որ այն ամենից ամբողջական է արտահայտում Հայկական լեռնաշխարհում հնուց ապրած և մ.թ.ա. IX դարից ինքնուրույն պետականություն ստեղծած ցեղախմբերի հավաքական երկրանունը (Ղափանցյան Գ. 1940: Առաքելյան Բ., Զահուկյան Գ., Սարգսյան Գ. 1987: Առաքելյան Բ., Զահուկյան Գ., Սարգսյան Գ. 1988: Պիօտրովսկի Բ. 1944: Կյուֆտին Բ. 1944: Մելիկիշվիլի Գ. 1960: Պիօտրովսկի Բ. 1962: Դյակոնով Ի. 1963: Մեշչանին Ի. 1978: Sandaljian J. 1900: Maxwell-Hislop K. 1956: Barnett R. 1963: Van Loon M. 1966: Akurgal E. 1968: Piotrovsky B. 1970: Vanden Berghe L., De Meyer L. 1982-1983: Belli O. 1991): Որպես ապացույց բերվում են մ.թ.ա. XIII-VII դարերի աստուրական արձա-

նազրությունների համապատասխան հատվածները, որոնցում քննարկվող կազմակորումը հիշատակվում է Ուրուատրի (ըստ Սալմանասար I-ի հաղորդման), Ուրատրի (ըստ Աղաղ - Ներարի II-ի) և Ուրարտու (սկսած Սալմանասար III-ի ժամանակներից) անվանական տարբերակներով (Կարագեղեցի Յ. 1998, էջ 11-15: Ճյակոն Ի. 1951, տեքտ № 27: Պիօտրովսկի Բ. 1959, էջ 32-33: Արյունյան Հ. 1970, էջ 12: Luckenbill D. 1926, № 114, № 360: Schroeder O. 1921, № 84: Ebeling E., Meissner B., Weidner E. 1926, էջ 113):

«Ուրաշտու» անվանաձևը կիրառողները (Ս. Երեմյան, Ու. Հորովչից) չհրաժարվելով «Ուրարտու» անվանումից, այսուհանդերձ վկայակոչում են Հին Աշխարհը ներկայացնող բարելոնյան քարտեզի վրա (մ.թ.ա. VIII դար), Ասորեստանի թագավոր Նարուալասարի (մ.թ.ա. 626-604թթ.) մոտ և Աքեմենյան Իրանի հզոր տիրակալ Դարեհ I-ի Բեհիսթունյան արձանագրության մեջ (մ.թ.ա. VI դարի վերջին քառորդ) Հայկական լեռնաշխարհի այդ ռազմա-քաղաքական կազմավորմանը տրվող անվանումները, գրտելով, որ «Ուրարտու»-ի կողքին և նրան լիովին համազոր կարող է օգտագործվել նաև «Ուրաշտու» երկրանումը (Պիօտրովսկի Բ. 1944, էջ 29: Մելիկիշվիլ Ի. 1954, էջ 22: Լիպին Լ. 1957, էջ 28, տեստ 209: Ճյակոն Ի. 1951, ԱԲԻՒ-81: Ճահճամաև Մ. 1963, էջ 90: Horowitz W. 1988, էջ 148-149, 152-154): Առավել ևս, որ վերջինս պահպանվել է Պատմական Հայաստանի գավառներից մեկի՝ Ոշտունիքի և համանուն իշխանական տան (Ըոջշտունի, Ոշտունի) անվանումներում, ինչն ավելի ևս ընդգծում է «Ուրաշտու» տեղանուն-տերմինի պատմականությունն ու օգտագործման ընդունելի լինելը (Երեմյան Ս. 1963, էջ 79: Հակոբյան Թ. 1968, էջ 180: Կատվալյան Ս. 1983, էջ 682-683):

Անշուշտ փաստարկները հիմնավոր են: Սակայն երկու դեպքում էլ առկա է նշվածը վիճարկող մի հանգամանք: Բանն այն է, որ Հայկական լեռնաշխարհի այս հզոր տերության տիրակալները մայրենի լեզվով թողած բազմաթիվ արձանագրություններում իրենց երկիրը երբեք չեն կոչում Ուրաշտու կամ Ուրարտու: Վերջին անվանումը միայն մի անգամ օգտագործվում է Թոփուզավայի երկեզու արձանագրության (ΥΚԻ - 264) ասսուրեն տեքստում, այն էլ ոչ թե «<sup>mat</sup> Urartu» վանկակապակցությամբ, այլ «<sup>KUR</sup>URI» գաղափարագրի ձևով, որն արևելագետները՝ դատելով Սիմահերիքի արձանագրություններից մեկի (ԱԲԻՒ - 60) տվյալներից, նույնացնում են Ուրարտու երկրանվանը (Կարագեղեցի Յ. 1998, էջ 12): Մինչդեռ մայրենի լեզվով արված մի քանի հարյուր տեքստերում պարբերաբար կրկնվում են <sup>KUR</sup>Bi-a-i-na («Քիայնա երկիր») և երկու անգամ նաև <sup>KUR</sup>Bi-a-i-ni-li («Քիայնի երկիր՝ բիայնացիների երկիր») անվանաձևները, որպես սեփական թագավորության երկրանուն: Սիա այս հանգամանքն էլ նկատի ունենալով, ուսումնասիրողների և արևելագետների մի ստվար խումբ (Ս. Նիկոլսկի, Ա. Մեյս, Լեռ, Բ. Պիրոտրովսկի, Ի. Մեշչանինով, Ս. Եսայան, Լ. Բիյազով, Ս. Հմայակյան, Հ. Ավետիսյան, Ա. Մովսիսյան և այլոք) հայրմար է գտել օգտագործել <sup>KUR</sup>Bi-a-i-na տեղանունը հենց այնպես, ինչպես ներկայացնում են սեպագրերը, կամ էլ կիրառել նրա ժամանակակից հայերենով վերծանելի «Վանի թագավորություն» (բառացիորեն՝ «Վանա երկիր») տարբերակը (Լեռ 1915: Հմայակյան Ս. 1990: Հարությունյան Բ. 1998: Մովսիսյան Ա. 1998: Նիկոլյան Մ. 1893: Պիօտրովսկի Բ. 1959: Եսայն Ս., Բիյագով Լ., Ամայքյան Ս., Կանեցյան Ա. 1991: Ավետիսյան Գ. 1992: Sayce A. 1929): Անշուշտ, այն ամենահարազատն է Հայկական լեռնաշխարհի սեպագիր տեքստերի քննարկվող երկրանվանը: Սակայն մասնագիտական գրականության մեջ վերջինիս տարբեր մակարդակներով (լեզվաբանական, էթնիկական, ազգագորական, առասպելաբանական, քաղաքական և այլն) օգտագործումը հաճախ տեղիք է տալիս պատմա-ժամանա-

կազրական, էթո-ազգագրական և լեզվա-մշակութային անհամապատասխանությունների ու խառնաշփռությունների: Բանն այն է, որ Հայաստանի պատմության, հայ ազգագրության և լեզվաբանության մեջ վաղուց արդեն ամրակայված են «Վանի բարբառ», «Վանի ազգագրություն» (այս համատեքստում նաև «Վանի տարագ», «Վանի ոսկերչություն»), «Վան-Վասպուրականի մանրանկարչություն» և նմանօրինակ այլ հասկացություններ, որոնք իրենց մեջ բացառապես հայ միջնադարյան (ինչ-որ տեղ նաև հայ քրիստոնեական) մշակույթի, արվեստի, պատմության, բանահյուսության, լեզվաբանության և ազգագրության բովանդակությունն ու իմաստային ծանրաբեռնվածությունն են կրում և անվանապես չեն կարող անմիջականորեն նույնացվել և առավել ևս, միանշանակ վտանգավոր Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. IX-VI դարերում գոյատևած տերության գրին ու լեզվին, նյութական ու հոգևոր մշակույթին և ռազմա-քաղաքական պատմությանը:

Ահա, թերևս, վերոհիշյալ բոլոր անհամապատասխանություններն ել հաշվի առնելով, արևելագետների մի այլ խումբ (Ն.Վ. Հարությունյան, Հ.Հ. Կարազյոզյան և այլոք) նպատակահարմար գոտավ հնարավորին չափ հարազատ մնալ մ.թ.ա. I հազարամյակի առաջին կեսի «տառին ու ոգուն» և մասնագիտական գրականության մեջ սկսեց կիրառել սեպագրերում հանդիպող <sup>KUR</sup> Biainili տարրերակը (Կարազյոզյան Յ. 1998, էջ 12, 20, 24, 160, 164 և այլն: Արյության Ի. 1970): Սա, իր հերթին, առաջ բերեց պատմա-ժամանակագրական մի նոր անհամապատասխանություն: Բանն այն է, որ <sup>KUR</sup> Biainili տարրերակը (ինչպես նշեցինք վերևում) Հայկական լեռնաշխարհի սեպագիր տեքստերում հանդիպում է ընդամենը երկու անգամ և վկայված է միայն Ռուսա 1-ի (մ.թ.ա. 735-714 թթ.) Թոփուզավայի (YKH-264) և Նոր Բայազետի (Գավառ) (YKH-265) արձանագրություններում: Այսինքն՝ որպես քննարկվող տերության անվանում <sup>KUR</sup> Biainili-ն լավագույն դեպքում կիրառվել է մ.թ.ա. 735-714թթ. ընդունված ժամանակահատվածում, և, ըստ այդմ էլ, դժվար թե կարող է առանց փաստացի հիմնավորման մ.թ.ա. 735 թվից առաջ և մ.թ.ա. 714 թվից հետո ևս հավակնել այդ դերը կատարելուն:

Ավելացնենք նաև, որ «Ուրարտու», «Ուրաշտու», «Բիայնա», «Բիայնիի-Բիայնելե» և «Վանի բազավորության» երկրանվանական տարրերակները նախընտրող արևելագետներն իրենց մենագրություններում և հոդվածներում շիրաժարվեցին նաև վերոհիշյալ համադաս անվանումների գուգորդված օգտագործումից: Այսպես նույն ուսումնասիրության մեջ քննարկվող երկիրը կարող է կոչվել «Բիայնա» կամ «Բիսայնիի», նրա սեպագիր լեզուն՝ «ուրարտերեն», իսկ էթնիկ կազմը կամ վերնախավը՝ «ուրարտացիներ»: Մեկ այլ հետազոտության մեջ երկիրը կարող էր հորջործվել «Վանի բազավորություն», իսկ նրա դիցարանն ու նյութական մշակույթն՝ «ուրարտական»: Երրորդ աշխատության մեջ երկիրը կարող էր կոչվել «Ուրարտու», լեզուն՝ «խալերեն», իսկ այդ հարցերը քննարկող գիտաճյուղը՝ «խալդագիտություն» (Marr H. 1920: Մեծանիս Ի. 1927: Tseretheli M. 1928: König F. 1955: Տես նաև վերը հղված հրապարակումները): Հանգամանք, որ ինքնին խոսում է օգտագործված անվանական-տերմինաբանական համակարգի անկատարության և ոչ ճկուն լինելու մասին:

Մեր դարի 60-70-ական թվականներից սկսած և մասամբ նաև այժմ, հինգարևելյան սեպագրերի վերծանման ու ընթերցման համընդիանուր օրենքներին ու համակարգին անձանոր որոշ հետազոտողների հրապարակումներում, Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. IX-VI դարերի հզոր տերությունը ստացավ նաև «Արարատ» կամ «Արարատի բազավորություն» անվանումը (Չահինյան Լ. 1984: Այվազյան Ս. 1986: Իշխանյան Ռ. 1988: Իշխանյան Ռ. 1988 ա: Իշխանյան Ռ. 1989: Իշխանյան Ռ. 1989 ա: Կակոսյան Է.

1990: Վարպետյան Ա. 1992: Շահինյան Լ. 1994: Տերյան Ա. 1995: Խաչառյան Բ. 1991: Գերսոն Պ. 1998, էջ 307-328): Ըստ որում, իսկապես անժխտելի հիմնավորում և իմաստային ծանրաբեռնվածություն ունեցող այս նոր երկրանուն-տարրերակի տակ, զուտ կամայական մասնատումներով ստացված «քառարմատային», «անձնանվանական» և «տեղանվանական» պարզունակ, երբեմն նաև շինծու զուգահեռների և մակերեսային, սուրյեկտիվ, երևակայական-ենթադրական մեկնարանությունների մակարդակում սկսեցին շահարկվել՝ հայ ժողովրդի երնիկ անաղարտության, նրա՝ ի վերուստ երկրագնդի վրա առաջինը գոյություն ունեցած լինելու, աշխարհի հին և նոր մյուս ժողովուրդների ու մշակույթների նախաստեղծը հանդիսանալու և Հայկական լեռնաշխարհի սեպագիր տեքստերի լեզվաբերականական վերծանումների «մաքրման» և «վերընթերցման» (այն էլ հիմնականում ժամանակակից հայերենի հենքի վրա) խնդիրները...

Անվիճելի է, որ «Արարատ»-ն ասսուրական արձանագրությունների «Ուրարտու» երկրանվան ոչաստուքերեն, նաև ավելի ուշ դրսևորված հայերեն անվանաձևն է (այս համընդհանուր կարծիքը չի կիսում միայն Հ.Կարազյանը): Ըստ որում այն «Արարատի թագավորություն» և «Արարադի երկիր» տարրերակներով հանդիպում է ինչպես Հին Կոտակարանի երրայերեն օրինակում, այնպես էլ պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Այլ խոսքով, ինչպես «Ուրարտու», «Ուրաշտու», «Քիայնա» և «Քիայնիլի» անվանաձևերը, այնպես էլ «Արարատ»-ը, «Արարադի երկիր»-ը և «Արարատյան թագավորություն»-ը պատմական հավաստի սկզբնաղբյուրներով վկայված իրողություններ են և իրավունք ունեն գիտական կիրառության:\*

Այլ հարց է, թե ինչ են ներկայացրել մ.թ.ա. II հազարամյակի վերջի - մ.թ.ա. I հազարամյակի առաջին կեսի ասսուրական տեքստերը, մ.թ.ա. I հազարամյակի կեսերին վերագրվող երրայական աղբյուրները և Մովսես Խորենացու մատյանի միջնադարյան ձեռագիր կրկնօրինակումներն այդ անվանումների տակ և, որքանով են վերջիններս պատմա-ժամանակագրական և երն-մշակութային առումներով համարելի: Ըստ մ.թ.ա. XIII-XI դարերի ասսուրական արձանագրությունների Ուրուատրի-Ուրատրին Վանա լճից հարավ և հարավարևելք, Տավրոսյան լեռների շրջանում ապրող բազմաթիվ ցեղախմբերի (հայտնի են նրանցից ուրի անվանումները) դաշնակցության հավաքական երկրանունն էր: Նոյն սկզբնաղբյուրների մ.թ.ա. IX-VII դարերի հաղորդումներն արդեն «Ուրարտու» երկրանվան տակ ներկայացնում էին Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և թերևս հարավ-արևելյան մասը: Ըստ որում, «Ուրուատրի-Ուրատրի-Ուրարտու» տեղանվան ձևավորման գործում, արևելագետների և լեզվաբանների կարծիքով կարևոր դեր է խաղացել Կորդուքի լեռներում տեղակորված Արարդի (Արարդու) լեռան անվանումը («Աշխարհացույց»-ի Արարադ լեռն է, ժամանակակից Սիրիայի և Թուրքիայի սահմանագծին գտնվող Զուրի դաղը): Հենց այս տարածքում է տեղադրում «Արարադի երկիր»-ը նաև պատմահայր Խորենացին: Ինչ վերաբերում է երրայական աղբյուրներին, ապա «Արարատի թագավորություն» կամ «Արարատյան թագավորություն» անվան տակ վերջիններս թերևս ընկալել են Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հյուսիսային հատվածները:

Նոյն երկրանվան տարածա-ժամանակագրական այս անհամապատասխանությունները գուցե բացատրելի են Ուրուատրի-Ուրարտուն կազմող ցեղախմբերի նախնական բնակության տարածքի (թերևս Կորդուքի լեռներից մինչև Վանա լիճն ընկած շրջանում) աստիճանական ընդարձակման և պատմա-մշակութային կարևորություն

\* Մասնավորապես քննարկվող երկրի համար Արարատ անվանումն են նախընտրում նաև գերմանացի արևելագետները (Rimschneider M. 1966; Wartke R.-B. 1993):

ունեցող մի շարք իրողությունների, այդ թվում նաև աշխարհագրական որոշ անվանումների տեղափոխման, երկրորդման և նույնիսկ երրորդման հանգամանքով: Թերևս այդ ճանապարհով է Արարդի (Արարդու) լեռան անունն աստիճանաբար անցել ոչ միայն Ուրուատրի-Ուրատրի-Ուրարտու-Արարատ երկրին, այլև Արարատյան դաշտին և Արարատ լեռանը: Ի դեպ, վերջինիս առավել հին անվանումը Մասիսն է, որն իր հերթին տեղանվանական փոխակերպումների ու աստիճանական տեղափոխությունների իր ուղին ու բացատրությունն ունի և այդ առումով կարող է համադրվել շումերական էպոսի և առասպելների Մաշու լեռան, ժամանակակից Սիրիայի հյուսիս-արևմուտքում գտնվող Մասիսի լեռնաշղթայի, Հայկական լեռնաշխարհի Նեխ-Մասիքի (Սիրիան սար) և Հյուսիսային Կովկասում գտնվող Մաշուկ լեռնազագագարի (Պյատիգորսկի մոտ) անվանումների հետ (Փիլիպոսյան Ա., Քամալյան Հ. 1997, էջ 67-69): Ինչ վերաբերում է Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. IX-VI դարերում գոյատևած պետությանը միանշանակ «Արարատ» կամ «Արարատյան բազավորություն» անվանելուն, ապա այս խնդիրը դեռևս ամբողջապես չի լուծում առաջ քաշված պահանջները: Եվ ահա թե ինչու: Նախ, ինչպես «Ուրարտու», այնպես էլ «Արարատ», «Արարատի երկիր» կամ «Արարատյան բազավորություն» բնորոշումներն իսպառ բացակայում են խնդրո առարկա երկրի տիրակալների մայրենի լեզվով թողած արձանագրություններում: Բացի այդ, «Արարաբ» («Արարաբում») է կոչվել նաև ժամանակակից Եմենի մայրաքաղաք Սանայից մոտ 200կմ հյուսիս-արևելք տեղավորված և Սաքայի բազավորության մութարիք Յասամար Բայինի ու նրա հաջորդների կողմից մ.թ.ա. VIII-VII դարերում կառուցապատված (այսինքն՝ Ուրարտու-Բիայնիլի-Արարատին համաժամանակյա) քաղաք-ամրոցը (Կարագեղեան Յ. 1998, էջ 280-281: Լոնդին Ա. 1971, էջ 153: Գրյանե- բիւ Պ. 1978, էջ 4, 6, 11, 13, 15, 273-274, 276): Ավելացնենք նաև, որ մ.թ.ա. I հազարամյակի կեսերին և ավելի ուշ «Արիարաբ» անձնանունն են կրել Կապահովվայի բազավորության առնվազն ինը տիրակալներ (Բիկերման Յ. 1976, էջ 200): Փաստեր, որոնք անմիջական կապ (և ընդհանրապես որևէ կապ) չունեն «Ուրարտու», «Բիայնիլի» կամ «Վան» երկրի անվան ու զբաղեցրած տարածքի հետ և կարող են տեղանվանական ու անձնանվանական ավելորդ խառնաշփորությունների պատճառ հանդիսանալ:

Ահա վերոհիշյալ անհամապատասխանություններից և խառնաշփորություններից խուսափելու նպատակով, Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. II հազարամյակի վերջին քառորդից հիշատակվող և մ.թ.ա. IX-VI դարերում պետականության հասած հզոր տերության համար, մենք նպատակահարմար ենք համարում գիտական շրջանառության մեջ մտցնել «Վանոտոսափի բազավորություն» (կարելի է նաև «Վան-Տոսափի բազավորություն») անվանում-տերմինը: Բան այն է, որ խնդրո առարկա երկրի տիրակալներն (Դշպուինի, Սենուա, Արգիշթի I, Սարդուրի II, Ռուսա I, Արգիշթի II, Ռուսա III) իրենց սեպագիր հաղորդումներում սեփական տիտղոսները թվարկելիս, անշուշտ, ոչ պատահականորեն, ընդգծել են նաև *Biaina* (Վան) երկրի բազավորն ու *Tuspa* (Տոսափ) քաղաքի տերը լինելու պարագան (YKH – 19: 25: 37: 39: 42: 45: 57-59: 61: 66-70: 72: 79: 91: 92: 101-108: 119: 127: 128: 130: 131: 134: 136-138: 144-147: 155: 158: 164: 165: 168: 170: 173: 269: 278: 280: 281: 287: 293-296):\* Այսինքն՝ տվյալ դեպքում արքայական

\* Այս առումով, հասունենաւ են այն տեքստերը, որտեղ վերոհիշյալ տիրակալների մի մասի տիտղոսացանկերում *Biaina* երկրանունը հանդիպում է առանց *Tuspa* քաղաքանվան և ընդհակառակը՝ *Tuspa*-ի առկայության դեպքում բացակայում է *Biaina*-ն: Սեր հաշվարկներով կարելի է փաստել այդպիսի 11 դեպք, որոնցից երկուսում բացակայում է *Tuspa* քաղաքանունը (YKH – 265: 276), իսկ իննում՝ *Biaina*-ն (YKH – 29: 34: 127 II: 161: 287: 293-296): Այլ խոսքով, ինը դեպքում *Tuspa* քաղաքանունը նաև երկիր է խորհրդանշել: Այստեղ հարկ է բերել մեկ

տիտղոսների տասնամյակներով մշակված և իմաստավորված բանաձև-սահմանումներում *Biaina*-Վաճ և *Տսքա-Տոսպ* տեղանունների հաջորդական, համադրված կիրառումն անվերապահորեն ընկալվել է որպես խնդրո առարկա հզոր և անկախ տերության էթնո-ռազմա-քաղաքական, կրոնական և աշխարհա-տարածական ընդհանրության անվանական խորհրդանշ: Ուստի «Վանտոսպ» («Վաճ - Տոսպ») երկրանուն տերմինը սույն գրքի հեղինակների կողմից հորինված և կամայականորեն հարմարեցված երկրանուն չէ, այլ սեպագիր սկզբնարյուրներով փաստված կոնկրետ իրողություն, որը հարյուրամյակներ անց էլ պահպանվել է Հայոց աշխարհի Վասպորական նահանգի Վանտոսպ գավառի անվան մեջ (Թովմա Արծրունի և Անանուն 1985, էջ 102-103, 372-375 և այլն): Այս գավառը տարածական առումով ևս, ըստ էության, համընկնում է քննարկվող երկրի բուն սահմաններին և (մեկ անգամ ևս ուզում ենք ընդգծել) իր անվան մեջ անխաթար կերպով վերարտադրում է վերջինիս սեպագիր երկրանվան (<sup>KUR</sup> *Biaina* - Վաճա երկիր) և մայրաքաղաքի (<sup>ՀՀ</sup> *Տսքա-Տուշպա քաղաք*) բառարմատային համակցությունը: Առաջարկվող անվանում-տերմինը հարմար է նաև քննարկվող հզոր տերության լեզվական, էթնիկական, մշակութային և այլ իրողությունները ներկայացնելու առումով: Այսպես, Վանտոսպի բազավորության սեպագիր արձանագրությունների լեզուն կարելի է անվանել «Վանտոսպերեն», քնակիչներին՝ «Վանտոսպցիներ», մշակույթը՝ «Վանտոսպյան» և այդ ամենի տակ ընկալել Հայաստանի պատմության մ.թ.ա. IX-VI դարերին վերաբերող պատմա-մշակութային կոնկրետ իրողությունները: Սա, ըստ մեզ, հնարավորին չափ սահմանափակում է տարածամանակյա դրսուրում և էթնո-աշխարհագրական հենք ունեցող համանվանական խառնաշփռություններն ու հստակորեն ընդգծում, որ վերոհիշյալ հասկացությունների տակ գործ ունենք Վաճ-Վասպորականի (նաև՝ Հայկական լեռնաշխարհի) հայ ազգաբնակչության անմիջական նախնիներից մեկը հանդիսացող տեղաբնիկների նյութական և հոգևոր մշակույթի, գրի ու պատմության հետ: Այդ իսկ պատճառով, մենք համակարծիք չենք այն ուսումնասիրողներին, որոնք առաջարված այս տեղանուն-տերմինի տակ սոսկ մշակութային ծանրաբեռնվածություն են ընկալում, վերջինս փորձում են մատուցել որպես Իշպուհնի և Մենուա արքաների բարեփոխումների ծրագրի իրականացման հետևանքով ձևավորված «Ելիտար, պետական մշակույթ» և այն առանձնացնում են ու, ըստ էության, հակառակում Հայաստանի (ժամանակակից սահմանների մեջ տեղաբաշխված) համաժամանակյա հուշարձաններից հայտնաբերված և այսպես կոչված «տեղական մշակույթ» արգասիք համարվող նյութական արժեքներին: Առավել ևս, որ նշանակում է «ապրելածիկ» նկատվող տարրերություններով (Եսայան Ս., Բիյագով Լ., Հայակյան Ս., Կանեցյան Ա. 1995, էջ 59-60): Ինչ «տեղական» և «ոչ տեղական» իրողությունների մասին է խոսքը, երբ երևույթը վերաբերում է ողջ Հայկական լեռնաշխարհին և գոյություն ունի բացառապես նրա աշխարհա-քաղաքական սահմանների ներսում: Չենք խոսում արդեն «տեղական» և «ոչ տեղական» բերովի» հասկացությունների մակարդակում կատարվող նման տարրերակման հետևանքով հնարավոր ոչ ցանկալի «գիտական» շահարկումների մասին...»

Ահա թե ինչու, մենք առաջարկում ենք Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. IX-VI դարերի քաղաքական, էթնիկական, մշակութային և լեզվական կոնկրետ դրսուրումները

ուշագրավ դիտարկում լա: Իշպուհնի և Մենուա արքաների համատեղ գահակալման ժամանակ փորագրված Կելյաշինի երկեղու արձանագրության աստուերեն հատվածում (YKH - 19<sub>3,16</sub>) Տուշպան անվանվում է Նաիրի երկրի մայրաքաղաք:

ներկայացնել «Վանտոսպ» («Վան-Տոսպ») պատմական տեղանունից բխող տերմինորակումներով:

Վանտոսպի թագավորության նյութական մշակույթին, պատմությանը, կրոնին, ճարտարապետությանն ու քաղաքաշինությանը, գրին ու լեզվին, կենցաղին ու գործունեության այլ ոլորտներին վերաբերող ամենատարբեր հարցերը շուրջ մեկ ու կես հարյուրամյակ է, ինչ բազմաթիվ արևելագետների, պատմաբանների, արվեստագետների, լեզվաբանների ու հնագետների ուշադրության կենտրոնում են (Ղափանցյան Գ. 1940: Եսայան Ս. 1982: Ղափաղարյան Կ. 1984: Հմայակյան Ս. 1990: Մելքոնյան Ա. 1995: Կարագեղցեան Յ. 1998: Մովսիսյան Ս. 1998: Փիլիպոսյան Ս. 1998: Անանյան Գ. 1999: Մեծանին Ի. 1927: Մելիկիշվիլ Ի. 1954: Պիօտրովսկի Բ. 1959: Մարտիրոսյան Ա. 1961: Պիօտրովսկի Բ. 1962: Դյակոն Ի. 1963: Արյուտյան Հ. 1966: Դյակոն Ի. 1968: Արյուտյան Հ. 1970: Մարտիրոսյան Ա. 1974: Մեծանին Ի. 1978: Խօճաշ Ը., Տրուխտանով Կ., Օգանեսյան Կ. 1979: Օգանեսյան Կ. 1980: Եսայան Ը. 1985, էջ 112 – 122: Արյուտյան Հ. 1985: Խաչիկյան Մ. 1985: Vanden Berghe L., De Meyer L. 1982-1983: Merhav R. 1991 և այլն):

Կուտակված ու հետազոտված հսկայածավալ նյութը և վերջինիս հիման վրա արված վերլուծություններն ու մեկնաբանությունները բացառիկ նշանակություն ունեն Հայաստանի վաղ շրջանի պատմության կոնկրետ շրջափուլի համակողմանի ուսումնասիրության գործում: Այսուհետեւ, յուրաքանչյուր նոր հուշարձանի հետազոտությունն ի զրույ է փոփոխություններ մտցնել վերջնական թվացող մեկնաբանությունների համակարգում, պահանջելով նոր և արդիական միջոցների ու եղանակների, ինտեգրացված գիտական համակարգերի օգտագործում և, այս ամենի հենքի վրա, անվիճելի համարվող եզրահանգումների ստուգում, շտկում, լրացում և եթե հարկ կա՝ նորովի մեկնաբանում:

Այդպիսի ինքնատիպ և Վանտոսպի թագավորության պատմության ու մշակույթի հետազոտման համար կարևոր նշանակություն ունեցող հնագիտական հուշարձանի՝ Գեղիովտի քարայր-դամբարանի ուսումնասիրությանն էլ նվիրված է սույն աշխատանքը:

\* \* \*

Հնարավոր է տարիներ անց այս ուսումնասիրության մեջ արված եզրահանգումների ու մեկնաբանությունների մի մասը կորցնեն իրենց գիտական թարմությունը: Սակայն, գիտական տեսանկյունից ուսումնասիրների և մեծարժեք կմնա Հայաստանի պատմության Պետական թանգարանի գետեղարանում պահպող հնագիտական այն ժողովածուն, որ 1980 թվականին հավաքվեց և 1993-ին պեղվեց Գեղիովտում ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար հնագետ, պատմական գիտությունների թեկնածու Լևոն Պետրոսյանի, ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, հնագետ Աշոտ Փիլիպոսյանի, գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, հնագետ-մարդաբան Ռուզան Մկրտչյանի, գիտաշխատող, հնագետ Նորա Ենգիբարյանի և Հայաստանի Պատմության Պետական թանգարանի Հնագիտության բաժնի վարիչ Լյուդվիգ Խաչատրյանի ջանքերով:

Այդ կարևոր գործին իրենց անմիջական մասնակցությունը բերեցին նաև Գեղիովտի գյուղի բնակիչներ Արգար Հովհաննիսյանը, Մերատ Հովհաննիսյանը, Կտրեն Շահումյանը, Համբարձում Սուքիասյանը, Գնունի Մանվելյանը, Հայկ Ղարիբյանը, Վահան Նովիկյանը, Լիա Խաչատրյանը, Հենրիկ Հովհաննիսյանը, Խաժակ Մանուկյանը, Եղիազար Հովնանյանը, Վաղինակ Խաչատրյանը, Արմեն Շահումյանը և այլոք:

Հեղինակներն իրենց շնորհակալությունն են հայտնում նաև Երևանի քժշկական Համալսարանի թերապևտիկ ատամնաբուժության ամբիոնի վարիչ, քժշկական գիտությունների դրկտոր, պրոֆեսոր Վալերի Տատինցյանին և դոցենտ Լևոն Անդրեասյանին, հուշարձանից հայտնաբերված հնամարդաբանական նյութի ատամնածնութային համակարգի հետազոտման և մասնագիտական ախտորոշման համար:

Հավաքածուի մետաղական առարկաները մաքրվել ու ամրակայվել են Հայաստանի Պատմության Պետական թանգարանի վերականգնման լաբորատորիայում, Այրիս Եսայանի կողմից:

Խեցեղեն անոթները մաքրել, հավաքել և ամրակայել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակից, վերականգնող Վարդան Վարդանյանը:

Գրքում գետեղված գծանկարներն ու չափագրություններն իրականացրել է ԵՊՀ հնագիտության լաբորատորիայի նկարիչ Անժելա Դավթյանը:

Տեքստի համակարգչային շարվածքը կատարել են Տաթևիկ Շահկյանը, Լիլիթ Վանյանն ու Անահիտ Սարգսյանը:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քննարկվող հնագիտական հուշարձանը պատահաբար բացվել էր Սևանա լճի հարավ-արևմտյան ափեզրից մոտ 5 կմ հարավ (աղ. 1), լճից դեպի Սելիմի լեռնանցքը տանող ճանապարհի աջ կողմում, ներկայիս Գեղիովիտ գյուղի միջով հոսող գետակի ծախ ափին, այդ հատվածում կառուցվող կամքջի շինարարության ժամանակ (Փիլիպոսյան Ա., Խաչատրյան Լ. 1995, էջ 80): Պայթեցման, ծանր տեխնիկայով կատարվող հողահեռացման ու հողահարթեցման աշխատանքների հետևանքով քանդված հուշարձանի նյութական արժեքների մի զգալի մասն անտեղյակության հետևանքով լցվել էր կառուցվող կամքջի հիմքի մեջ և բետոնապատվել: Բարեբախտաբար զետնի երես դուրս եկած և գյուղի բնակիչների կողմից հավաքված, ապա և տեղում հետագայում պեղված հնագիտական նյութերի մի արժեքավոր հավաքածու փրկվեց կորստից ու մուտք գործեց Հայաստանի Պատմության Պետական թանգարան:

Տեղանքի հետազոտումը և պեղված հնագիտական նյութերի տեսականու ուսումնասիրությունը բույլ տվեցին եզրակացնել, որ գետակի մակերևույթից մոտ 15-20մ բարձրության վրա, նրա զառիվեր ափին գտնվող և հողմահարման հետևանքով բազալտե ժայռի մեջ գոյացած բնական խոռոչը ենթարկվել է մասնակի ծևափոխման և վերածվել երկու հաղորդակից սրահներից կազմված քարայր-դամբարանի (աղ. 2): Ըստ որում, 1980 թվականին շինարարական աշխատանքների հետևանքով լիովին ավերվել է ժայռափոր կառուցվածքը ունեցող, արտաքին մուտքից ու ելքից գորկ և նեղ, ձեռակերտ միջանցքով առաջին՝ խոռոչ-սրահին հաղորդակցվող, երկրորդ սրահը: Այստեղ ամփոփված են եղել դամբարանի տերը, նրան պատկանող գոյնքն ու անձնական շքեղ իրերը: Այս չպահպանված սրահի, նրա նշանակության և ուղղվածության մասին արված ենթադրությունների համար որոշակի հիմքեր են տալիս ժայռավտր կառույցի առաջին՝ ամբողջապես պահպանված սրահի (այն, հավանաբար, դեպի հիմնական խուզը տանող նախարահ է հանդիսացել) հետազոտման, պեղման ու չափագրման աշխատանքները: Դրանք հնարավորություն են ընձեռում փաստել, որ քննարկվող կառույցն ունեցել է ընդգծված հարավ-հյուսիս կողմնորոշում և դեպի արևելք նայող կիսաձվածիր բնական մուտք, որը, բերևս, փոքր-ինչ վերամշակվել է դամբարանը կառուցողների կողմից (աղ. 2, նկ. 1): Մուտքի բարձրությունը 2.55մ էր, լայնքը՝ հիմքի մոտ 4.0մ: Առաջին սրահի ընդհանուր մակերեսը մոտ 30-32մ<sup>2</sup> էր, սրահի ամենամեծ երկարությունը հարավից-հյուսիս՝ 8.30մ, ամենամեծ լայնքն արևելքից-արևմուտք՝ 5.20մ: Այս սրահն ուներ մուտքի ստորին մակարդակի նկատմամբ մոտ 0.25-0.30մ ցած տեղավորված, համեմատաբար հարթ հատակ (այն հարթեցրել էին դամբարանը կառուցողները) և անկանոն հատակագիծ: Առաստաղը բույլ կամարածե էր (մշակման հազիվ նկատելի հետքերով), իսկ առավելագույն բարձրությունը հավասար էր 3.10մ-ի: Սրահի հարավային հատվածն ավելի անմշակ էր ու նեղ (լայնքը մուտքավորապես 2.00-2.50մ), սակայն օժտված էր կառուցվածքային յուրահատուկ մանրամասով: Վերին (այսինքն առաջին սրահի կամարածե առաստաղի հարավային) անկյունում ուներ 2.80մ<sup>2</sup> մակերեսով (1.40x2.00) միջանցիկ փորվածք-պատուհան: Սրահի հյուսիսային հատվածը համեմատաբար ընդարձակ էր և ուներ 4.00-4.30մ լայնք: Հենց այս հատվածում, քարայրի հյուսիսային պատին, հատակից մուտքավորապես 0.30-0.40մ բարձրության վրա փորվել էր 0.54մ<sup>2</sup> մակերես (1.08x0.50), մոտ 0.45մ խորություն և հարավ-հյուսիս կողմնորոշում ունեցող միջանցք: Վերջինիս հարավային՝ պահպանված մասի բավական խնամքով արված մանրամաս-

ներն էլ հենց քույլ են տալիս ենթադրել, որ այդ միջանցքին հյուսիսային կողմից կից, չպահպանված երկրորդ սրահը եղել է ձեռակերտ: Արված դիտարկումների, չափագությունների և առաջարկված ենթադրությունների հիման վրա էլ այս ուսումնասիրության մեջ վերականգնվել է Գեղիովութիւնը քարայր-դամբարանի հնարավոր գծապատկերն ուղղահայաց (աղ. 2, նկ. 3) և հորիզոնական (աղ. 2, նկ. 2) կտրվածքներով:

Նման ժայռավոր դամբարանային կառույցները տարածված երևույթ են վանտոսայան դամբարանաշինության մեջ և հանդիպում են Տուշպա-Վանի՝ մասնավորապես Խորխորյան մեծ ու փոքր քարայրների (աղ. 4, նկ. 1, աղ. 5, նկ. 1), Նավթքույուի (աղ. 4, նկ. 2), Վերին հարթակի տակ գտնվող քարայրի (աղ. 7, նկ. 2), Խչկալայի (աղ. 8, նկ. 1-2), Զինանոցի քարայրի (աղ. 7, նկ. 1), Վանի ժայռի հարավ-արևմտյան կողմում գտնվող Սեծ քարայրի (աղ. 10, նկ. 1-2), ինչպես նաև Պալուի (քարայրներ I-III) (աղ. 6, նկ. 1-3), Թաճրիվերմիշի (քարայրներ I-III) (աղ. 9, նկ. 1-3), Մանազկերտի (Կալեքյոյ) (աղ. 9, նկ. 4), Ջոկրելենի (Ջերանի ջրամբարի մոտ) (աղ. 9, նկ. 5), Ջյուրդումելիքի (Խարբերդի շրջանում, Էլյազլողի մոտ) (աղ. 9, նկ. 6), Հաջիսելիի (Խարբերդի քաղաքի մոտ) (աղ. 9, նկ. 7), Մակու-Մանզարի (աղ. 11, նկ. 1), Կալե Հողարի (աղ. 11, նկ. 2), Ալիշարի (աղ. 12, նկ. 2), Կայալի դերեի (աղ. 13, նկ. 1-3), Էսրի Դողուրայազետի (աղ. 12, նկ. 1), Բուտան կայայի, Հայկաբերդի (Չափուշիկի) և Աղիջևազի (Արծկե) հնագիտական համալիրներում (Օզզուչ թ. 1968, էջ 19: Հմայակյան Ս. 1990, էջ 79: Եսայան Ս., Արաջյան Լ. 1995, էջ 211: Մելքոնյան Մ. 1995, էջ 11-38: Փիլիպոսյան Ս., Խաչատրյան Լ. 1995, էջ 80: Հովհաննիսյան Կ. 1996, էջ 152, 156, 175-183, աղ. 35, աղ. 36: Իվանովսկի Ա. 1911, էջ 64: Կազնակ Ա. 1917, էջ 28-32: Մինօրսկի Յ. 1917, Մար Հ., Օրբելի Ի. 1922: Կոֆտին Բ. 1944, էջ 69-71: Պիոտրովսկի Բ. 1959, էջ 207-219: Պիոտրովսկի Բ. 1962, էջ 3-7: Մարտիրոսյան Ա. 1974, էջ 56: Եսայն Ս., Բիյգով Լ., Ամայքյան Ս., Կանեցյան Ա. 1991, էջ 20-21: Lehmann-Haupt Ս. 1907, էջ 70: Lehmann-Haupt Ս. 1910: Piotrovskii Բ. 1966, էջ 204-219: Rmischneider Մ. 1966, էջ 70: Van Loon Մ. 1966, էջ 62: Burney Ս. 1966, էջ 55-111: Burney Ս., Lang Դ. 1971, էջ 139, 145, 150-153: Ogun Բ., Bilgiç Է. 1973, էջ 13-14: Kleiss Ո. 1976, էջ 42: Ögün Բ. 1978, աղ. 645: Charlsworth Մ. 1980, էջ 91-97: Forbes Տ. 1983, նկ. 58: Sevin Վ. 1987, էջ 279-300: Sevin Վ. 1988, էջ 1-44: Sevin Վ. 1989, էջ 451-500: Andre-Salviim Բ., Salvim Մ. 1992, աղ. 1: Sevin Վ. 1994, էջ 58-67: Körögölü Կ. 1996, էջ 38-45, նկ. 6-8:): Մասնագետների կարծիքով սրանք պատմական այս շրջափոլի համար ժամանակագրական քավական լայն ընդգրկում ունեն, կարող են վերաբերել Արգիշտի 1-ինից մինչև Ռուսա II իրար հաջորդած վանտոսայան արքաների գահակալության շրջանին և թվագրվել մ.թ.ա. VIII-VII դարերով (Burney Ս., Lang Դ. 1971, էջ 139, 150: Özgür Տ. 1969, էջ 7):

Գեղիովութիւնը քարայր-դամբարանին, իրենց կառուցվածքային առանձնահատկություններով առավել մոտ են Վանի քարաժայրի վրա գտնվող Խչկալայի և Զինանոցի քարայրի, Մշո դաշտից հյուսիսի տեղապորված Կայալի դերեի, Վանա լճի հյուսիսային ափեզրի մոտ գտնվող Աղիջևազի (Արծկե), Մանազկերտի (Կալեքյոյ), Պալուի (քարայր III), Թաճրիվերմիշի, Ջյուրդումելիքի և Հաջիսելիի ժայռավոր համալիրները: Ըստ որում, Խչկալան և Զինանոցի քարայրը Գեղիովութիւնը քարայր-դամբարանի հետ համընկնում են կամարածև պոաստաղին քացված միջանցիկ պատուհաններով, իսկ մյուսները՝ ժայռավոր կառույցների ինտերյերի ոչ այնքան խնամքով արված մշակումով:

Անհրաժեշտ է ավելացնել նաև, որ Գեղիովութիւնը քարայր-դամբարանը վանտոսայան նմանօրինակ միակ կառույցը չէ Սևանի ավազանում: Այդպիսի համալիրների մնացորդներ նկատելի են նաև Սևանա լճի հարավային և հարավ-արևելյան ափամերձ հատվածում գտնվող Մանզար (Զորագյուղից արևմուտք), Ծովակ և Այրք հնավայրերի

տարածքում (Միքայելյան Գ. 1968, էջ 32: Հմայակյան Ս., Բիշիոնե Ռ., Պարմեջիանի Ն. 1996, էջ 47-49): Հ. Մարտիրոսյանի կարծիքով, հավանաբար, նմանատիպ կառույցներ են իրենցից ներկայացրել նաև Արգիշտիխնիլի-Արմավիր քաղաքի քաղմաքիվ անձավ-ներն ու Թեյշերահնի-Կարմիր բլուրի դիմաց, Հրազդանի կիրճում նշմարվող որոշ քարայրներ (Հմայակյան Ս. 1986, էջ 125: Մարտիրօսյան Ա. 1974, էջ 53):

Ենթադրություն կա, թե Հայկական լեռնաշխարհի ժայռափոր դամբարանները բացառապես Վանտոսապի քաղաքորության ժամանակներին բնորոշ կառույցներ են և դադարել են օգտագործվել վերջինիս պատմական թատերաբեմից հեռանալու հետ միաժամանակ: Մենք հակված չենք այդ կարծիքը վերջնական համարելու: Բանն այն է, որ քարայր-դամբարանների երևույթը փաստագրված է Եվրոպայի (Ֆրանսիա՝ Քյոնզարդ, Ապենինյան թերակղզի՝ Էտրուսկյան դամբարաններ, Մալթա՝ Հայ Սաֆիլինինի, Բալկանյան թերակղզի՝ Միջեններ, Դնեբրաջ, Կրետե՝ Արկալախորի, Կնոսոս և այլն), Աֆրիկայի (Եգիպտոս՝ Նեղոսի ափին գտնվող Խապի աստվածության ժայռափոր տաճարը) և Մերձակոր Արևելքի (Միջիա-Պաղեստինյան աշխարհ՝ Խուդեյրա, Գեզեր, Թիլ Բարսիք, Փոքր Ասիա՝ Օսմանկայասի, Յազզըր Քայա, Ակիխնար, Մանիսա, Անդրկովկաս՝ Մուզուտյան քարայրներ, Յնորի, Իրանական սարահարք՝ Քուլ-ի Ֆարախ և այլն) մ.թ.ա. V-I հազարամյակներով քվազրվող հնագիտական համալիրներում (Պենտլերի Ջ. 1950, էջ 231: Միկով Բ., Ջամբազով Հ. 1960: Կալանդաձե Ա. 1965: Բորիան Յ., Մուխովա Բ. 1970, էջ 194: Զլատկովսկայ Տ., Շելով Դ. 1971, էջ 59: Բլավատսկայ Տ. 1976, էջ 152: Խինց Վ. 1977, լուսանկ. 5, 6, 10: Նեմերովսկի Ա. 1983, էջ 114, 115, 119—120: Լոսեվա Հ., Սիդորովա Հ. 1988, էջ 13-30, նկ. 5, 8, 11: Փրեզեր Ջ. 1990, էջ 200: Բարտոնեկ Ա. 1991, էջ 238—245: Վինոգրադովա Հ., Կալերևա Տ., Շտարուդ Տ. 1997, էջ 314: Բախտաձե Հ. 1998, էջ 59: Schaeffer C. 1948, էջ 164-165: Nilsson M. 1950, էջ 53-76: Albright W. 1954, էջ 68: Piggot S. 1965, էջ 61-62, աղ. VI, էջ 97-98, աղ. XI ա, բ, էջ 123, աղ. XV: Andre-Salvini B., Salvini M. 1996, էջ 7-20, նկ. 1-9): Վերջիններս հիմնականում առնչվում են քաղման ծիսական կարգի հետ և, ըստ էության, եվրասիական առասպելաբանական համակարգերից լավ հայտնի (քարայրում փակված հերոսին առնչվող) հնագույն սյուժեի հիմնական քաղադրիչ՝ անդրաշխարհ-քարայրի փաստացի դրսերումն են հանդիսանում: Նույն բովանդակությամբ և նույնքան հին սյուժեներ են պահպանվել նաև հայ առասպելաբանության մեջ (տես՝ Փոքր Սիերի, Արտավազդ-Շիդարի, Շարսյի մասին առասպելները, Հայժ, Բանցրել և այլ քարայրների մասին ավանդությունները) (Հարությունյան Ս. 1987: Ղանալանյան Ա. 1979, էջ 49-78: Կարապետյան Գ. 1990, էջ 54-56): Ուստի բացառված չե, որ վերոհիշյալ առասպելաբանական սյուժեների փաստացի դրսերումները գոյություն ունեցած լինեն Հայկական լեռնաշխարհում նաև մինչվանտոսապյան ժամանակաշրջանում: Մասնավորապես Վաղ Բրոնզի շրջափուլին վերաբերող (Կուր-արաքսյան մշակույթ) նման մի դամբարան պեղվել է Տանձավեր գյուղում (Խնկիկյան Օ. 1993, էջ 128), իսկ Վաղ Երկարի շրջափուլին վերաբերող՝ Գավառում (Կամո-Նոր Բայազետ) (Միքայելյան Գ. 1968, աղ. 15): Առ այսօր դրանց խիստ սակավությունը միգուցե բացատրելի է Հայկական լեռնաշխարհի տարրեր հատվածների (մասնավորապես Բարձր Հայքի, Աղձնիքի և Տավրոսյան լեռների շրջանի) հնագիտական առումով անհավասարաշահ ուսումնասիրվածությամբ: Թեև մեծ վերապահումով, մենք հնարավոր ենք համարում, խնդրո առարկա կառույցների շարքը դասել նաև Հայկական լեռնաշխարհում քացված մի յուրահատուկ հուշարձան, որն իր դամբարանների կառուցման սկզբումքով (մոնուխ քարաշերտի մեջ փորված նեղ մուտք-միջանցք և լայնացող խոռոշ-դամբարանարահ), թերևս կարող է համեմատվել վերոհիշյալ համալիրներին: Խոսքը մ.թ.ա. XV/XIV-XI/IX

A III  
6935



դարերի ժամանակագրական սահմաններում գոյատևած Արքիկի դամբարանադաշտի 640 կատակոմբային թաղումների մասին է (Արեշյան Գ., Ղաֆադարյան Կ. 1996, էջ 69, նկ. Դ: Խաչառյան Տ. 1975: Խաչառյան Տ. 1979):

Ավելացնենք նաև, որ Սևանի ավազանից ոչ հեռու, Հրազդան գետի աջ ափին տեղավորված Դդմաշեն գյուղի մոտակայքում, շինարարական աշխատանքների հետևանքով պատահարար քացված և ավերված քարայր-դամբարանից հայտնաբերված հարուստ հնագիտական նյութերը (ներկայումս պահպան են Սևան քաղաքի «Ազգային պարկի» գրասենյակում) փաստում են, որ նման կառույցներն իրենց գոյությունը Հայաստանում պահպանել են Վանտոսայի թագավորության անկումից հետո էլ (նշված նյութերը վերաբերում են Երվանդունիների թագավորության ժամանակներին և բվագրվում են մ.թ.ա. VI-V դարերով):

Ուստի, թերևս անհիմն չեն Հին Արևելքի քաղաքաշինական գործընթացների և ճարտարապետական ոճերի զարգացման պատմությամբ զբաղվող արևելագետների ենթադրություններն այն մասին, որ իրենց տևական կիրառությամբ և այդօրինակ դամբանաշինական աշխատանքների կատարման լավ մշակված նորմերով, վանտոսայան քարայր-դամբարանները կարևոր դեր կարող են խաղացած լինել Մերձավոր Արևելքում Ասորեստանի և Վանտոսայի թագավորության ռազմաքաղաքական հզորության փաստացի հաջորդը հանդիսացող Աքեմենյան Իրանի մոնումենտալ ժայռավոր դամբարանների (Նախշ-ի Ռուստամ) կառուցողական սկզբունքների ձևավորման, ապա և ավելի ուշ շրջանի իրանական նմանատիպ կառույցների (մասնավորապես Թաք-ի Բոստանի) տևական կիրառության գործում (Տիրացյան Գ. 1964: Սելլոնյան Մ. 1995, էջ 33: Հովհաննիսյան Կ. 1996, էջ 179-180: Փրայ Պ. 1972, էջ 100: Տիրապյան Գ. 1988, էջ 30-31: Fletcher B. 1954, էջ 61-62: Brentjes B. 1974, էջ 32: Kleiss W., Calmeyer P. 1975, էջ 94: Harper P. 1996):

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՏԱԾՈՆԵՐԸ

Գեղիովտի քարայր-դամբարանին պատկանող հնագիտական իրերի ողջ հավաքածուն, ինչպես նշեցինք վերևում, ի մի է բերվել 1980 և 1993 թվականների հավաքական և պեղման աշխատանքների շնորհիվ: Ըստ որում, 1980 թվականին կատարված հավաքական աշխատանքների հետևանքով Հայաստանի Պատմության Պետական թանգարան են մուտք գործել գերազանցապես երկրորդ՝ լիովին ավերված սրահի պարունակությունը կազմող նյութերը: Ներկայումս դրանք պահպում են թանգարանի հնագիտական մետաղի գետեղարանում և գրանցված են ըստ Մայր Մատյանի 14993 և ըստ բաժնի 2695 դասիշը կրող հնագիտական հավաքածուի 1-61 համարների տակ: Նոյն դամբարանային համալիրին պատկանող հնագիտական իրերի մյուս մասը հայտնաբերվել է 1993 թվականին, կառույցի առաջին սրահի (նախասրահի) պեղման աշխատանքների ընթացքում: Այս նյութերը ներկայումս գտնվում են ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական իրերի գետեղարանում:

Գեղիովտի քարայր-դամբարանի ի մի բերված հնագիտական իրերի ողջ հավաքածուն իր մեջ ներառում է սպառագինության, սպասքի, կահույքի առանձին մասերի մնացորդներ, պերճանքի առարկաներ և հնամարդաբանական նյութ:

**ՍՊԱՌԱԳԻՆՈՒԹՅԱՆ ՆՍՐՈՒԵՐԸ:** Քարայր-դամբարանից հայտնաբերված նյութերի մեջ այս խոսմքը մեծաքանակներից մեկն է և ներկայացված է բրոնզե և երկաքե գոտածոներով: Վերջիններս տեղափորված են եղել երկրորդ՝ լիովին ավերված սրահի ներսում:

Առաջին և առավել տեղեկատվական նմուշը՝ հորիզոնական ծողածն վերնամատով (լայնքը՝ 5.4սմ, բարձրությունը՝ 1.5սմ), ուղիղ՝ կենտրոնում ակոսավոր բռնակով (երկարությունը՝ 8.2սմ, լայնքը՝ 2.4սմ) և սրտածն խաչարդով (լայնքը՝ 5.5սմ, բարձրությունը՝ 3.4սմ) երկաքե դաշույնն է (շերքը վատ է պահպանվել): Դաստակի ողջ երկարությունը (վերնամասի վերին եզրից մինչև խաչարդի ստորին եզրը) 12.3սմ է, իսկ շեղի պահպանված մասի երկարությունը՝ 8.1սմ (աղ. 14, նկ. 1): Նման կառուցվածք ունեցող դաշույններն ու սրերը մասնագիտական գրականության մեջ հայտնի են «ակինակ» անվամբ: Նրանք լայն տարածում ունեն Հայկական լեռնաշխարհի (Կարմիր բլուր - Թեյշեբահնի, Կարճաղբյուր, Սուսիերի, Ստեփանակերտ, Գետարակ-Կեդարեկ), Կովկասի (Սամբավրո, Բրիի, Թի, Սոլխումի, Մախարո, Ծիծանորա, Ծոպի, Դվանի, Գուաղիխու, Նիզվիզիանի), Հարավուսական տափաստանների (Սիներալնիե Վոյի, Ստեպոնյ), Ուկրաինայի (Ստարչայա Մոգիլա, Դնեպրոպետրովսկ, Պոլտավա), Սիցին Ասիայի (Ակտյուրինսկ, Պավլոպար, Ույգարակ, Կոկչետավ, Թեղերման-սու), Ուրալի (Նովորենինսկ, Լապասինյան հովիտ, Ախմիլով, Բիկով) և Հեռավոր Արևելքի (Սինուսինսկ) համաժամանակյա հնագիտական հուշարձաններում, ըստ մասնագետների, իրենց վրա կրում են սկյուրական գինագործության առանձնահատկությունները և կարող են տեղափորվել մ.թ.ա. VIII դարի վերջին քառորդից մինչև մ.թ.ա. I հազարամյակի վերջերն ընդգրկող ժամանակագրական սահմաններում (Պոգրեբովա Մ., Եսայան Ա. 1981, էջ 85-96: Գոբեճյան Ա. 1952, աղ. 40: Կալանդաց Ա. 1954, էջ 78, աղ. VIII, նկ. 19: Պիօտրովսկի Բ. 1959 (ա), էջ 175, աղ. 6, նկ. 1: Տրապիշ Մ. 1969, էջ 26, աղ. II, նկ. 12: Մարտիրոսյան Ա. 1974, էջ 172: Բարամիդզե Մ. 1977, աղ. VIII, նկ. 8: Տեխով Բ. 1980, էջ 57-59: Եսայան Ս., Պոգրեբովա Մ. 1985, էջ 40-52: Շլենովա Ն. 1994, էջ 512-515, 533-535, նկ. 14-16):

Սպառագինության հաջորդ նմուշները երկարէ խողովակակորած երկու նիզակներն են (աղ. 14, նկ. 2, 3): Նիզակներից մեկի երկարությունը 27սմ է, իսկ մյուսինը՝ 28սմ: Առաջինը՝ ցցուն կենտրոնական ողով, տերևածև լեզվակ ունի: Երկրորդ նիզակը ևս օժտված է տերևածև լեզվակով, սակայն, ի տարրերություն առաջինի՝ գուրկ է ուռուցիկ կենտրոնական ողից և հատույքում շեղանկյունածև է: Նման նիզակները լավ հայտնի են Հայկական լեռնաշխարհի (Կարմիր Բլուր-Թեյշերահնի, Երևանի «Ավտոագրեգատ» գործարանի դամբարան, Երերուսի, Գյումրի, Խրտանոց, Օշական, Կուրքան, Դերեն, Հոռոմ, Քերի, Լոռի բերդ) և մասնավորապես Սևանի ավագանի (Նորատուս, Արծվաքար, Կարմիրգյուղ, Կարճաղբյուր, Աստղաձոր, Սարուխան) համաժամանակյա հնագիտական համալիրներից և տեղավորվում են մ.թ.ա. XI/IX-VII/VI դարերի ժամանակագրական սահմաններում (Փիլիպոսյան Ա. 1991, էջ 31: Ենգիբարյան Ն. 1991, էջ 66-69: Պուտրովսկի Բ. 1949, աղ. 10, 11: Մարտիրօսյան Ա. 1964, էջ 211, նկ. 83, էջ 272, նկ. 105, էջ 284, նկ. 110, աղ. XXX - XXXII: Եսայն Ս., Բիյգով Լ., Ամայքյան Ս., Կանեցյան Ա. 1991, աղ. X, նկ. 6, 7):

Սպառագինությանն են Վերաբերում նաև Գեղիովտից հայտնաբերված բրոնզե կապարծի բեկորները (աղ. 14, նկ. 4): Դրանցից մեկն, ըստ ամենայնի, կապարծի վերին եզրի մասն է կազմել, ուռուցիկ դրվագված երկու հորիզոնական ողերով բաժանված է առանձին գոտիների և դրանցից վերինի մակերեսին, զագարներով մեկընդմեջ իրար ուղղված փորագիր եռանկյունիների հորիզոնական զույգ շարքեր է կրում: Այս նախշը հանդիպում է նաև Կարմիր Բլուրից պեղված կապարծների վրա և մեծավ մասամբ երիզում է մարտակառք և կառամարտիկներ ներկայացնող փորագիր տեսարանը (Պուտրովսկի Բ. 1959, աղ. 40-41: Մարտիրօսյան Ա. 1961, աղ. 17): Նույն նախշն են կրում նաև Երևանի «Ավտոագրեգատ» գործարանի վանտոսայան դամբարանից հայտնաբերված, ինչպես նաև Ստամբուլի թանգարանում պահպող և Սարդուրի II-ի սեպագիր արձանագրությունը կրող գոտիների բեկորները (Եսայն Ս., Բիյգով Լ., Ամայքյան Ս., Կանեցյան Ա. 1991, աղ. XVIII: Kellner H.-J. 1991, էջ 158-159, նկ. 5):

Գեղիովտի քարայր-դամբարանից հայտնաբերված սպառագինության օրինակների մեջ առավել մեծաքանակը ծիու ասպազենի և մարտակառքի տարրեր մասերի բրոնզե և երկարէ մնացորդներն են: Ասպազենի մեջ առանձնանում են չորս տարրեր սանձերի մասեր հանդիսացող մետաղական մնացորդները: Դրանցից առաջինը երկմետաղյա (բրոնզից և երկարից պատրաստված) սանձի օղակածև եզրերով երկարէ երկմաս երախճանի բեկորներ են, որոնց վրա պահպանվել են մի ծայրին գլանածն, իսկ մյուսին՝ ճանկավոր վերջավորություններ ունեցող աղեղնածև բրոնզե երկու լկամները: Վերջիններս դիմային կողմից օժտված են զույգ միջանցիկ եռանկյունածև կտրվածքներով (աղ. 15, նկ. 3): Նմանատիպ կառուցվածք ունեցող լկամներով ծիասանձերը (առավել ևս դրանց երկմետաղյա օրինակները) եզակի երևույթ են վանտոսայան ասպազենի մեջ: Գեղիովտից հայտնաբերված այս երկմետաղյա սանձի մոտիկ զուգահեռները պատահական գտածոներ են Արևմտյան Հայաստանի տարածքից (գտնվելու կոնկրետ վայրը հայտնի չէ) և ներկայումս պահպում են Սայսնի և Սյունիսնի թանգարաններում (Gropp G. 1981, էջ 106, աղ. II b: Vanden Berghe L., De Meyer L. 1982-1983, էջ 147, նկ. 61: Merhav R., Seidl U. 1991, էջ 83, նկ. 34): Թերևս նոյն սանձերին կարելի է համադրել նաև Լոռի բերդի թիվ 64 դամբարանի երկրորդ խցում հայտնաբերված ճանկավոր լկամներով օրինակները ևս (Արտենի 1996, էջ 126):

Երկրորդ ծիասանձը պահպանվել է միայն կիսով չափ: Այն ևս երկմետաղյա է և օղակածև վերջավորություններով երկարէ երկմաս երախճանի մի հատվածն է հանդիսանում, որի վրա պահպանվել է աստիճանաբար նեղացող ծայրերով բրոնզե աղեղնածև

լկամը: Վերջինս երկաթե երախճանին հագնող կենտրոնական անցքից վեր ու վար, երկու կիսակլոր մերակներ ունի փոկերի ամրացման համար (աղ. 15, նկ. 2): Նման բրոնզե և երկմետաղյա սանձերը լավ հայտնի են Հայկական լեռնաշխարհի (Կարմիր Բլուր, Լոռի բերդ, Դոլանլար, Վանաձոր, Բջնի, Շիրակավան, Մակարաշեն և այլն) մ.թ.ա. VIII-VII դարերի հնագիտական հուշարձաններից և երբեմն իրենց վրա վանտոսացի բազավորների (Մենուա, Սարդուրի) սեպագիր անձնանուններն են կրում (Եսայան Ս. 1994, աղ. 8, նկ. 15, աղ. 11, նկ. 7, 12, 13, 15, 16: Պոտրովսկի Բ. 1955, էջ 45, նկ. 34: Մարտրօսյան Ա. 1964, էջ 212, նկ. 84, աղ. XXI, նկ. 19, 20: Ճեւեծյան Ս. 1981, աղ. 23, նկ. 1: Schaeffer C. 1948, էջ 471, 499, նկ. 252: Տաշյան Օ. 1975, էջ 151-154, աղ. XXXII, նկ. c: Vanden Berghe L., De Meyer L. 1982-1983, էջ 146-147, նկ. 57-59: Merhav R., Seidl U. 1991, էջ 79-81, նկ. 31-33):

Չիասանձի երրորդ օրինակից պահպանվել է միայն լկամներից մեկը (աղ. 15, նկ. 1): Այն վանտոսայան դեկորատիվ արվեստի մի արժեքավոր նմուշ է: Լկամի կենտրոնական տախտակաձև մասը, դիմային կողմից օժտված է երկու ուղղանկյունաձև, միջանցիկ կտրվածքներով, որոնց միջև ընկած տարածության կենտրոնում՝ երախճան հացնելու համար արված, շրջանաձև անցքն է: Ներ կողային մասը երկու հանդիպակաց հատվածներում զարդարված է համաչափ կողմերով վեցանկյան փորագիր գծապատկերներով: Լկամի ծայրերն ավարտվում են կենդանակերպ բարձրարվեստ արձանիկներով: Վերինը՝ կլորավուն խճորակի վրա ամրացված ուղղանկյուն պատվաճանին բառած գիշանգող է, մեջքին ծալած փորագրազարդ թևերով, կեռ կտուցով և գլխին արված ոլորուն փետրազարդով: Լկամի ստորին ծայրին թևավոր ծիու գլուխ է՝ ընդգծված աշքերով և ճակատին համաչափ բավիսած մազափնջով: Կենդանակերպ վերջույթներ ունեցող լկամներով սանձերը, թես ոչ հաճախ, այնուամենայնիվ հանդիպում են վանտոսայան հուշարձաններում: Նման ուշագրավ օրինակ հայտնաբերվել է ճմինի (Ալբոն թեկիե) դամբարաններից մեկում, զարդարված է ծիու արձանիկներով և վերաբերում է մ.թ.ա. VIII-VII դարերին (Եսայան Ս. 1994, էջ 77-78, աղ. 28: Ozgur T. 1961, էջ 272-278, նկ. 17): Թերեւս սանձերի այս տարրերակին պետք է դասել նաև Լոռի բերդի հարուստ դամբարաններից մեկից հայտնաբերված և ծիու արձանիկներով ավարտվող լկամներով օրինակը ևս (Դեջյան Ս. 1991, էջ 38-41):

Հավանաբար ծիասանձի լկամ պետք է որ ծառայած լինի նաև Գեղիութի քարայր-դամբարանի երկրորդ սրահից հայտնաբերված սեղանաձև երկաթաքանքի բեկորը (աղ. 15, նկ. 4): Այդ է վկայում նրա դիմային մասի կենտրոնում բացված անցքը: Նման թիթեղաձև-քանքաձև բրոնզե և երկաթե լկամներով ծիասանձերը բավական տարածված են վանտոսայան ժամանակներին վերաբերող դամբարանային համալիրներում (Լոռի-բերդ, Օշական, Ռեդկին լագեր, Էջմիածին, Աստղաձոր, Գավառ և այլն) և իրենց գուգահեռներն ունեն նույն ժամանակաշրջանի բարձրաքանդակներում (Եսայան Ս. 1994, էջ 40, աղ. 11, նկ. 3-6, 8, 9: Մարտրօսյան Ա. 1964, էջ 225-229, նկ. 87: Պոտրովսկի Բ. 1959, էջ 155, նկ. 22):

Ծիու հանդերձանքի մի մաս է կազմել նաև կիսագնդաձև ուռուցիկ միջնամաս և շուրջբոլորը հավասարաշափ հարթ եզրեր ունեցող, մոտ 7սմ տրամագծով բրոնզե շրջանաձև ճարմանդը, որը ներսից օժտված է երկաթե կամքջաձև մերակով (աղ. 14, նկ. 5): Նրա գուգահեռներից մեկը հայտնի է Երևանի «Ավտովագրեգատ» գործարանի բակում բացված և մ.թ.ա. VIII դարով թվագրվող վանտոսայան դամբարանից, իսկ մյուսները պատահական գտածոներ են, ունեն 7.5 - 9.8սմ տրամագծեր, դարձյալ պատրաստված են բրոնզից և ներկայում պահպում են Երուսաղեմի բանգարանում (Եսայան Ս., Բիյագով Լ., Ամայքյան Ս., Կանեցյան Ա. 1991, աղ. XII, նկ. 9: Merhav R., Seidl U. 1991, էջ 71, նկ. 18, էջ 88, նկ. 45):

Գեղիովակի քարայր-դամբարանի սպառազինության հետ առնչվող գտածոների մեջ հասուկապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում մարտակառքի տարրեր մասեր հանդիսացած բրոնզե առարկաները: Վերջիններիս մեջ առանձնանում են Հայաստանի վանտոսայան հուշարձաններում առաջին անգամ հանդիպող մարտակառքի անհվների անուրածև 5 կապ-ամրակները (աղ. 16, նկ. 1-5): Սըրանք մոտ 0.2սմ հաստությամբ բրոնզե թիթեղից պատրաստված, եզրերում 7.5սմ, իսկ միջնամասում՝ 3.5սմ լայնք ունեցող և մոտ 25սմ երկարությամբ ժապավենածև հարմարանքներ են, որոնք, դատելով Արանայում պահպող բրոնզե գրտիների, Նյու-Յորքի Սետրուպլիտեն թանգարանի (Արգիշթի արքայի անունը կրող) դրվագազարդ թիթեղի և թիթի Բարսիրի ասորեստանյան պալատի որմնանկարների վրա պահպանված պատկերներից, անորի սկզբունքով երկուական կամ չորսական ամրացվել են մարտակառքի յուրաքանչյուր անհիմի վրա, վերջինիս փայտե դողը թափանվի (ճաղաշարն իրար կապող) շրջանակին միացնելու համար (Raggot A. 1961, աղ. 345: Taşyurek O. 1975, աղ. 32: Muscarella O. 1988, էջ 428, նկ. 576: Wartke R.-B. 1993, էջ 78, նկ. 30, էջ 97, նկ. 42): Այդ նպատակով քննարկվող թիթեղյա անուրածև ամրակների եզրերին բացված մեծ, իսկ միջնամասում արկած շատ ավելի փոքր անցքերով, վերջիններս ճաղաշարն իրար կապող շրջանակի վրայով գամվել են փայտե դողի կողային մակերեսին այնպես, որ դրանց լայն եզրերը թափանվի սոնու համեմատ ուղղված լինեն դեպի վար: Ըստ որում, մեծ անցքերի համար նախատեսված զամերն անցնելով փայտե դողի ողջ լայնքով, դուրս են եկել հանդիպակաց կողմից և կրկին մտնելով անուրածև ծալված բրոնզե կապ-ամրակների մյուս եզրին բացված անցքերի մեջ, ծովել են: Այդ են վկայում պատահարար հայտնաբերված և ներկայում Երուսաղեմի թանգարանում պահպող անուրածև 4 կապ-ամրակները (աղ. 17, նկ. 1-4), որոնց վրա պահպանվել են նաև վերը նկարագրված եղանակով հազցված և դրսից ծոված մեծ զամերը (Merhav R., Seidl U. 1991, էջ 59-60, 64-65, նկ. 3 ա, բ): Բրոնզե կապ-ամրակների վրա պահպանված ծալվածքները քոյլ են տախիս մոտավոր ճշտությամբ վերականգնել գեղիովիտյան մարտակառքի թափանվի ճաղերն իրար կապող շրջանակի լայնքը (մոտ 6 սմ), ինչպես նաև փայտե դողի հաստությունը (մոտ 10-12սմ): Ուշագրավ է, որ նման կարևոր դեր կատարելուց զատ, վերոհիշյալ կապ-ամրակներն ունեցել են նաև դեկորատիվ նշանակություն: Այս ենթադրության համար հիմք են ծառայում գեղիովիտյան կապ-ամրակներից մեկի արտաքին մակերեսին հազիվ նշմարվող եռաշար ալիքանախշը և ինչ-որ կենդանակերպ պատկերի (հավանաբար այժ, ցուլ կամ ձի) ստորիմ՝ կճղակավոր վերջույթի դրվագման հետքերը (աղ. 16, նկ. 5):

Մարտակառքի հետ է առնչվում նաև երկաքե կլորավուն ձողի ծայրին ամրացված բրոնզե կիսարձանը (աղ. 18, նկ. 2): Սրա երկաքե ձողի երկարությունը 14սմ է, իսկ լայնքը՝ վերնամասում 1.4սմ և ներքեւում՝ 0.8սմ: Զիու բրոնզե կիսարձանի բարձրությունը, ներառյալ նաև ուղղանկյունածև, միջանցիկ փորվածքով պատվանդանը՝ 6.5սմ է: Այս երկմետաղյա հարմարանքը, հնարավոր է, տեղադրվել է առեղի և լծի միացման հատվածում և իր երկաքե ձողով ավելի ևս ամրացնելով մարտակառքի համար առաջնային նշանակություն ունեցող այդ հանգույցը, թերևս նաև զինանշանի դեր կատարել: Ըստ որում, դատելով ձիու կիսարձանի տակ առկա անցքավոր պատվանդանի կառուցվածքից, վերջինիս միջով հնարավոր է անցել է մոտ 1.0սմ բարձրությամբ և մոտ 0.5սմ հաստությամբ մեկ այլ ձողածև առարկա, որը, հավանաբար, իր վրա է կրել զինանշանի հետ առնչվող այլ մանրամասներ: Զիու նման կիսարձաններ հանդիպում են նաև Թեյշերահի-Կարմիր բլուրի և Շմինի (Ալբոն թեփե) պեղումներից և, ինչպես ենթադրում են ուսումնասիրողները, դարձյալ զարդարել են մարտակառքի առեղի կամ լծի գլխամասը

(Եսայան Ս. 1994, էջ 53, աղ. 16, էջ 56, աղ. 17: Պիոտրովսկի Բ. 1959, էջ 178, նկ. 40: Piotrovskiy B. 1967, նկ. 107: Ozgur T. 1961, էջ 278, նկ. 16):

Բերված զուգահեռները, սակայն, մատնանշում են նաև գեղիովիտյան կիսարձանի և Թեյշեբահնի-Կարմիր բլուրի ու Շմինի օրինակների էական տարբերությունները: Բանն այն է, որ վերջիններս սնամեջ են, անհամեմատ ավելի մեծ չափեր ունեն և զորկ են երկարե ծող-հիմնամասից: Ինչն էլ, չքացառելով գեղիովիտյան կիսարձանի գինանշան լինելու հաճամանքը, ենթադրել է տալիս մարտակառքի վրա նրա ունեցած մեկ այլ նշանակության և կիրառման հնարավոր եղանակի մասին: Այս տեսանկյունից ուշադրության է արժանի այն փաստը, որ վանտոսայան մարտակառքերին առնչվող նյութերում հանդիպում են դարձյալ երկմետաղյա (վերնամասը՝ բրոնզից, ծողը՝ երկարից) առարկաներ, որոնք, ըստ մասնագետների, թափքի անհվները սոնուն ամրացնող պահպանակ (ճուկի, բուլիք) են հանդիսացել (Barnett R. 1954, էջ 11-21, նկ. 5: Gropp G. 1981, էջ 107-123, աղ. II, նկ. d: Belli O., Kavakli E. 1981, էջ 15-27, նկ. 1, 2: Seidl U. 1982, էջ 101-103: Merhav R., Seidl U. 1991, էջ 60-61, նկ. 7, էջ 66-67, լուսանկ. 5-8, 13): Սրանք ուղղահայաց դիրքով այնպես են խրվել սոնու հանդիպակաց վերջավորություններին բացված անցքերի մեջ, որ ընթացքի պահին խոչընդոտեն անիվների դուրս գալուն և միևնույն ժամանակ կանխարգելեն սոնու վրա նրանց անցանկալի տատանումները (լիօֆտ): Կոնածև կամ սնկած բրոնզե գլխիկ, ուղղանկյուն՝ անցքավոր բրոնզե պատվանդան և երկարե քառակող ծող-հիմնամաս ունեցող այս առարկաները չափերով (երկարությունը՝ 15-18սմ) մոտ են գեղիովիտյան քննարկվող գտածոյին (երկարությունը՝ 20սմ), թվագրվում են մ.թ.ա. IX-VII դարերով և, երբեմն, իրենց վրա մ.թ.ա. IX-VIII դարերում Վանտոսայի թագավորությունում իշխած որոշ արքաների (Իշպուհնի, Սարդուրի II) սեպագիր անուններն են կրում (աղ. 18, նկ. 3-9): Միակ անհամապատասխանությունը՝ գեղիովիտյան օրինակի վրա բրոնզե կենդանակերպ վերնամասի առկայությունն է: Սոնու նմանատիպ կառուցվածք ունեցող պահանակներ առաջմն հայտնի չեն Վանտոսայի թագավորության ժամանակներին վերաբերող հուշարձաններից և, եթե քննարկվող առարկան իսկապես նշված՝ նպատակին է ծառայել, ապա վանտոսայան այդօրինակ առաջին գտածոն կարող է համարվել: Այն հաճամանքը, որ ձիու բրոնզե կիսարձան և երկարե ծող-հիմնամաս ունեցող գեղիովիտյան իրն իսկապես կարող էր սոնու պահանակ հանդիսանալ, մեր կարծիքով կարելի է հիմնավորել Սալամիսի (Կիպրոս) թիվ 79 դամբարանից հայտնաբերված մեկ այլ մարտակառքի համապատասխան մասերի առկայության փաստով (Karageorghis V. 1979, էջ 72: Merhav R., Seidl U. 1991, էջ 57, նկ. 5): Այստեղ անհվներն ամրացվել են սոնուն մարդակերպ վերնամասով պահանակների օգնությամբ (աղ. 18, նկ. 4), որոնք իրենց ընդհանուր կառուցվածքով և չափերով մոտ են գեղիովիտյան օրինակին: Եթե այս հիմնավորումը համապատասխանում է իրականությանը, ապա պետք է ենթադրել, որ անմիջականորեն նմանատիպ պահանակների հետ են առնչվել նաև Գեղիովիտի դամբարանից հայտնաբերված, թանթած գլխով և երկարուկ, զանգվածեղ խրոցով երկարե երկու գամերը (աղ. 18, նկ. 10, 11): Սրանք, ամենայն հավանականությամբ, հորիզոնական դիրքով, պահանակների պատվանդաններին բացված անցքերի միջով, կողքից գամկել են սոնուն, նվազեցնելով ընթացքի պահին դրանց վրայից անհվների պոկվելու հնարավորությունը:

Գեղիովիտի մարտակառքի մեկ այլ մաս է հանդիսացել բրոնզե փականած հարմարանքը (աղ. 19, նկ. 3): Մեկ ամբողջական, կլորավուն, զանգվածեղ ծողից արված, շրջանած լայն վերնամասով և ուղիղ, նեղ իրանով՝ այս առարկան՝ թիշ ծեծված, ուղիղ ամկյան տակ ծոված և ետ ծալված զույգ վերջավորություններով, ըստ ամենայնի, ամ-

բացվել է առեղի կառահայաց ծայրին այնպես, որ դուրս ցցված, օդակածն իր գլխամասով հագնի թափքի առջևում այդ նպատակով ամրացված կեռիկին: Առեղի և թափքի նման ազատ համակցումն ավելի դյուրաշարժ է դարձրել մարտակառքը և անհրաժեշտության պահին նպաստել խուսափարումների, շրջանցումների և շրջադարձների արագ կատարմանը: Քննարկվող իրի զուգահեռները հայտնի են Լոռի բերդի բիկ 2 դամբարանի և Նյու-Յորքում պահվող մասնավոր հավաքածուի նյութերում (Դևեճյան C. 1981, էջ 60, աղ. XXIII, նկ. 4: Merhav R., Seidl U. 1991, էջ 68-69, նկ. 15-16): Գեղիովիտյան օրինակի նման, սրանք ևս հայտնաբերվել են ծիու ասպազենի և մարտակառքերի հետ միասին: Քննարկվող իրի առավել վաղ օրինակը (մ.թ.ա. XIX-XVIII դարեր) հայտնի է Բիբլիոսից (Schaeffer C. 1948, էջ 64-65, նկ. 63, H):

Ըստ ամենայնի մարտակառքի առեղին են ամրացվել քարայր-դամբարանի երկրորդ սրահից հայտնաբերված բրոնզե զանգվածեղ, եղջյուրածն առարկաները ևս (աղ. 19, նկ. 1, 2): Սրանք մոտավորապես ուղղանկյունաձև հիմքով և կեռ, սնամեջ իրանով առարկաներ են, որոնց դեպի ցած թեքվող վերնամասների պատերը հիմքի համեմատ ավելի բարակ են ու լայն: Դատելով ասսուրական բարձրաքանդակներին ու որմնանկարներին, վանտոսայան զարդարթեղներին, լանջապանակներին, սաղավարտներին և գոտիներին դրվագված տեսարաններից և Վանի քարակոռողի վրա պահպանված պատկերներից, նման առարկաները հիմնականում ուղղահայաց դիրքով, կողք-կողքի (եղջյուրածն վերնամասները միմյանց նկատմամբ հակադարձ) ամրացվել են մարտակառքի առեղի միջնամասում կամ լծի հանդիպակաց ծայրերին և բաժանարարի դեր են կատարել լծված զույգ ծիերից դեպի կառամարտիկն ու կառավարը եկող երկու զույգ սանձափոկերի համար: Նման երկու կեռ (եղջյուրածն) առարկաներ ներկայումս պահպում են Երուսաղեմի թանգարանում: Ի տարբերություն գեղիովիտյան օրինակների, դրանցից յուրաքանչյուրը պատրաստված է բրոնզե երկու առանձին թիթեղներից և դիմային մասում, հորիզոնական խորադիր գծերով բաժանված գոտիներում, իրար հաջորդող ծաղկաշղթաների փորագիր պատկերներ է կրում (Parrot A. 1961, աղ. 345: Calmeyer P., Seidl U. 1983, էջ 103-114: Haerink E., Overlaet B. 1984, էջ 131, նկ. 21, էջ 164-165, նկ. 97, 98: Merhav R., Seidl U. 1991, էջ 54-55, նկ. 2, 3, էջ 67-84, նկ. a-b, էջ 312-313, նկ. 2): Մասնագետների կարծիքով այս իրերը վերաբերում են մ.թ.ա. VII դարին (Merhav R., Seidl U. 1991, էջ 68):

Ինքն առեղը պատրաստվել է երկար և ամուր, հատույթում հավանաբար կիսակլոր տեսք ունեցող, միակտոր փայտից, որը թափքի մոտ ունեցել է ավելի լայն տրամագիծ, քան լծին միացման հատվածում: Այդ են վկայում Գեղիովիտի դամբարանից հայտնաբերված, հատույթում կիսաշրջանի տեսք ունեցող 1 լայն և 1 համեմատաբար նեղ, սնամեջ բրոնզե հարմարանքները (աղ. 19, նկ. 4, 5), որոնցից լայնը, ամենայն հավանականությամբ գրկել և ավելի ամուր է դարձրել առեղի՝ թափքին կցվող ծայրը, իսկ նեղը՝ եզրափակել է առեղի՝ լծին միացնող հատվածը և պաշտպանել այն արագ մաշվելուց:

Մարտակառքի հետ առնչվող գեղիովիտյան բոլոր գտածոների ու դրանց համապատասխան զուգահեռների ուսումնասիրությունը բույլ է տալիս եզրակացնել, որ թաղման երկրորդ սրահում տեղադրված է եղել մեկ զույգ ծիերով լծվող երկանիկ մարտակառք: Այն իր տեսքով ու պատրաստման մանրամասներով հիմնականում կրկնել է վանտոսայան և ասսուրական որմնանկարներից, բարձրաքանդակներից և դրվագազարդայլ տեսարաններից հայտնի մարտակառքերի ընդհանուր ձևերը (աղ. 20, աղ. 1-8):

**ԿԱՀՈՒՅԹԻ ՍԱՍԵՐ:** Գեղիովտի քարայր-դամբարանից հայտնաբերված գտածների երկրորդ խումբը կազմում են կահույքի տարրեր հատվածների մաս կազմող բրոնզե երեսապատումների, զարդարանքների ու ծայրապանների մնացորդները:

Ամենամեծաքանակը (7 օրինակ) կճղակավոր կենդանու (թերևս ցուլի) ոտքի տեսք ունեցող բրոնզե միաձույլ, սնամեջ, զանգվածեղ առարկաներն են: Պատրաստվել են կաղապարի մեջ ծովածան եղանակով: Մրանք, ինչպես երևում է ասսուրական և վանտոսայան բարձրաքանդակների, գոտիների, զարդարիթեղների վրա արված դրվագումներից և կնիքների փորագրություններից, որպես ոտնակներ հազցվել են փայտե կահույքի (սեղան, աթոռ, բազմոց, զահավորակ, պատգարակ, եռոտանի, աշտանակ և այլն) ոտնափայտսկն՝ ամրություն, գեղագիտական ուրույն տեսք և, թերևս, ծիսապաշտամունքային որոշակի իմաստ հաղորդելով դրանց: Վերջին ենթադրությունը կարելի է հիմնավորել Միջագետքի մ.թ.ա. III հազարամյակի շումերա-աքադական որոշ կնիքների փորագիր հորինվածքներում առկա ծիսական տեսարանների կոնկրետ մանրամասներով: Դրւսնցում արարողության համար առանձնացված սեղանը կամ նմանատիպ հարմարանքը տեղափորված է կճղակավոր վերջույթներով խոշոր եղջերավոր անասունի (հիմնականում՝ ցլի) մեջքին: Կարելի է ենթադրել, որ արարողության ժամանակ ցլի մեջքին տեղադրվող զոհասեղանի հնագույն սովորությն աստիճանաբար վերափոխվելով՝ իր իմաստային վերարտացոլումն է գտել կճղակածն ոտնակներով՝ օժտված կահույքի համապատասխան դրսերուումների մեջ:

Կահույքի ոտքերի պահպանված 7 ծայրապաններից 3-ը հատույթում շրջանածն են (աղ. 21, նկ. 1-3), իսկ 4-ը՝ ուղղանկյունածն (աղ. 22, նկ. 1-4): Հաշվի առնելով վերը թվարկված դեկորատիվ արվեստի հուշարձանների տվյալները, ինչպես նաև նկատի ունենալով Բ. Պիտորովսկու, Բ. Հրուդայի, Թ. Օզյուչի, Է. Ակուրգալի, Լ. Վան դեն Բերգեի, Լ. Դե Մեյերի և Ռ. Մերհավի կողմից վաճառսայան կահույքի որոշ տեսակների վերականգնման ու հավաքման փորձերը (աղ. 23, նկ. 1-9), կարելի է ենթադրել, որ վերնամասի շրջանածն հատույթով բրոնզե 3 ծայրապանները հազցվել են եռոտանու (պատվանդան կամ սեղան) ոտնափայտին: Նման տեսք ունեցող պատվանդաններ ու սեղաններ հանդիպում են Տոկիոյի Հին Արևելքի թանգարանում պահպող վաճառսայան բրոնզե գոտու և Սոթբիսի աճուրդի հատկանշական ցուցակում հրատարակված բրոնզե շրջանածն առարկայի (հավանաբար հայելի է) վրա փորագրված տեսարաններում, ինչպես նաև Ճմինի (Ալբրն թեփե) և Արծկեի (Ալիլզեազ) դամբարաններից պեղված նյութերում (Miyashita S. 1983, էջ 299-300, աղ. 1; Işık C. 1986, էջ 413-445, նկ. 7, 8: Merhav R. 1991a, էջ 252-253, նկ. 5/1):

Ինչ վերաբերում է վերնամասում ուղղանկյունածն հատույթով, սնամեջ, զանգվածեղ, կճղակավոր կենդանու ոտքի ձև ունեցող մյուս ծայրապաններին, ապա վաճառսայան և ասսուրական բարձրաքանդակներում ու դեկորատիվ արվեստի գործերում հանդիպող տեսարանների համաձայն, դրանք հիմնականում հազցվել են չորս ոտք ունեցող աթոռների, բազմոցների, զահավորակների ու սեղանների ոտնափայտերին: Ըստ որում ոչ բոլոր դեպքերում է, երբ կահույքի չորս ոտքերն էլ ունեցել են նույնատիպ կճղակածն բրոնզե ծայրապաններ: Պահպանված փորագիր և քանդակազարդ տեսարանները ցուցանում են, որ նման ծայրապաններ կարող էին կրել նաև քննարկվող կահույքի չորս ոտքերից միայն ետևի երկուսը, իսկ առջևի երկու ոտքերին հազցված են հատած կոնի տեսք ունեցող, զանգվածեղ, սնամեջ, մի կողմից փակ, բրոնզե ծայրապաններ: Նմանատիպ հիմք առարկաներ հայտնաբերվել են նաև Գեղիովտի քարայր-դամբարանից (աղ. 24, նկ. 4-8):

Կահույքի քննարկվող տեսակները ուժի, նստատեղի, թիկնակի և շրիշակի հատվածում հաճախ օժտված են եղել նաև խորանարդածև և կոճած սնամեջ հարմարանքներով: Նման առարկաներ ի հայտ են եկել Վանի (Թոփրաք կալե), Թեյշերախնի (Կարմիր բլուր), ճմինի (Ալբոն թեփե), Կայալի դերեի և Երևանի մերձակայքի (Նորագավիթ և Խարբերդ արվարձաններ) հնագիտական համայնքներից: Մի խումբ պատահական գտածոներ էլ, որ Արևմտյան Հայաստանի հնավայրերից են (առույգ տեղը հայտնի չէ՝ վաճառվել են Արևմուտքի քանգարաններին (Փիլիպոսյան Ա. 1987, էջ 35-37: Պոտրովսկի Բ. 1970, նկ. 72, 77: Barnett R. 1950, էջ 26-31, 40-43, աղ. 2-7, 11, 18-21: Barnett R. 1954, էջ 11-21, աղ. III: Hrouda B. 1965, աղ. 13, 16: Burney C. 1966, էջ 98-99, աղ. 21-23: Akurgal E. 1968, էջ 37-38, 47-48, նկ. 55: Ozgur T. 1969, էջ 65-72, աղ. XIX-XXIV : Barnett R. 1972, էջ 171-175: Vanden Berghe L., De Meyer L. 1982-1983, էջ 102, 181-186, նկ. 129-137: Merhav R. 1991a, էջ 246-261; լուսանկ. 1-8): Կահույքի մաս կազմող խորանարդածև և կոճած բրոնզե սնամեջ առարկաներ հայտնաբերվել են նաև Գեղիովտի քարայր-դամբարանում: Խորանարդած կառուցվածք ունեցողները հինգն են: Դրանցից երկուսը (աղ. 24, նկ. 1, 2) փակ են մի կողմից, ոչ մեծ, քառանիստ տուփիկներ են հիշեցնում և, հնարավոր է, հազցվել են քառակող կառուցվածք ունեցող ոտքերով կահույքի ստորին հատվածներին կամ էլ ամրացվել արողի, քազմոցի ու զահավորակի արմնակալների եզրերին: Ինչ վերաբերում է խորանարդած կառուցվածք ունեցող գեղիովիտյան մյուս երեք առարկաներին, ապա վերջիններիս երկու հանդիպակաց եզրերն էլ բաց են, իսկ կողքային նիստերի վրա, դրանցից երկուսի մոտ առկա են ուղղանկյունածև և քառակոսած կտրվածքներ (աղ. 25, նկ. 1-3): Սրանք պատրաստվել են բրոնզե զանգվածեղ հարք թիթեղը քառանիստ առարկայի ձևով ծոելու և իրար վրա եկող եզրերը դուրգամելու եղանակով: Դատերով դարձյալ վանտոսայան և ասսուրական դեկորատիվ և կիրառական արվեստի նմուշների վրա պահպանված կահույքի տարբեր տեսակների պատկերներից, վերջիններս երեսպատել են կահույքի նստատեղի և թիկնակի փայտե ուղղահայաց և հորիզոնական հիմնամասերը՝ ամրություն ու դիմացկունություն հաղորդելով դրանց (աղ. 23, նկ. 3): Հնարավոր է, որ բրոնզե այս առարկաների նիստերին արված ուղղանկյունածև և քառակոսած կտրվածքների մեջ ագուցվել են թանկարժեք քարերից, փղոսկրից, գունավոր մածուկից և այլ նյութերից պատրաստված ներդիրներ:

Գեղիովտից հայտնաբերված կոճած առարկաները հինգն են (աղ. 26, նկ. 3-7): Դրանք միջնամասում նեղ, վերին և ստորին եզրերին շեփորած քացվող իրան և տարբեր տրամագծեր (4.7-6.5սմ) ունեցող, սնամեջ հարմարանքներ են, որ հաջորդաբար հազցվել են արողների, զահավորակների, պատգարակների և կահույքի նմանատիպ այլ նմուշների փայտե ուղքերի միջնամասում՝ տեսք ու ամրություն հաղորդելով վերջիններիս:

Գահավորակների, արողների, քազմոցների ու աշտանակների մասեր են նաև Գեղիովտից քարայր-դամբարանից հայտնաբերված՝ քառանիստ ու զլանած սնամեջ իրանով, հորիզոնական ծալված ուղղանկյուն վերնամասով և վերջինիս վրա քացված անցքերի մեջ խրված զամերով բրոնզե վեց առարկաները: Քառանիստ իրան ունեցողները երկուսն են (աղ. 27, նկ. 1, 2): Սրանց իրանների հանդիպակաց երկու նիստերի ներքևում առկա են անցքեր կահույքի ուղքերին ամրացնելու համար, իսկ հորիզոնական ուղղանկյունածև վերնամասին քացված չորսական անցքերի մեջ պահպանված զամերը վկայում են, որ խրվել են նստատեղի՝ 4-5սմ հաստություն ունեցող, փայտե հորիզոնական հիմնամողերի մեջ: Այսինքն՝ քննարկվող առարկաները զահավորակի կամ արողի նըստատեղը ուղքերին կապող բրոնզե հարմարանքներ են հանդիսացել:

Նոյն նպատակին ծառայած հաջորդ երկու հարմարանքներն ամբողջությամբ գրեթե կրկնում են վերը նկարագրված օրինակների մանրամասները, միայն քառանիստի փոխարեն ունեն գլանաձև իրան (աղ. 27, նկ. 3, 4): Բացի այդ սրանց գամերի բարձրությունը 3.5-4.0սմ է, ինչն էլ վկայում է, որ առաջին գահավորակի համեմատ վերջինս ունեցել է քիչ ավելի փոքր չափեր:

Սուպել ուշագրավ են արտաքինից այս վերջին երկու հարմարանքներին նման, սակայն անկասկած կիրառական այլ նշանակություն ունեցած հաջորդ երկու գտածոները (աղ. 28, նկ. 1, 2): Սրանք ևս բրոնզե սնամեջ առարկաներ են: Դրանցից մեկի գլանաձև իրանի մեջ հազցված է բրոնզե խողովակ: Ըստ որում պահպանվել է նաև բրոնզե այդ խողովակի մոտ 25.2սմ երկարություն ունեցող հատվածը: Դատելով այս հարմարանքի հորիզոնական, ուղղանկյունաձև վերնամասին պահպանված երեք գամերի չափերից, կարելի է ասել, որ վերջիններս խրվել են մոտ 3-4սմ բարձրություն ունեցող փայտե հորիզոնական վերնամասի մեջ: Սա ենթադրել է տալիս, որ քննարկվող իրը, թերևս, բարձր ուժքով աշտանակի (կամ գուցե պատվանդանի) մաս է հանդիսացել:

Երկրորդ օրինակի գլանաձև իրանի մեջ խրված է զանգվածեղ երկարե ծողի մնացորդ: Սրա հորիզոնական, ուղղանկյունաձև վերնամասը ևս անցքեր ունի գամերի համար (գամերը չեն պահպանվել): Ինչպես նախորդ օրինակը, կարելի է ենթադրել, որ այս հարմարանքը ևս աշտանակի վերնամաս է հանդիսացել, այն տարրերությամբ միայն, որ եթե առաջինն ամբողջապես բրոնզից է, ապա այս օրինակը երկմետաղյա (բրոնզե վերնամաս, երկարե ուժք): Հնարավոր է, որ դրանք նմանվել են վանտոսայան հուշարձաններից հայտնի բարձր ուժք ունեցող աշտանակներին (Պիոտրովսկի Բ. 1950, էջ 69-70, նկ. 42: Պիոտրովսկի Բ. 1959, էջ 174, նկ. 35: Burney C. 1966, էջ 72, 75-77, նկ. 8, 9, աղ. IХа, X: Ozgur T. 1969, նկ. 43: Vanden Berghe L., De Meyer L. 1982-1983, էջ 106, նկ. 48: Merhav R. 1991 ա, էջ 262-271) (աղ. 28, նկ. 3-5):

Գեղինվտի քարայր-դամբարանում տեղավորված գահավորակների և աքոռների արտաքին ձևավորման մանրամասներ են եղել նաև դեպի վար ծոված թերթիկներով ծավալային վարդակները (աղ. 26, նկ. 1, 2) ու ուղիենք պարուրածն զույգ նախշեր կրող, քառանիստ, սնամեջ, երկու հանդիպակաց կողմերից բաց հարմարանքները (աղ. 25, նկ. 4, 5): Դրանցից առաջինները գրադեցրել են զահավորակների փայտե ուժքերին հազցված կոճածն և հատած կոնի տեսք ունեցող երեսպատումների ու ծայրապանների միջև ընկած տարածությունը կամ զարդարել են ուժքի և նստատեղի միացման հանգույցը, իսկ երկրորդները՝ տեղադրվել են բազմոցների և զահավորակների հանդիպակաց ուժքերի միջնամասերն իրար կապող փայտե հորիզոնական շրիշակների կենտրոնում: Համապատասխան կահույքի արտաքին հարդարանքի նման մասեր պեղվել են նաև թեյշերախնի (Կարմիր բլուր) սենյակներից մեկում, ճմինի (Ալբրն թեփին) և Կայալի դերեի դամբարաններում, իսկ պատահարաք հայտնաբերված օրինակները պահպում են երուսաղեմի թանգարանում (Ozgur T. 1961, էջ 283, նկ. 8: Burney C. 1966, աղ. 21, նկ. 5, աղ. 23, նկ. 1, 2: Merhav R. 1991 ա, էջ 260-261):

Հնարավոր է, որ բազմոցի կամ զահավորակի մաս է կազմել նաև ծագարածն, սնամեջ իրանով, վերին՝ լայն կողմից հարք թիթեղով փակված առարկան (աղ. 24, նկ. 3): Նրա զուգահեռները վանտոսայան հուշարձաններից մեզ հայտնի չեն: Բացառված չեն, որ նման հարմարանքները զարդարել են բազմոցների և զահավորակների թիկնակները ուղղահայաց հիմնածողերի վերին եզրերը կամ արմնեկալաների գլխամասերը: Նման ենթադրության համար իիմք են տալիս Վանից հայտնաբերված արծաթե կրծքազարդերի և Նյու-Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում պահպող վանտոսայան արծաթե (ոսկեզօծ)

մեղալիոնի վրա արված պատկերները (Meyer G. 1955, էջ 210: Kellner H.-J., Merhav R., Kohlmeyer K., Zahlaas G. 1991, էջ 166-167, նկ. 3: Merhav R. 1991, էջ 247a, նկ. 1-4):

Բերված բոլոր զուգահեռները վկայում են, որ Գեղիովտի քարայր-դամբարանում տեղադրված կահույքի նմուշները, ընդհանուր առնամբ, կրել են վաճտոսայցան և աստորական քարձրաքանդակների և դեկորատիվ կիրառական արվեստի նմուշների վրա արված վտրագրություններից հայտնի կահույքի դասական օրինակների ձևերը (աղ. 29, նկ. 1-9) (Փիլիպոսյան Ա., Խաչատրյան Լ. 1995, էջ 82-83, 92-96, աղ. 6-10: Kee D. 1981, էջ 27-31: Barnett R. 1950, էջ 26-31, 40-43, աղ. 2-7, 11, 18-21: Hroudová B. աղ. 13, նկ. 5, աղ. 16: Akurgal E. 1968, նկ. 55: Özgür T. 1969, էջ 65-72, աղ. XIX: Kyrieleis H. 1969, նկ. 3, 4: Barnett R. 1972, էջ 171-175: Born H. 1984, էջ 51-56: Խոչ Ս. 1986, էջ 413-445, նկ. 1, 7, 8: Merhav R. 1991a, էջ 246-261):

Պահպանված նյութը հնարավորություն է ընձեռում առանձնացնել և գծապատկերների տեսքով վերականգնել Գեղիովտի քարայր-դամբարանում տեղադրված երկու գահավորակ-արող, մեկ եռոտանի սեղան, մեկ պատզարակ և երկու աշտանակ:

**ՍՊԱՍ.Օ:** Գեղիովտի քարայր-դամբարանից հայտնաբերված հնագիտական նյութերի մեջ առանձին խումբ է կազմում սպասը: Այն բաղկացած է վեց կավանոքների և բրոնզե մեկ սափորի բեկորներից: Գեղիովտի երկսրահ դամբարանի գտածոների մեջ սա արտեֆակտների միակ խումբն է, որի մնացորդները հայտնաբերվել են ինչպես հիմնովին քարութանդ արված երկրորդ սրահի ավերակներում (1980 թվականին), այնպես էլ ամբողջապես պահպանված առաջին սրահի 1993 թվականի պեղումների ընթացքում: Ըստ որում, վերջինից հայտնաբերված կավանոքների բեկորային վիճակն ու մասնակի պահպանվածությունը բացատրվում է նրանով, որ մեր դարասկզբին քարայրը կացարանի վերածած բնակիչները, կասկած իսկ չունենալով այդ խոռոչում դարեր առաջ կատարված քաղման մասին, հատակը հարթեցնելիս, վերևից մասամբ վնասել են մշակութային շերտը և անտեղյակության հետևանքով կոտրատել, խառնել հնագիտական նյութն ու դուրս թափել բեկորների մի մասը:

Առաջին սրահից հայտնաբերված բեկորները պատկանում են երեք առանձին կավանոքների: Սրանց մնացորդները հիմնականում կուտակված էին սրահի հյուսիսային կեսում: Քավանոքներից առաջինը՝ հարք հատակով, երկարածիգ փքված իրանով, վերադիր և խորադիր նախշագոտիներից զուրկ կարաս է, որի վիզն ու շուրջը չեն պահպանվել (աղ. 30, նկ. 5): Կարասն ունի բաց դարչնա-աղյուսագույն, փայլեցրած մակերես, որի վրա տեղադրել նշանաբույս են աղյուսագույն ներկով (կամ անգորով) արված և ուղղածից դեպի հատակամասն իջնող, գծերի հետքեր: Ներսի մակերեսը դեղնա-աղյուսագույն է և զուրկ է փայլից: Խեցու միջուկը սև է: Հատերով պահպանված մասի չափերից (քարձրությունը մոտ 55սմ է) կարասն ամբողջական վիճակում ունեցել է 75-80սմ քարձրություն: Այս կարասները, ըստ Հ. Ավետիսյանի դասակարգման, վերաբերում են քննարկվող կավանոքների երկրորդ միջին քարձրություն ունեցող (70-150սմ) խմբին (Ավետիսյան Գ. 1992, էջ 12-13): Հայտնաբերվել են Հայկական լեռնաշխարհի և հարակից շրջանների (Արգիշտիհովիլի, Թեյշերամինի, Արագած, Բաստամ, Վերահրամ, Էվոլլո, Ուշնուվին, Ազրար թեփե, Կայալի դերեւ և այլն) մ.թ.ա. VIII-VII դարերով թվագրվող վաճտոսայցան հուշարձաններից (Մարտիրօսյան Ա. 1974, էջ 55: Kroll S. 1976, էջ 131) (աղ. 31, նկ. 1-3):

Երկրորդ կավանոքի բեկորը՝ փքված իրանով, գլանաձև կարծ վզով և դուրս թեքվող շուրջով կճումի վերնամասի մնացորդն է (աղ. 30, նկ. 2): Հատակն ու հատակամերձ հատվածը չեն պահպանվել: Բեկորը դրսից և ներսից ունի բաց շագանակագույն, փայ-

լեցրած մակերես և զուրկ է որևէ նախշազարդումից: Խեցու միջուկը սև է: Ամբողջական վիճակում թերևս ունեցել է 30-40սմ բարձրություն: Կավանոթների այս տեսակը, ինչպես իր կառուցվածքային առանձնահատկություններով, այնպես էլ հարդարման ու երանգավորման մանրամասներով, լավ հայտնի է Հայկական լեռնաշխարհի և հարակից շրջանների (Բաստամ, Սանգալ, Վերահրամ, Կալե օղլու, Լիվար, Էվողլու, Չերազա-և Ամիր, Սեքինդել, Զենդան, Ալճիկելլե, Բոստանկայա, Դելի չայ, Կայալի դերե, Թոփրաք Կալե, Թեփի Կասյան, Աշաղի Ջուրու և այլն) վանտոսայան հուշարձաններից և տեղապորվում է մ.թ.ա. VIII-VII դարերի ժամանակագրական սահմաններում (Kroll S. 1976, էջ 27, աղ. 4, նկ. 3, 4, էջ 31; աղ. 6, նկ. 19, էջ 45, աղ. 14, նկ. 25, էջ 66, աղ. 24, նկ. 7, էջ 133):

Երրորդ կավանոթի բեկորը՝ կոպիտ ու հաստ պատերով, գրեթե զլանածն իրանով և հազիվ դուրս ճկվող ու սրացող շուրբով անորի վերնամասի մնացորդ է: Հատակը և հատակամերձ հատվածը չեն պահպանվել (աղ. 30, նկ. 6): Այն դրսից և ներսից ունի բաց դարչնագույն, անփայլ մակերես և շուրբի վերածվող վերնամասի հատվածում հազիվ նկատվում են հորիզոնական գծանախաշեր: Խեցու միջուկը սև է: Ի տարրերություն վերը նկարագրված երկու կավանոթների, այս օրինակի զուգահեռները հազվադեպ են վանտոսայան հուշարձաններում:

Ձևով դրան թերևս կարելի է համարել Թեյշերախինից պեղված, բայց անհամեմատ փոքր չափեր ունեցող երկու անորները (Աւետիսյան Գ. 1992, էջ 154, աղ. I - VII, նկ. 1, 4, աղ. 31, նկ. 4, 5), ինչպես նաև Իրանական սարահարքի հյուսիս-արևմտյան հատվածից (Չերազա-և Ամիր, Լիվար, Էվողլու, Կըզկալե) հայտնաբերված և իրանի նման ուրվագիծ ունեցող անորների համապատասխան բեկորները (Kroll S. 1976, էջ 56, աղ. 19, նկ. 10, էջ 66-67, աղ. 24, նկ. 16, էջ 70, աղ. 26, նկ. 19, 20):

Երկրորդ՝ ավերված սրահի փլատակներից հայտնաբերված բեկորները ևս պատկանում են երեք կավանոթների: Դրանցից առաջինը՝ գորշ-դարչնավուն, փայլեցրած մակերեսով, մի կանքանի սափորի իրանի թեկոր է, վրան կանքի հիմքի մնացորդով: Բեկորի ներսի մակերեսը նույնական դարչնավուն է (աղ. 30, նկ. 4): Խեցու միջուկը սև է: Կանքի պահպանված մասի վրա արված են տարողության չափը մատնանշող, չորս խորադիր, կիսագնդածն փորվածքներ: Դրանցից առաջին երկուսը՝ կանքի նկատմամբ հորիզոնական, իսկ հաջորդ երկուսն՝ ուղղահայաց դիրք ունեն: Տարողության նշաններ կրող նման մի կանքանի սափորները լավ հայտնի են վանտոսայան հուշարձաններից (Երերունի - Արին թերդ, Արգիշթիխինիլի, Թեյշերախինի, Բաստամ, Լիվար, Հայկաբերդ-Չափուշ թեփե, Սարուխան, Հոռոմ) և թվագրվում են մ.թ.ա. VIII-VII դարերով (Մովսիսյան Ա. 1998, աղ. VI -VIII, աղ. XXVI, նկ. 272-276: Պիոտրովսկի Բ. 1952, աղ. 23: Մարտirosյան Ա. 1974, էջ 120, նկ. 75, էջ 128, նկ. 80, էջ 130, նկ. 81: Վայման Ա. 1978, էջ 101: Խօճաշ Ը. 1981, էջ 88-89, աղ. VI: Piotrovsky B. 1969, նկ. 50: Von Schuler E. 1972, էջ 125 - 134: Kroll S. 1976, էջ 64-68: Dinçol A. 1978, էջ 110-111: Badalyan R., Kohl P., Kroll S. 1997, էջ 220, նկ. 26):

Երկրորդ անորից պահպանվել է միայն շրբի բեկորը (աղ. 30, նկ. 3): Այն կարմիր, անգորապատ մակերես ունի: Խեցու միջուկը դեղնա-աղյուսագույն է: Բեկորի ստորին մասում նկատվող բույլ ներճկումը հնարավորություն է տալիս ենթադրել, որ ամբողջական վիճակում այն նմանվել է վանտոսայան հուշարձաններից (Թոփրաք կալե, Էրերունի, Թեյշերախինի, Օշական, Արծկե-Աղիջևազ, Շմին-Ալթըն թեփե, Բոստանկայա, Այանիս, Նորշուն թեփե, Խոյ, Էվողլու, Խարար Աղըլ, Խեզերլի, Թուրքի թեփե, Սանգար, Բորջի կալե, Կուխս-և Չամրիլ, Թեփի Լըմբատ, Սունար, Բաստամ, Աշաղի Ջուրու, Ուզուր թեփե, Լիվար, Սեքինդել, Կալե Վագիրի, Փիր Չափուշ, Ռոզայե, Հասանլու,

Զիվիյե, Խուրվին, Թեփե Կասյան, Թեփե Հալաքու, Հաֆթվան թեփե, Ազրար թեփե, Սուշասիր, Նուշ-ի ջամ և այլն) լավ հայտնի և մ.թ.ա. VIII-VII դարերի ժամանակագրական սահմանների մեջ ներառվող, հարք հատակով, փրփած իրանով, նեղ վզով և շեփորած բացվող շուրբով, մի կանքանի, բալագույն կամ կարմիր փայլեցրած սափորներին (Լոսева Н. 1958, աղ. 7, նկ. 3, աղ. 10, նկ. 3: Lehmann - Haupt C. 1931, էջ 563-564: Barnett R. 1963, նկ. 20/2: Dyson R. 1965, նկ. 13: Cuyler Young T. 1965, նկ. 10: Ögun B. 1967, էջ 17: Emre K. 1969, աղ. III, նկ. 1, 17: Kleiss W. 1971, էջ 21, նկ. 23: Hauptmann H. 1971, էջ 22, նկ. 10: Kroll S. 1976, էջ 123) (աղ. 31, նկ. 8-10):

Երրորդ անորդ՝ հարք հատակով, փրփած իրանով, կարճ վզով, շեփորած բացվող շուրբով, մի կանքանի, ծեռածեփ, ամրողական, մուգ դարչնագույն, մրապատ զավ է, որի նմանները դարձյալ լավ հայտնի են վանտոսայան հուշարձաններից (Պուտրով-սկий Б. 1970, թիվ 120):

Սուանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նույն սրահի փլատակներում հայտնաբերված մետաղի անորի վերնամասը (աղ. 30, նկ. 7): Այն ճագարած կառուցվածք ունի, պատրաստված է բրոնզի բավական հաստ թիթեղից և ամենայն հավանականությամբ, բրոնզե սափորի երկարածիզ, փրփած իրանի վերին շարունակությունն է կազմել: Նման սափորները հաճախ օժտված են լինում նաև շուրբից դեպի իրանի ուռուցիկ մասն իջնող, տափակ, բայց զանգվածեղ կանքով: Բարեբախտաբար պահպանվել է սափորի շուրբին փորագրված հիերոգլիֆային նշանը: Այն ներկայացված է՝ լայն բացված մատներով զույգ ծեռքերի դաստակների, դրանց վերնամասում տեղադրված ծվածիր շրջագծի և վերջինիս միջնամասում վերից վար իջնող զույգ զուգահեռ գծերի փորագիր պատկերով: Բրոնզից, արծաթից և երկարից պատրաստված սափորները վանտոսայան հուշարձաններում հանդիպում են ոչ հաճախ: Առ այսօր հայտնի բոլոր օրինակների թիվը չի անցնում մեկ տասնյակից: Նման սափորներ (կամ դրանց մնացողմները) հայտնաբերվել են Վանից (Թոփրաք կալե), Թեյշերախնիից, Ռզզայեից, Նուշ-ի Չանից, Երևանի «Ավտոազրեգատ» գործարանի դամբարանից: Արևմտյան Հայաստանից գտնված մի քանի պատահական նմուշներ ել ներկայում պահպում են Մայնցի և Սյունիենի թանգարաններում (Եսայան Ս., Քիյագով Լ., Հմայալյան Ա., Կանեցյան Ա. 1995, էջ 73, աղ. XI, նկ. 13, 14: Պուտրովսկի Բ. 1955, էջ 13, նկ. 13: Պուտրովսկի Բ. 1962, էջ 88: Եսայան Ս., Բյայգով Լ., Ամայքյան Ս., Կանեցյան Ա. 1991, աղ. XVI, նկ. 13, 14: Ավետիսյան Գ. 1992, էջ 54-56, 116, աղ. XX, նկ. 1-6: Lehmann-Haupt C. 1907, նկ. 8, նկ. 85: Piotrovsky B. 1970, նկ. 71-73: Kroll S. 1970, էջ 186: Vanden Berghe L., De Meyer L. 1982-1983, նկ. 170-173: Kellner H.-J. 1979, էջ 152, նկ. 2: Merhav R. 1991, էջ 204, 212, նկ. 13, էջ 217, նկ. 18): Գեղիովիտյան գտածոյին առավել մոտ է Թեյշերախնիից հայտնաբերված մի կանքանի արծաթե սափորը: Բանն այն է, որ վերջինս շուրբից քիչ ցած դարձյալ փորագիր հիերոգլիֆ նշաններ է կրում: Ըստ որում երեք առանձին նշանագրերից կազմված այդ փորագրությունը գրեթե նույնությամբ կրկնվում է Թեյշերախնիից հայտնաբերված մի քրեղանի վրա ևս (Մովսիսյան Ա. 1998, աղ. XXV, նկ. 178, 180: Պուտրովսկի Բ. 1955, էջ 10, 19: Piotrovsky B. 1970, նկ. 71-73): Սասնագետների կարծիքով և քրեղանը, և արծաթե սափորը վերաբերում են մ.թ.ա. VII դարին, ինչն էլ թույլ է տալիս մոտավորապես նույն ժամանակաշրջանին վերագրել նաև Գեղիովիտյան հայտնաբերված օրինակը: Բաց է մնում միայն Գեղիովիտի բրոնզե սափորի վրա արված հիերոգլիֆ նշանի իմաստային ծանրաբեռնվածության հարցը: Ինքը՝ նշանը, մոտավոր զուգահեռներ ունի ավելի վաղ շրջանի ինչպես Եգիպտական, այնպես էլ խեթական պատկերներում ու նշանագրերում: Եգիպտական որմնանկարներում վեր պարզած ափերի մեջ արևի ծվածն սկավառակն է պահում օդի Ծու աստվածությին (Рубинштейн Р. 1992,

էջ 267): Մի այլ տեսարանում ծվածես սկավառակը Օսիրիսի խորհրդանշիշը հանդիսացող և «զեղ» պատվանդանի միջից ենող «անկխ» նշանի ձեռքերում է (Рубиншտեйն Р. 1992а, էջ 213-214): Պատկեր, որ ըստ էության նույնացվում է ծագող արևի գաղափարի հետ: Եզիստական որմնանկարչության մեջ նման պատկերում ունի նաև Արքն աստվածը՝ արևի կենդանի սկավառակը: Այն ներկայացվում է արևից սկիզբ առնող և մարդկային ձեռքերի վերածվող ճառագայթների տեսքով (Монгэ Г. 1989, էջ 351-352): Գլխավերևում (նաև անմիջապես զյուի վրա) վեր պարզած զույգ ձեռքերի պատկերափորում ունի նաև եզիստացիների Կա աստվածությունը (աղ. 34, նկ. 4): Այն ինչպես աստվածների, այնպես և մարդկանց երկրորդ էության (երկրորդ եսի) դրսերումն է և կարող է ապրել ինչպես քառսում, այնպես էլ անդրաշխարհում (խոտնոսում): Հնարավորություն ունի լրել տիրոջ մարմինը և կրկին ետ վերադառնալ ու վերաբնակվել նրա մեջ (Джекинс Н. 1986, էջ 93-107: Рубиншտեйн Р. 1992 թ, էջ 602: Լյուքեր Մ. 1998, էջ 81):

Մարդու դաստակի կամ ափի փորագիր պատկերները կամ բրոնզե մանրակերտերը, որպես իմաստային որոշակի ծանրաբեռնվածություն ունեցող խորհրդանշան, հանդիպում են նաև մ.թ.ա. II հազարամյակի կեսի Էգեյան (Կրետե կղզի՝ Աստրակոս հնավայր), խեթական (Կարա հույուկ) և հյուսիսկովկասյան (Թղի, Կորան) հնագիտական համալիրներում (Техов Б., 1977, 138 – 148, աղ. 102, նկ. 56-60: Frankfort Н. 1939, էջ 304, նկ. 107: Brentjes B. 1983, էջ 114): Այս առումով առավել տեղեկատվական են Պաղեստինի Հազոր բնակավայրում պեղված և քանանացիներին վերագրվող բրոնզեղարյան սրբարանի որոշ մանրամասները (աղ. 34, նկ. 7): Կիսաշրջանաձև հատակագիծ ունեցող սրբարանի կենտրոնում տեղադրված զոհասեղանի հանդիպակաց հատվածում, ուղղահայաց դիրքով տնկված սալի վրա փորագրված են արմունկներից կտրված զույգ ձեռքեր և դրանց վերնամասում՝ շրջանաձև պատկեր, հավանաբար արև (Prichard J. 1975, նկ. 103)\*: Խորհրդանշական պատկեր, որ դարձյալ, ամենայն հավանականությամբ պաշտամունքի հետ առնչվող որոշակի իմաստային ծանրաբեռնվածություն: Էլլական:

Ինչ վերաբերում է գեղիովիտյան նշանագրի վերին՝ ծվածիր պատկեր ներկայացնող հատվածին, ասպա այն ևս իր զուգահեռներն ունի խեթական աղբյուրներում: Մասնաւորապես այդպիսի նշաններ են կրում Յազրը Զայայի մ.թ.ա. II հազարամյակի կեսի բարձրաքանդակները: Խեթական (լուսիական) տեքստերում վերջիններս հանդիսանում են «աստված» հասկացության գաղափարագիրը, և տեղադրվում են աստվածությունների անվանումների վերնամասում (Фриդրիխ И. 1979, էջ 83-85, նկ. 66, 68, 70): Այս եղանակով Յազրը Զայայի բարձրաքանդակներում նշված են Կումարքի (աղ. 32, նկ. 1), Թաշմիշու (աղ. 33, նկ. 5), Շափուշկա (աղ. 32, նկ. 3), Շիմիզի (աղ. 33, նկ. 1), Կուշուխ (աղ. 33, նկ. 3), Այա-Հայա (աղ. 32, նկ. 2), Նապատիզա (աղ. 32, նկ. 10), Ասապատի (աղ. 33, նկ. 10), Խուրրի-Շերրի (աղ. 33, նկ. 7), Ուզուր (աղ. 32, նկ. 14), Փիշայշափիսի (աղ. 33, նկ. 11), Նամխե (աղ. 33, նկ. 8), Պայրա (աղ. 32, նկ. 5), Պապաննա (աղ. 33, նկ. 6), Ալանզու (աղ. 32, նկ. 6), Թարու-Թաքիսու (աղ. 32, նկ. 8), Կունզիշալլի (աղ. 32, նկ. 7), Խուրինա (աղ. 32, նկ. 15), Խութելլուրա (աղ. 32, նկ. 12), Նարարքի (աղ. 32, նկ. 13), Դամքինա (աղ. 33, նկ. 12), Նիկալը (աղ. 32, նկ. 9), Խեթատ (աղ. 33, նկ. 2), Շարրումս (աղ. 33, նկ. 9), Թիմու (աղ. 32, նկ. 4), Թիպաթինա (աղ. 32, նկ. 11) և այլ աստվածությունների անվանումները (Masson E. 1981, էջ 16, 18, 20, 22, 26, 30, 34, 36, 40, 43: Gütterbock H. 1982, աղ. I-IV): Հստ որում դիցանունները ներկայացնող լուսիական հիերոգլիֆների նշված համակարգը գրեթե

\* Մեր շնորհակալությունն ենք հայտնում արևելագետ Ա. Մովսիսյանին, այս տեղեկատվությունը տրամադրելու համար:

առանց փոփոխության շարունակվել է կիրառվել խեթական պետության անկումից (մ.թ.ա. XIII-XII դարերի սահմանագիծ) հետո է, նրա տարածքում ձևավորված բազմաթիվ պետական կազմավորումներում, ընդհուպ մինչև մ.թ.ա. VIII-VII դարերը (Զահուկյան Գ. 1987, էջ 311-312; Ճյակոն Ի. 1968, էջ 136, նկ. 25; Փրիճրիք Ի. 1979, էջ 83-85, նկ. 64-70): Այսինքն մինչև այն ժամանակահատվածը, երբ վերոհիշյալ պետական կազմավորումների մի մասն ընկավ Վանտոսավի թագավորության, իսկ մյուսները՝ Ասսուրական տերության ուղմաքաղաքական գերիշխանության տակ: Հավանաբար հենց այդ ժամանակներից էլ խեթական բազմաթիվ պետական կազմավորումներում դարեր ի վեր օգտագործվող հիերոգլիֆ գիրը կամ նրա հիման վրա ստեղծված նշանների նոր համակարգը, սեպագրին զուգահեռ (թեև ոչ նույն ինտենսիվությամբ) սկսեց կիրառվել նաև Վանտոսավի թագավորությունում\*: Մասնավորապես այդ են վկայում Զ. Կլեյնի և Ա. Մովսիսյանի վերջերս հրատարակված ուսումնասիրությունների նախնական արդյունքները (Մովսիսյան Ա. 1998: Կլեյն Ճ. 1978, էջ 127-149): Հարցն այս տեսանկյունից քննարկելիս, ամիկմն չէ ենթադրել, որ Գեղիովտից հայտնաբերված բրոնզե սափորի վերնամասին արված նշանը ևս յուրօրինակ հիերոգլիֆային գիր կարող է իրենից ներկայացնել: Ավելին, փորագիր նշանի վերնամասում հրստակ նշմարվող ծվածիրն ու նրա միջնամասով իջնող ուղղահայաց զույգ զուգահեռ գծերը հուշում են, որ այն ևս, ամենայն հավանականությամբ «աստված» հասկացության գաղափարագիրը կամ բացահայտիչն է և, որ նրա տակ ինչ-որ աստծո անուն է արձանագրված: Այս դեպքում մնում է պարզել, թե աստվածներից կոնկրետ որի անունն է ներկայացված սափորի վերնամասում: Խեթական բազմաթիվ հիերոգլիֆների դիտարկումների, ինչպես նաև արևելագետ, պատմական գիտությունների դրսուր Ա. Քոյսյանից ստացված խորհրդատվությունների արդյունքում մեզ չհաջողվեց գտնել որևէ հիերոգլիֆային նշան, որը պատկերված լիներ զույգ ձեռքերի դաստակների տեսքով, կամ զոնե մոտ լիներ որոնվող պատկերին: Այսինքն՝ պարզուց է, որ խեթական հիերոգլիֆային գրերում մեզ հետաքրքրող նշանը բացակայում է: Ինչից էլ հետևում է, որ եթե քննարկվող սափորի վրա փորագրված է աստծո անուն, ապա այն արված է խեթական հիերոգլիֆային գրի սկզբունքով, բայց ոչ խեթերեն: Ընդօրինակվել է «աստված» բացահայտչի խեթական տարրերակը, իսկ աստծո անունը ներկայացնող հատվածը հորինվել է, քանի որ այն և հետևաբար նաև այդ անունը կրող աստվածությունը բացակայել են խեթական դիցարանում: Ի դեպ նման երևույթ նկատվում է նաև վանտոսավան սեպագրերում: Այստեղ էլ, եթե բացահայտիչները հիմնականում փոխառված են ասսուրա-քարելական գրային համակարգից, ապա որոշ սեպագիր գաղափարագրեր և կանկեր ստեղծվել են տեղում: Նկատի ունենալով պատմա-մշակութային այն միջավայրը, որում հայտնաբերվել է գեղիովիտյան բրոնզե սափորի վերնամասը, տրամաբանական է ենթադրել, որ հորինված հիերոգլիֆային նշանը վանտոսավան իրողության արդյունք պետք է լինի: Այդ դեպքում,

\* Չի բացառվում նաև այն հանգամանքը, որ խեթական (լուվիական) հիերոգլիֆային գիրը կիրառված լինի Հայկական լեռնաշխարհում մինչև Վանտոսավի թագավորության պատմական բատերաբեմ իջնելը: Այս տեսանկյունից, մեր կարծիքով, կարևորագույն և եզակի փաստ է Մեծամորի թիվ 83 դամբարանից հայտնաբերված, միջինբրոնզեդարյան՝ սևան-արցախյան մշակութային խմբին վերաբերող և մ.թ.ա. XVII-XVI դարերով թվագրվող, սև փայլեցրած կավանոթը (Khanzadian E. 1995, էջ 26, նկ. 11): Սրա ուսին առկա գալարադրոշմ ալիքանախշն ավարտվում է նույն եղանակով արված ծվածիր շրջագծով և վերջինիս միջնամասում վերից վար իջնող զույգ զուգահեռ գծերով (աղ. 34, նկ. 3): Պատկեր, որն ըստ եւրյան նույնությամբ կրկնում է իրեն համաժամանակյա խեթական «աստված» գաղափարագրի մանրամասները:

թերևս, իմաստ ունի քննարկվող նշանի համապատասխան գուգահեռները որոնել վանտոսայան պատկերագրության մեջ: Այս առումով, վանտոսայան աստվածությունների փորագիր կամ դրվագված պատկերներում միայն մի աստվածություն է, որ զույգ ափերի մեջ, զիհավերւում պահում է արևի սկավառակը (Հմայակյան Ս. 1990, էջ 44-46, աղ. 4, նկ. 1, աղ. 24, նկ. 2: Պոտրովսկի Բ. 1959, էջ 225, նկ. 70: Պոտրովսկի Բ. 1962, էջ 72-75, նկ. 43): Դա Ծիվինին է, վանտոսայցիների արևի աստվածը, որի վանտոսայան պատկերավորումն էլ կարող էր գեղիովիտյան բրոնզե սափորի վրա արված գաղափարանշանի նախատիպը հանդիսանալ (աղ. 34, նկ. 6): Գեղիովիտյան հիերոգլիֆային նշանագրի նման ընթերցմանը կարծես թե օժանդակում է մի անուղղակի փաստ ևս: Ըստ Սիերի դրան հայտնի արձանագրության (որում ներկայացված է Վանտոսայի թագավորության դիցարանը) Ծիվինի աստծո պաշտամունքային կենտրոններ են հանդիսացել Տուշպա և Ուշինի քաղաքները (Ադրն Ն. 1972, էջ 227: Հմայակյան Ս. 1990, էջ 44-46: Մելիկուստիլ Ռ. 1960, էջ 144-147): Ըստ որում, Տուշպա մայրաքաղաքը կառուցող Սարդուրի 1-ն իր նորակերտ մայրաքաղաքը ծոնել է ոչ թե տերության գլխավոր աստված Խալդիին, այլ Ծիվինիին: Սա մեկ անգամ ևս ենթադրել է տալիս, որ քննարկվող տարածքն անմիջականորեն առնչվել է Ծիվինի աստծո պաշտամունքի հետ: Այս փաստը, մեզ հետաքրքրող գեղիովիտյան հիերոգլիֆային գրի մեկնարանման համատեքստում, մի նոր եզրահանգման հնարավորություն է ընձեռում: Բանն այն է, որ Վանտոսայի թագավորության տարածքում պեղված բերդաքաղաքների և բնակավայրերի շարքում, միայն մայրաքաղաք Տուշպայից (Թոփիրաք կալե) հայտնաբերված մեկ տասնյակից ավելի խեցանոթների բեկորների վրա է, որ հանդիպում են դաստակի կամ քացված մատներով ափի սիենատիկ դրոշմ-պատկերներ (Սովորյան Ա. 1998, էջ 97, աղ. XVII, նկ. 116-121, 123-127: Lehmann-Haupt C. 1931, էջ 579): Ստացվում է, որ Ծիվինի աստծո անունը՝ զույգ ձեռքերի պատկեր ներկայացնող գաղափարանշանի տեսքով, հանդիպում է գեղիովիտյան բրոնզե սափորի վրա և ձեռքի ափի պատկերներ են կրում միայն Ծիվինի աստծո պաշտամունքային կենտրոնից՝ Տուշպայից հայտնաբերված խեցանոթների բեկորները: Սա էլ ենթադրել է տալիս, որ թերևս քըննարկվող դրոշմ-պատկերները Ծիվինի աստծո պաշտամունքային կենտրոն հանդիսացող Տուշպայի (Թոփիրաք կալե) բրուտագործական արհեստանոցի տարբերանշանն են եղել և, ինչպես գեղիովիտյան բրոնզե սափորի հիերոգլիֆային գիրը, խորհրդանշել են արևի աստված Ծիվինիին:

Եթե ենթադրությունների ու դատողությունների այս հաջորդականությունը մոտ է կամ համապատասխանում է իրականությանը, ապա կարելի է եզրակացնել, որ Գեղիովիտի քարայր-դամբարանից հայտնաբերված բրոնզե սափորի վերնամասում վանտոսայան գաղափարագրերով արձանագրված է «<sup>D</sup>UTU» («<sup>D</sup>Šawini») «աստված Ծիվինի» հիերոգլիֆային արտահայտությունը, որում Ծիվինի աստծո անունը ներկայացված է դաստակների հիմքից կտրված զույգ ափերի, իսկ «աստված» բացահայտիչը՝ ուղղահայց զույգ զուգահեռ գծերով ներգծված ծվածիրի (խեթական «աստված» գաղափարի) համակցությամբ (աղ. 33, նկ. 13):

Խեթական, ապա և վանտոսայան գաղափարագիր «աստված» բացահայտչի երկարատև կիրառությունը Հայկական լեռնաշխարհում, ապա նաև ավելի ուշ ժամանակաշրջանի հայ իրականության մեջ, կարելի է թերևս հիմնավորել միջնադարյան հայերեն նշանագրերում քննարկվող նշանի առկայությամբ: Ըստ Ա.Աբրահամյանի, միջնադարում այն նշանակել է «ավետարան», այսինքն՝ ժամանակի ընթացքում իմաստային առումով աստիճանաբար փոխակերպվելով, այնուամենայնիվ, ընդիհանուր առմամբ

դարձյալ շարունակել է խորիրդանշել ծիսա-կրոնական բնույթի իրողություն (Արքահամյան Ա. 1959, էջ 160):

**ՊԵՐԾԱՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐ:** Գեղիովտի քարայր-դամբարանից հայտնաբերված արտեֆակտների վերջին խումբը կազմում են պերճանքի առարկաները: Սրանք քանակով շատ չեն և պատրաստված են տարբեր նյութերից (բրոնզ, կավ, քար, ապակի, ոսկոր) (աղ. 35):

Այս խմբում են քարակ, հատույթում՝ կլորավուն բրոնզե լարից պատրաստված, իրար ընդհուպ մոտեցող ծայրերով երկու ապարանջանները (աղ. 35, նկ. 1, 2): Դրանցից առաջինն ամբողջանում է (կազմված է իրար կաշող երկու կտորներից) և ունի 5.0սմ տրամագիծ: Երկրորդից պահպանվել է երկու բեկոր: Վերջիններս քույլ են տալիս եզրակացնել, որ այս ապարանջանը ևս, նախորդի տրամագիծն է ունեցել: Երկուսն ել (դատելով չափերից) պատկանել են մանկահասակ անձանց:

Պերճանքի երկրորդ առարկան՝ տափակ և քառակուսաձև կառուցվածք ունեցող 19 հատիկներից կազմված ոսկոր վզնոց է (աղ. 35, նկ. 9):

Հատիկներից յուրաքանչյուրը կողային նեղ հատվածում զույգ միջանցիկ շրջանաձև փորվածքներ ունի, իսկ դիմային մասում կրում է խորադիր շրջանագծից և վերջինիս կենտրոնում փորված կետից կազմված նախշ: Մասնագիտական գրականության մեջ սրանք ստացել են «գոմինոյած» զարդարանքներ անվանումը: Դրանց զուգահեռները լավ հայտնի են ինչպես մինչվանտոսայլան (Նորատուս, Արքիկ, Ծիրակավան, Ուկեհասկ, Գոլովինո, Ակներ), այնպես էլ Գեղիովտի քարայր-դամբարանին համաժամանակյա (Տուշպա-Վան, Թեյշերախինի-Կարմիր բլուր) հնագիտական համալիրներից (Պոտրովսկի Բ. 1944, էջ 186, նկ. 51: Պոտրովսկի Բ. 1950, էջ 50, նկ. 38, էջ 52-53, նկ. 39-40: Մարտirosյան Ա. 1954, էջ 84-85: Պոտրովսկի Բ. 1962, էջ 91-93, նկ. 57, 59, 60: Մարտirosյան Ա. 1964, էջ 209-210, նկ. 82, աղ. XX, նկ. 1: Խաչատրյան Տ. 1975, էջ 243: Պետրօսյան Լ. 1989, էջ 80, աղ. 70, նկ. 6, աղ. 72, նկ. 1, 2, աղ. 73, նկ. 15):

Գեղիովտի քարայր-դամբարանից հայտնաբերված պերճանքի առարկաների վերջին տեսակը՝ տարբեր չափի և զույնի ուլունքահատիկներն են (աղ. 35, նկ. 3-5): Դրանցից հինգը շատ մանր են, ունեն գլանաձև կառուցվածք և պատրաստված են երկնագույն երանգավորում ունեցող կավե մածուկից: Երկու մեծ, անվակածն ուլունքահատիկներն ապակուց են: Դրանցից մեկն ունի մուգ դարչնա-մանուշակագույն, իսկ մյուսը՝ կապտա-փիրուզագույն երանգավորում: Հաջորդ հինգ ուլունքահատիկները պատրաստված են դեղնավուն սմալտայից և ունեն ծվածն կառուցվածք: Ուլունքահատիկներից մեկը պատրաստված է վարդագույն սարդինից, իսկ մյուսը՝ ջերմային մշակման հետևանքով մոխրագույն երանգավորում ստացած ազարից: Նույն եղանակով պատրաստված ազարն ուլունքները հայտնի են նաև վանտոսայլան ժամանակաշրջանին վերաբերող այլ հուշարձաններից (Երևանի «Ավտոագրեգատ» գործարանի վանտոսայլան դամբարան, Էրեբունի, Թեյշերախինի, Կարմիր բլուր) (Եսայան Ա., Բիյագով Լ., Հմայակյան Ա., Կանեցյան Ա. 1995, աղ. XVI: Պոտրովսկի Բ. 1944, էջ 166-170, նկ. 28, 31: Խօճառ Ս., Տոխմանովա Հ., Օգանեսյան Կ. 1979, նկ. 78):

Այսպիսով, ի մի բերելով երկսրահ քարայր-դամբարանի ավերված երկրորդ սրահի տարածքից հավաքված և պահպանված առաջին սրահի հատակին պեղված հնագիտական նյութերի քննարկումը, կարելի է եզրակացնել, որ դրանք (դատելով զույքակագմից) պատկանի են տվյալ հասարակության մեջ որոշակի դիրք ունեցող անհատի և վերջինիս մահվան կապակցությամբ, որպես քաղման ծեսի անհրաժեշտ բաղկացուցիչ՝ տեղադրվել դամբարանում:

## ՀԱՍՏԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գեղիովտի վանտոսայյան քարայր-դամբարանը, որպես պատմական սկզբանաբյուր կարևոր է մշակութային և ժամանակագրական ծիսա-պաշտամունքային կոնկրետացումների առումով: Այն առավել ամբողջական ներկայացնելու նպատակով, հեղինակներն անհրաժեշտ են համարում գիտական շրջանառության մեջ դնել նաև քննարկող հուշարձանից հայտնաբերված և Սևանի ավազանի վանտոսայյան մյուս համալիրներում իրենց գուգահեռներն ունեցող հնամարդաբանական նյութերի համակողմանի ուսումնասիրությունից ստացված փաստերը, չափագրական տվյալների հիման վրա կատարած հնամարդաբանական որակումները, սեռա-տարիքային բնորոշումները և պարուղական ախտորոշումները:

Գեղիովտի քարայր-դամբարանից հայտնաբերված հնամարդաբանական հավաքածուն բաղկացած է ինը անհատական դիտարկումներից և չափագրման պիտանի երեք ամբողջական գանգ է պարունակում (աղ. II)\* (գանգերի չափերի կատեգորիաների դասակարգումը տես՝ Ալեքսեև Բ., Դեեզ Գ. 1964, էջ 114-116): Թիվ 1 դիտարկումը (աղ. II) պատկանում է 50-60 տարեկան տղամարդու: Բնութագրվում է գանգասկավառակի չափազանց մեծ երկայնական, միջին լայնական տրամագծերով և դոլիխոկրան կառուցվածքով: Դիմային կմախքը չափազանց նեղ է, տանձաձև բացվածքի լայնության մեծ և բարձրության փոքր չափերով: Ակնակապիճներն ունեն փոքր բարձրություն և միջին լայնություն:

Թիվ 2 գանգը պատկանում է 45-55 տարեկան տղամարդու: Այն բնութագրվում է գանգասկավառակի մեծ երկայնական, փոքր լայնական տրամագծերով, դոլիխոկրան կառուցվածքով և դիմային կմախքի միջին բարձրությամբ ու լայնությամբ: Տանձաձև բացվածքի բարձրությունը փոքր է, իսկ լայնությունը՝ միջին մեծության: Ակնակապիճները միջին լայնության են և ցածր (աղ. II):

Թիվ 3 գանգը պատկանում է 20-25 տարեկան կնոջ: Գանգասկավառակն ունի մեզոկրան կառուցվածք, միջին մեծության երկայնական և լայնական տրամաչափեր: Այտուկրային տրամագիծը բնութագրում է նեղադիմություն: Թիվ 2 և թիվ 3 գանգերը չափազանց հետաքրքիր են պարուղական տեսանկյունից: Այս առումով պրոֆեսոր Վ. Տատինցյանի և դոցենտ Լ. Անդրեասյանի ախտորոշումները ներկայացված են XI աղյուսակում: Կատարված հետազոտությունների հիման վրա վերոհիշյալ մասնագետները գտնում են, որ պարագնութը և ատամնաշարի պարուղական մաշվածությունը հանդիսանում են քննարկող գանգերի ատամնածնոտային համակարգի ամենաբնորոշ խեղումները (Տատինցյան Բ., Անդրեասյան Լ., Մկրտչյան Բ., Պոլիսօսյան Ա. - վ պետական):

Գեղիովտի հնամարդաբանական հավաքածուի անհատական սեռա-տարիքային որակումները իրագործվել են գանգաբանական նյութի հիման վրա: Տարիքային բնորոշումների համար հիմնականում հաշվի է առնվել գանգի կարերի օրինական աստիճանը:

Ատամնաշարի ամբողջականությունը և նրա ծամող մակերեսի մաշվածության մակարդակը, սույն պարագայում, որպես տարիքը հուշող տեղեկատվական աղբյուր, ան-

\*Հնամարդաբանական աղյուսակները (ի տարբերություն հնագիտականների) համարակալված են հոռմական քվանչաններով:

տեսվել է՝ պաթոլոգիական խեղումների պատճառով։ Աղյուսակ III-ում բերված են առկա գանգարանական նյութի սեռա-տարիքային տվյալները։

Հայ ժողովրդի ծագումնարանության և կազմափորման հիմնա-խնդիրներին նվիրված մի շարք աշխատություններում, որոշ անվանի ուսումնասիրողների կողմից, թերահավատ վերաբերմունք է լրացնորդվել հնամարդաբանական նյութի տեղեկատվական հնարավորությունների հանդեպ։ Այս հարցում կարևորվել են միայն լեզվական տվյալներն ու համեմատական լեզվաբանության ընձեռած փաստերը։

Իր «Ուրարտու պետությունը և հայերը» աշխատության մեջ անդրադառնալով էքսոգենեզին վերաբերող հարցերի մեկնարանման գործում հնամարդաբանության ունեցած դերին՝ Գ.Խ. Սարգսյանը եզրահանգել է, որ վերջինիս հնարավորությունները սահմանափակված են նրա հետազոտման մեթոդիկայի տակավին անկատար վիճակով, ուստի այս պարագայում առավել շոշափելի և հուսալի պատմական աղբյուր է համապատասխան ժողովրդի լեզուն (Սարգսյան Գ. 1988, էջ 48)։ Այս առթիվ իշխատակության է արժանի նաև հայ ժողովրդի ծագումնարանության հարցերի շուրջ իրար ընդդիմախոս գիտնականներ Ի.Մ. Դյակոնովի և Ռ.Ա. Իշխանյանի գրեթե նույնական անվատակությունը մարդաբանական տվյալների էքսուտարբերակիչ հնարավորությունների նկատմամբ։ Ընդ որում, եթե նրանցից առաջինը գտնում է, որ մարդաբանական տիպը որևէ դեր չունի վերոհիշյալ հիմնախնդիրների մեկնարանման գործում, քանի որ «մարդաբանական տիպերի տարածման սահմանները երբեք չեն համընկնում ժողովուրդների և նրանց լեզուների տարածման սահմանների հետ (Ճյակոնով Ի. 1968, էջ 7-8), ապա երկրորդը համոզված է, թե հնամարդաբանական շափանիշը հայերի համար տարբերակիչ չէ, որովհետև մարդաբանական միևնույն տիպի մեջ հայերի հետ մտնում են նաև էթնիկական մի շարք այլ միավորումներ, ինչն էլ զայխ է հաստատելու, որ հայոց լեզուն է հայ էքսուի տարբերակիչ միակ հիմնական շափանիշը (Իշխանյան Ռ. 1989, էջ 24, 28)։

Մեքողական առումով ճիշտ չէ մարդաբանական տեղեկատվության ինչպես բացարձակ անտեսումը, այնպես էլ անհիմն գերագնահատումը։ Ավելորդ է թվարկել այն ստվարածավալ մասնագիտական գրականությունը, որտեղ կարևորվել է հնամարդաբանական նյութի դերը որպես պատմական սկզբնադրյուր՝ էքսոգենետիկական հիմնախնդիրների լուծման գործում (տես, օրինակ՝ Ալեքսեև Բ. 1989)։ Տեսական գրականության մեջ հաճախ կարելի է հանդիպել այն գաղափարին, ըստ որի հնամարդաբանական տվյալների աղբյուրագիտական արժեքը հիմնականում կարևոր է մինչգրային հասարակարգերի պատմական վերակազմությունների իրականացման հարցում։ Այս թերզը չի սահմանափակում նշված գիտաճյուղի անհեկատվական, վերլուծական և վերականգնողական արժեքը գրավոր սկզբնադրյուններ թողած հասարակությունների ուսումնասիրության դեպքում ընդհանրապես և Վանտոսայի թագավորության էթնիկական պատմության վերականգնման հարցում՝ մասնավորապես։

Կոնկրետացնելով խնդիրը՝ նշենք, որ Վանտոսայի թագավորության ժամանակաշրջանին վերաբերող հնամարդաբանական նյութը համապատասխան պատմա-մշակութային համատեքսուում մեկնարանելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել նաև տարրածաշրջանում այն ժամանակ առկա ուսումնական իրավիճակը։ Բանն այն է, որ Վանտոսայի թագավորության հզորացման և ընդարձակման գործընթացն ուղեկցվել է ինչպես բնակչության մասսայական տեղաշարժերով, այնպես էլ քաղաքաշինական անհասարեպ վերելքով, որի արդյունքը՝ տարածաշրջանի դեմոգրաֆիական (ժողովրդագրական) և էթնիկական պատկերի վերաձևումն է։

Պատմական նման իրավիճակը խոչընդոտող հանգամանք է հնամարդաբանական տվյալների էթնոտարբերակիշ հնարավորությունները բացահայտելու գործում, քանի որ դժվարացնում է վերջինիս խմբավորումը էթնո-մշակութային և տարածքային առումներով:

Առաջավոր Ասիայի և մասնավորապես Հայկական լեռնաշխարհի տարածքից հայտնաբերված հնամարդաբանական նյութերի չափագրական տվյալների համադրությունը բացահայտում է տարբերակվածության մեկ ընդհանուր ուղղվածություն զանգվածեղ և նրբակազմ գանգարանական տիպերի միջև: Մասսայական միզրացիաները և ուրբանիզացիան, որպես մարդաբանական տիպերի ձևակազմիշ գործոն, հզոր կատալիզատորի դեր են կատարել մետիսացնող գործընթացների արագացման և վերոհիշյալ ձևաբանական տիպերի համահարթեցման հարցում: Ուստի Վանտոսավի թագավորության ռազմա-քաղաքական բարդ գործընթացների պատմական խառնարանից մեզ ժառանգություն հասած հնամարդաբանական փաստացի նյութն էթնիկական վերակազմությունների մակարդակում որպես տարբերակիշ օգտագործելը՝ պահանջում է հնամակարգված մոտեցում: Մարդաբանական հավաքածուների խմբավորման կարևորագույն նախապայմանը՝ անհատական դիտարկումների ճշգրիտ պատմա-հնագիտական անձնագրավորումն է և նրանց չափագրական տվյալների վիճակագրական միջինացումն ըստ առանձին դամբարանային համալիրների, տարածքային սահմանների, մշակութային առանձնահատկությունների և այլն:

Վանտոսավյան (ուրարտական) ժամանակահատվածին վերաբերող դամբարանային համալիրներից հայտնաբերված գանգարանական նյութերի համեմատական վերլուծության փորձ արդեն կատարվել է սույն ուսումնասիրության հեղինակներից մեկի կողմից (Մկրտչյան Ռ., Ավետիսյան Պ. 1995, էջ 98-103): Որպես հետազոտման աղբյուր օգտագործվել են վանտոսավյան հնագիտական նյութ պարունակող Գեղիովտի, Արգիշթիկինիլիի (Արմավիր), Արտաշավանի և Նորատուսի դամբարաններից հայտնաբերված գանգարանական հավաքածուները, որոնց միջինացված ցուցանիշների ներխրմբային ուսումնասիրությունը բացահայտել է ողջ հավաքածուի ձևաբանական համասեռությունը, իսկ առանձին հատկանիշների գույգային համադրությունը՝ կոորդինատների դաշտում խմբավորել է մարդաբանական տվյալները, ըստ վերը ներկայացված չորս հուշարձանների (Քոչար Ն., Ակրտչյան Ռ., Փալիկյան Ա. 1995, էջ 97-98):

Նշված հուշարձաններն ունեն տարածական սփովածություն, ուստի դրանցում հայտնաբերված գանգարանական հավաքածուների խմբավորման միակ հիմքը՝ պատմամշակութային մեկ ընդհանրությանը պատկանելն է: Միջնմբային համեմատական վերլուծությունը ժամանակին իրազործվել է Հռոմի դամբարանադաշտի և Հ. Մարտիրոսյանի կողմից Նորատուսի խմբային թաղումից հայտնաբերված գանգարանական հավաքածուների հետ: Վերը թվարկված հնամարդաբանական նյութերի ուսումնասիրությունը բացահատել է մ.թ.ա. VIII-VI դարերի վանտոսավյան գանգարանական հավաքածուի առավել նրբակազմ ձևաբանությունը, որը մեկնաբանվել է բնակչության տեղական հիմնաշերտի մեջ մարդաբանական նոր տիպի կողմից արկած ներկուսով (Մկրտչյան Ռ., Ավետիսյան Պ. 1995, էջ 101): Նշենք, որ հիշատակված աշխատանքում հեղինակները մարդաբանական բնորոշումների տարբերակվածության ցուցանիշները կանխավ փորձել են դիտարկել միայն «տեղական և բերովի հնագիտական մշակույթներ» հասկացությունների համատեքստում: Ինչից և բխել է, որ վանտոսավյան ժամանակաշրջանի գանգարանական հավաքածուի հնամարդաբանական նկարագրի ձևակազմիշ միակ գործոնը կարող է հանդիսացած լինել նրբակազմ բնակչության ներհոսքը,

իսկ արդյունքը՝ նորակազմության գործընթացը։ Վերջինս մի հզոր կենսաբանական երևոյթ է, որը Հայկական լեռնաշխարհում ունի իր տարածքային և ժամանակագրական կոնկրետ դրսորումները։ Ակսած մ.թ.ա. III հազարամյակից (իսկ Առաջավոր Ասիայում ավելի վաղ) զանգվածեղ և նորակազմ զանգվարանական տիպերն այստեղ ունեցել են համապատասխանաբար հյուսիսային և հարավային աշխարհագրական սփովածություն։ Կոնկրետ Արևելյան Հայաստանի և մասնավորապես Սևանի ավագանի տարածքում նորակազմության գործընթացը փաստագրվում է սկսած մ.թ.ա. XIV դարից (Լճաշեն, Ներքին Գետաշեն)։ Այսինքն՝ շուրջ 5 դար ավելի վաղ, քան Վանտոսպի ու ազմա-քաղաքական ձեռնարկումների հետևանքով Հայկական լեռնաշխարհում վերստին սկիզբ առած բնակչության մասսայական տեղաշարժերը։ Ուստի վերոհիշյալ ձևաբանական փոփոխությունը բացատրել միայն տեղական բնակչության հիմնաշերտի մեջ արագ և միանգամից կատարված նոր էթնիկական ներհոսքի պատճառով, նշանակում է անտեսել մնացած ձևակազմից այն գործոնների (տեղաբնիկություն, սոցիալական և աշխարհագրական մեկուսացում, մետիսացում և այլն) առկայությունը, որոնք մինչ Վանտոսպի քաջավորության պատմական քատերաբեմ իջնելն էլ հզոր ազդակներ են հանդիսացել քննարկվող տարածաշրջանի մարդաբանական կերտվածքի ստեղծման գործում։ Պետք է խոստովանել, որ վերոհիշյալ հրապարակման մեջ (Սկրտչան Ռ., Ավետիսյան Պ. 1995, էջ 93-103) մարդաբանական վերլուծության մերողն անկատար է՝ ընդգրկուն համեմատական ֆոնի բացակայության պատճառով, ինչը կփորձենք իրագործել սույն աշխատանքում։

Նյութի բացակայության պատճառով, վանտոսպի ժամանակահատվածի մարդաբանությունը քիչ է լուսաբանվել։ Այս ուսումնասիրության մեջ՝ համեմատական համատեքստում, ի մի է բերվել քննարկվող խնդրի հետ առնչվող զանգվարանական փաստացի ողջ նյութը։ Գեղինված քարայր-դամբարանի, ինչպես նաև Հայաստանի վանտոսպի հուշարձանների (Նորատու, Արգիշտիխնիլի-Արմավիր, Արտաշավան) հնամարդաբանական նյութերի չսպազրման տվյալների միջինացված արժեքների հիման վրա վերհանված վանտոսպի մարդաբանական տիպի տեղն ու դերը Հին Արևելքի և Միջերկրականի ավագանի մ.թ.ա. II հազարամյակի վերջին քառորդից - մ.թ.ա. I հազարամյակի կեսերն ընդգրկող ժամանակահատվածում դրսորված պատմամշակութային գործընթացների խառնարանում բացահայտելու համար, մենք նպատակահարմար գտանք այս աշխատանքում, որպես համեմատական ընդհանուր ֆոն, օգտագործել Եվրոպական տարածաշրջանի այն էթնո-քաղաքական կազմավորումների հնամարդաբանական նյութերի միջինացված տվյալները, որոնք էթնիկական, քաղաքական և/կամ մշակութային գործընթացների համատեքստում ընդհանրության եզրեր են ցուցանում վանտոսպի հրողությունների հետ և կարող են պատմա-մշակութային վերակազմությունների սկզբանադրյուր հանդիսանալ։ Ուստի, որպես ընդհանուր համեմատական ֆոն առանձնացված հնամարդաբանական ժողովածուները, ըստ ուղեկցող հնագիտական համալիրների ընձեռած տեղեկատվության, առաջ քաշված հիմնախնդիրների օբյեկտիվ մեկնարանան համար, մեր կարծիքով անհրաժեշտ է, որ բավարարեն հետևյալ պահանջներին (կամ դրանցից մեկին)։

1. Անմիջականորեն նախորդեն, համաժամանակյա լինեն կամ հաջորդեն վանտոսպի հրողություններին։

2. Իրենց վրա կրեն Վանտոսպի քաջավորության քաղաքական և/կամ մշակութային ազդեցության դրոշմը՝ վկայված արձանագիր տեքստերի և/կամ հաստագրված հնագիտական նյութերի փաստացի տվյալներով։

Այս սկզբունքով առանձնացված գանգարանական հավաքածուները 22-ն են (աղ. I և IV):

Հավաքածու թիվ 1.- Հայաստանի վանտոսայյան (ուրարտական) հուշարձաններից (Գեղիովիտ, Նորատուս, Արմավիր, Արտաշավան) հայտնաբերված հնամարդաբանական նյութ (Սկրտչյան Ռ., Ավետիսյան Դ. 1995, էջ 98-103):

Հավաքածու թիվ 2. - Սևանի ավազանի (Նորատուս, Սոքի ձոր, Ներքին Գետաշեն, Ակունք) մինչվանտոսայյան, վաղերկաթեղարյան հնամարդաբանական նյութ (գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ):

Հավաքածու թիվ 3. - Հոռոմի (Ծիրակի մարզ) մինչվանտոսայյան, վաղերկաթեղարյան հնամարդաբանական նյութ (գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ):

Սևանի ավազանի և Հոռոմի հնամարդաբանական հավաքածուները նախորդում են Վանտոսայի թագավորության (որպես հզոր ու անկախ ռազմա-քաղաքական միավորի) համբես գալուն և անմիջականորեն համընկնում ուրուատրի-ուրարտական (Վանտոսայյան) ցեղախմբերի կազմավորման ու աստիճանական համախմբման ժամանակահատվածին (մ.թ.ա. XIII-IX դարեր): Ավելացնենք նաև, որ Սևանի ավազանը և Ծիրակը մ.թ.ա. VIII դարի առաջին կեսից հիմնավորապես ներառնվում են Վանտոսայի թագավորության աշխարհա-քաղաքական սահմանների մեջ, իսկ դրանց բնակչությունն անմիջականորեն ընդգրկվում Վանտոսայի տիրակալների կողմից իրականացվող էթնիկական տեղաշարժերի ոլորտը (YKH-127, I-VIII, YKH-155, A-F):

Հավաքածու թիվ 4. - Արևելավրացական հարթավայրից (Թրելի, Սամբավր, Նարագրերի, Նարեկպավի, Դվանի) հայտնաբերված երկաթեղարյան հնամարդաբանական նյութ (Աճայալու Մ. 1988, էջ 56):

Հավաքածու թիվ 5. - Սինգեչառի (Արևելյան Անդրկովկաս) մինչվանտոսայյան, երկաթեղարյան՝ «կծկված դիրքով» թաղումների հնամարդաբանական նյութ (Կասիմովա Բ. 1960, էջ 19):

Հավաքածու թիվ 6. - Սինգեչառի ետվանտոսայյան՝ «մեջքի վրա պառկած» թաղումների հնամարդաբանական նյութ (Կասիմովա Բ. 1960, էջ 20-21):

Անդրկովկասյան նշված հավաքածուներից երկուսը՝ Արևելավրացական հարթավայրից և Սինգեչառի «կծկված դիրքով» թաղումներից հայտնաբերված հնամարդաբանական նյութերը, համաժամանակյա են Հայաստանի երկաթեղարյան հավաքածուներին և կարող են Հայկական լեռնաշխարհի և նրան հարակից հյուսիսային և արևելյան տարածքների վաղ երկարի շրջափուլի (մինչվանտոսայյան) էթնո-մշակութային կապերի ու ընդհանրությունների շրջանակը համարել նոր՝ հնամարդաբանական տվյալներով: Ինչ վերաբերում է Սինգեչառի «մեջքի վրա պառկած» թաղումներից հայտնաբերված հնամարդաբանական նյութին, ապա այն ժամանակագրական առումով անմիջապես հաջորդում է վանտոսայյան հավաքածուներին: Ուստի դրանց համատեղ վերլուծությունը հնարավորություն կտա Անդրկովկասում ուշվանտոսայյան և ետվանտոսայյան շրջանի պատմա-մշակութային գործընթացներն իրականացրած ազգաբնակչության մարդաբանական տիպի առավել հավաստի պատկերը ներկայացնելու:

Հավաքածու թիվ 7. - Թղիի (Հարավային Օսերիա) երկաթեղարյան հնամարդաբանական նյութ (Աճայալու Մ. 1988, էջ 56):

Հավաքածու թիվ 8. - Կորանի (Հյուսիսային Կովկաս) երկաթեղարյան համահավաք հնամարդաբանական նյութ (Ալեքսեև Յ. 1974, էջ 94):

Հավաքածու թիվ 9. - Սերծսևծովյան տափաստանների (Ուկրաինա) սկյութական հնամարդաբանական նյութ (Կոնդյուտօրովա Տ. 1979, էջ 71-72):

Հավաքածու թիվ 10. - Սիջինմերձնեպրովյան տարածքի (Ուկրաինա) սկյութական հնամարդաբանական նյութ (Կոնդյուտօրովա Տ. 1979, էջ 71-72):

Հավաքածու թիվ 11. - Նիկոլաևկա Կազացկոյն և Զոլոտայա Բալկա հնավայրերի (Ուկրաինա) սկյութական հնամարդաբանական նյութեր (Կոնդյուտօրովա Տ. 1979, էջ 71-72):

Հավաքածու թիվ 12. - Սերծսևծովյան տափաստանների քոչվոր սկյութների համահավաք հնամարդաբանական նյութ (Ճենք Գ. 1948, էջ 161):

Հավաքածու թիվ 13. - Ստորինմերձնեպրովյան տարածքի (Նիկոպոլ՝ Ուկրաինա) քոչվոր սկյութների հնամարդաբանական նյութ (Ճենք Գ. 1948, էջ 160):

Հավաքածու թիվ 14. - Սիջինմերձնեպրովյան տարածքի երկրագործ սկյութների համահավաք հնամարդաբանական նյութ (Ճենք Գ. 1948, էջ 159):

Կենտրոնական և Հյուսիսային Կովկասի (հավաքածումեր թիվ 8 և 9) երկարեղարյան (մ.թ.ա. I հազարամյակի առաջին քառորդ) հնամարդաբանական գտածոների և Հարավուսական տափաստանների սկյութական հավաքածուների (թիվ 9-11) ներգրավումն այս աշխատության մեջ կարևոր է նրանով, որ վերջիններիս համադրված ուսումնասիրությունն Անդրկովկասի երկարեղարյան և Հայաստանի վանտոսայան հնամարդաբանական նյութերի հետ, կարող է Անդրկովկասում և Կովկասում սկյութական էթնիկական փոխառնչությունների ու տեղաշարժերի իրագործման կոնկրետ ժամանակ և ուղղություն մատնանշել:

Հավաքածու թիվ 15. - Սիալկ Բ դամբարանադաշտի (Իրանական սարահարթի արևմտյան հատված) երկարեղարյան (մ.թ.ա. IX-VIII դարեր) հնամարդաբանական նյութ (Vallois H. - V. 1940):

Հավաքածու թիվ 16. - Հասանլու V-ի (Իրանական սարահարթի հյուսիս-արևմտյան հատված) մինչվանտոսայան, վաղերկարեղարյան (մ.թ.ա. 1200-1000թթ.) հնամարդաբանական նյութ (Rathbun T. 1972, էջ 162):

Հավաքածու թիվ 17. - Հասանլու IV-ի երկարեղարյան (մ.թ.ա. 900-800 թթ.) հնամարդաբանական նյութ (Rathbun T. 1972, էջ 162):

Հավաքածու թիվ 18. - Հասանլու III-ի ուշվանտոսայան և ետվանտոսայան (մ.թ.ա. 600-500 թթ.) ժամանակահատվածի հնամարդաբանական նյութ (Rathbun T. 1972, էջ 162):

Իրանական սարահարթի արևմտյան (Սիալկ Բ դամբարանադաշտ) և հյուսիսարևմտյան (Հասանլու III-V) հատվածների վերոհիշյալ հնամարդաբանական նյութերի օգտագործումն այս համատեքստում, կարևոր է երկու առումով: Եթե Հասանլու V-ը բը-վագրվում է մ.թ.ա. XII-X դարերով, համընկնում է վանտոսայան ցեղախմբերի կազմավորման ու համախմբման ժամանակահատվածին և մշակութային առումով լիովին համադրելի է Հայկական լեռնաշխարհի (մասնավորապես Սևանի ավազանի և Հոռոմի) վաղերկարեղարյան հնագիտական համալիրներին, ապա Հասանլու IV-ը, Սիալկ Բ-ն և Հասանլու III-ը ժամանակագրական առումով համապատասխանում են մ.թ.ա. IX-VI դարերին, փաստորեն համաժամանակյա են Վանտոսայի թագավորության իրողություններին և կարող են էթնոմշակութային կապերի ու փոխմերգործությունների նոր պատկեր տալ: Այս առումով ավելացնենք նաև, որ մասնագետների կարծիքով Հասանլու IV-ի կործանման պատճառը հենց վանտոսայան գործոնն է հանդիսացել (Bray W., Tatum D. 1980, էջ 101):

Հավաքածու թիվ 19. -Նիպուրի (Հարավային Միջազգետը) I-V հնագիտական հոդաբանների երկարեղարյան և ետվանտոսայան (մ.թ.ա. 900-500թթ) հնամարդաբանական նյութ (Swindler D. 1956, էջ 22):

Այս հավաքածուի ներգրավումը ևս պատահական չէ: Բանն այն է, որ մ.թ.ա. IX-VI դարերում Վանտոսայի քագավորության և Ասսուրական պետության միջև պարբերաբար կրկնվող արյունահեղ ընդհարությունները, քաղաքականից զատ, թերևս կարող էին նաև էթնիկական դրդապատճառներ ունենալ, ինչը գուցեն հնարավոր լինի նկատել վերջիններիս համաժամանակյա հնամարդաբանական նյութերի ուսումնասիրության ընթացքում: Կա մի ուշագրավ փաստ ևս: Ետվանտոսայան և ետասսուրական ժամանակաշրջանում (մ.թ.ա. VI դարի վերջին քառորդ), արդեն Նոր Պարսկական սկզբնադրյուրները (Քեհիսրումյան արձանագրություն), ներկայացնելով Հայկական լեռնաշխարհի (Ուրաշտու-Արմինա) և Աքեմենյան Իրանի բարդ ուազմա-քաղաքական փոխսհարաբերությունները, նշում են Սիծագետքում (Քարելոնում) Դարեհ I-ի դեմ ապստամբած ումն արմեն-ուրարտացի Արախսայի մասին, դրանով իսկ կարծես թե հիմքեր տալով ենթադրելու նշված ժամանակահատվածում հայ-արմենական (ուրարտայա) էթնիկ ինչ-որ միավորի ներթափանցումը Միջազգետք: Այս հանգամանքը, անշուշտ, կապ ունի Վանտոսայի և Ասսուրական քագավորությունների անկման հետևանքով տարածաշրջանում ստեղծված էթնո-քաղաքական խառն իրավիճակի հետ և, որը գուցեն հնարավոր լինի նշմարել քննարկվող համաժամանակյա հնամարդաբանական նյութերի համեմատության համատեքստում:

Հավաքածու թիվ 20. - Ալիշար հույուկի (Փոքր Ասիա) V շերտագրական հորիզոնի (մ.թ.ա. VIII-VII դարեր) հնամարդաբանական նյութ (Angel L. 1951, աղ. 4):

Ուսումնասիրության մեջ փոքրասիական հնամարդաբանական նյութի ներգրավումը միանգամայն քացատրելի է այն նշանակալից դերով, որ խաղացել են խեթական քագավորության անկման հետևանքով անկախացած, ապա և մ.թ.ա. VII դարից Վանտոսայի քագավորության աշխարհա-քաղաքական սահմանների մեջ ներգրավված՝ ուշ խեթա-լուվիական և արևելափոյուգական (մուշկական) խառը բնակչություն ունեցող տեղի կազմավորումները (մասնավորապես Խաթեն, Ծուպանին, Թեգարաման, Կադմուիին և այլն): Ավելացնենք նաև, որ ուշ խեթա-լուվիական և վանտոսայան (ուրարտական) մշակութային փոխներգործությունները (խեցեգործության, կնքագործության, զինագործության, իիերոգլիֆային գրի, դիցանունների ու անձնանունների, որոշ տոնածիսական արարողությունների, ճարտարապետության և այլ բնագավառներում) քաղմից ընդգծվել են արևելագետների կողմից, իսկ փոյուգա-նախավանտոսայան առնչությունների տարբեր ոլորտներն այսօր արդեն աշխատության քննարկումների առարկա են (Սարգսյան Գ., 1992, էջ 27-48: Ավետիսյան Հ. 1994, էջ 239-245: Քոսյան Ա. 1994, էջ 247-254: Քոսյան Ա. 1996, էջ 207-219: Քոսյան Ա. 1998: Կոսյան Ա. 1994: Kossian A. 1997, էջ 253-266): Ուստի նկատվող կապերն ու փոխառնչությունները մատնանշող փաստերը հնամարդաբանական օբյեկտիվ տվյալներով համադրելը կարող է առավել արժանահավատ եզրահանգումների նոր հնարավորություն ընձեռել:

Հավաքածու թիվ 21.-Տուկանայի և Տարբախնիայի (Ապենինյան թերակղզի) էտրուսկյան (մ.թ.ա. VIII-VI դարեր) հնամարդաբանական նյութ (Angel L. 1951, աղ. 4):

Այս նյութի ներգրավումը համեմատական ընդիմանուր համակարգի մեջ, ժամանակի գործոնից զատ, պայմանավորված է նաև որոշ արևելագետների, արվեստաբանների ու լեզվաբանների կողմից մի քանի տասնամյակ արդեն մատնանշվող էտրուսկա-վանտոսայան (ուրարտական) մշակութային (ժայռափոր դամբարաններ, ծխական սպասր,

որմնանկարչություն, կնքագործություն, դիցարանության, առասպելարանության և այլն) ընդհանրությունների ու փոխառնչությունների հաճամանքով (Պետրոսյան Ա. 1997 ա, էջ 44-45: Փիլիպոսյան Ա. 1998, էջ 40-41: Բորիս Յ., Մոխով Բ. 1970, էջ 194: ԿԻԷ 1972, էջ 6-7: Նեմերովսկի Ա. 1983, էջ 11, 13-14: Իվանով Վ. 1988: Bugge S. 1890: Montelius O. 1897, էջ 265: Nogara B. 1933: Brandenstein W. 1937, էջ 37: Piganiol A. 1954, էջ 329: Maxwell-Hislop K. 1956: Pallottino M. 1958, էջ 26-52: Piganiol A. 1959: Muhlestein H. 1969: Merhav R. 1991, էջ 226-235): Ավելացնենք նաև, որ մի խումբ ուսումնասիրողների մշակութային վերոհիշյալ նմանությունների, լեզվական առանձին զուգահեռների և Հերոդոտոսի «Պատմության» որոշ փաստերի հիման վրա փորձեր են արել «Էտրուսկ» հորջորջվող էթնիկ տարրի նախնական բնակության վայրը՝ Փոքր Ասիան (Փոյոգիան), Անդրկովկասը կամ էլ Սև ծովի հարավ-արևելյան ափամերձը համարել իսկ նրա տեղաշարժը դեպի Ապենինյան թերակղզի՝ կապել Անդրկովկաս, Հայկական լեռնաշխարհ և Փոքր Ասիա ներխուժած կիմերների և սկյութների բռնի գործողությունների հետ (Մոդեստով Վ. 1904, էջ 9-15: Marr H. 1933, էջ 100: Բօգաևսկի Բ. 1933, էջ 233-236: Ալտեկար Բ. 1935, էջ 214: Միոլեշտեյն Գ. 1938, էջ 49-50: Գործնական Բ. 1980: Նեմերովսկի Ա. 1983, էջ 7-16: Յօհան Ա. 1998, էջ 7):

Հավաքածու թիվ 22. - Քաղաքանյան թերակղզու (Հլուսատան՝ Թեսալիայից հարավ) երկարեղարյան (մ.թ.ա. 1150-650թթ.) հնամարդարանական նյութ (Angel L. 1944, էջ 363)\*:

Եվրասիական հնամարդարանական հավաքածուների ընտրույթում այս նյութի ներգրավումն ու համակարգված ուսումնասիրությունը կարող է էթնիկական տեղաշարժերի իրազործման հաջորդական փուլերի և ուղղածության որոշակի դրվագների պարզաբնակ: Առավել ևս, որ որոշ ուսումնասիրողները Քալկանյան թերակղզու բնակիչների մի մասին առաջավորասիական ծագում են վերագրում, այդ վարկածը հիմնավորելով նյութական և հոգևոր մշակույթի նկատելի զուգահեռներով (Բյուդմիր Մ. 1950: Իվանով Վ. 1975, էջ 12-14: Գինդին Լ. 1976: Իվանով Վ. 1979, էջ 1-8: Նեմերովսկի Ա. 1983, էջ 16-28: Բարտոնեկ Ա. 1991, էջ 232):

Մրանք են հնամարդարանական այն հավաքածուները, որոնք ներգրավվել են համեմատական վերլուծության մեջ: Մեկ անգամ ևս նշենք, որ վերոհիշյալ 22 հավաքածուներից կազմված ընտրույթն ամփոփում է մասնագիտական գրականության մեջ հրատարակված Եվրասիական տարածաշրջանի մ.թ.ա. II հազարամյակի վերջին քառորդի - մ.թ.ա. I հազարամյակի առաջին կեսի հնամարդարանական տեղեկատվության հիմնական մասը: Վերջինիս հավաքագրման նպատակը՝ վանտոսայան գանգարանական հավաքածուի ձևարանական բնութագրի և պատմա-մարդարանական գնահատականի համար համապատասխան պատմա-աշխարհագրական ֆոնի և վիճակագրական մասշտաբի ստեղծումն է:

Նշված հավաքածուների վիճակագրական համադրությունն իրագործվել է կոմպոնենտային մերոդի կիրառությամբ (մերոդի մանրամասն նկարագիրը տես, օրինակ, Ալեքսեև Բ., Տրубնիկով Օ. 1984, էջ 33-37), գանգասկավառակի և դիմային կմախքի ուր կարևորագույն հատկանիշներով (1, 8, 17, 9, 45, 48, 55, 54): Վերջիններս բնորոշում են գանգարանական հավաքածուի ձևարանական ամենաընդհանուր ձևարանական առանձնահատկությունները: Այս հատկանիշների համեմատական վերլուծությունը հնարա-

\* Այսուհետև ուսումնասիրության վիճակագրական աղյուսակների և գրաֆիկական պատկերների մեջ հնամարդարանական հավաքածուների անվանումների փոխարեն կօգտագործվեն դրանց թվային ցուցիչները:

Վորություն է ընձեռում տարբերակել զանգվածեղ և նրբակազմ, լայնադեմ և նեղադեմ, երկարադեմ և ցածրադեմ, դրիխոնկրան և բրախիկրան մարդաբանական տիպերը:

Համեմատական վերլուծությունների համար օգտագործվել են միայն հավաքածուների մեջ մտնող տղամարդկանց զանգերի միջինացված ցուցանիշները: Ութ հատկանիշների միջևսբային համահարաբերակցությունների գործակիցների կոմպոնենտային վերլուծությունից ստացված առաջին ինտեգրալային բնութագիրը (աղ. V)՝ ներկայացված է միայն դրական արժեքներով, ինչից կարելի է եզրակացնել, որ I կոորդինատային առանցքի մեծ ցուցանիշները համապատասխանում են զանգերի խոշոր չափեր ունեցող խմբերին, և ընդհակառակը, փոքր ցուցանիշները՝ նրբակազմ խմբերին: II կոմպոնենտի հատկանիշների վոփոխական բնույթից հետևում է, որ II կոորդինատային առանցքի մեծ արժեքները բնութագրում են դրիխոնկրան, բարձր գանգասկավառակով և դիմային կմախրով, նեղադեմ խմբերի, իսկ փոքր արժեքները՝ ճիշտ հակառակ ձևաբանական նկարագրերը:

Զննարկվող տարածաշրջանի երկարեղարյան գանգաբանական հավաքածուների տեղադրումը քառաշաբի տաքսոնոմիական հարթության I և II կոորդինատային առանցքների տարածքում հնարավորություն չի ընձեռում նյութը խմբավորել ըստ մշակութային և տարածքային ընդհանրությունների: Գրաֆիկական պատկերի (աղ. IX, նկ. 1) շրջա հարթություններից յուրաքանչյուրում, համապատասխան I և II ինտեգրալային բնութագրերի՝ բևեռանում են իրար հակադիր ձևաբանական նկարագրեր ունեցող հինգ հավաքածուներ: Դրանք Սիալկ B-ի (թիվ 15) խոշորակազմ, բրախիկրան և Հասանլու IV-ի (թիվ 17) չափազանց նրբակազմ, դրիխոնկրան (-4-ից +4 արժեքների շառավղից դուրս), ապա Հյուսիսային Կովկասի (թիվ 8) երկարադեմ և Ալիշար V-ի (թիվ 20) ու Սինգեշաուրի (թիվ 5) ցածրադեմ (-4, -3 և +3, +4, արժեքների շառավղով) հավաքածուներն են: Համեմատական ընտրույթի մնացած 17 խմբերն ընդմիջարկվում են վերը թվարկված դիտարկումների սահմաններում (-2, +2 և -1, +1 արժեքների սահմաններում): Գրաֆիկական պատկերի վրա վանտոսայան զանգաբանական հավաքածուն ամենամուտն է տեղավորված կոորդինատների կենտրոնին (աղ. IX, նկ. 1): Այսինքն իր ձևաբանությամբ, սույն համեմատական տիրույթում, այն զբաղեցնում է միջուկային ամենաշեղոք դիրքը: Նրա շուրջն ամենամուտը (-1-ից +1 արժեքների շառավղով) համախմբվում են սկյութական (թիվ 9, 10, 11, 13), Սևանի ավազանի վաղերկարեղարյան (թիվ 2), Էտրուսկյան (թիվ 21) և Նիպաուրի (թիվ 19) գանգաբանական ժողովածուները: Նշենք, որ կլաստերացման պարագայում վանտոսայան հավաքածուն խմբավորման այլ տարբերակ է դրսերում, առավելապես մոտ տեղավորվելով Սևանի ավազանի (թիվ 2) Վաղերկարեղարյան խմբին, ապա միավորվելով Հարավային Օսերիայի՝ Թղիի (թիվ 7) և Սինգեշաուրի (թիվ 6) համապատասխան նյութերի հետ:

Կլաստերային պատկերի վրա (աղ. IX, նկ. 2) հատուկ ուշադրության է արժանի 14-րդ քայլում առանձնացրած հնամարդաբանական հավաքածուների խումբը, որն իր մեջ ներառում է Հայաստանի տարածքի վաղերկարեղարյան (թիվ 2, 3), վանտոսայան (թիվ 1), հարավկրացական (թիվ 4), Սինգեշաուրի «մեջքի վրա պառկած» թաղումներով (թիվ 6), ինչպես նաև սկյութական (թիվ 10, 13) հավաքածուները: Այսինքն, ըստ էության, ստացվում է ձևաբանորեն մոտիկ և տարածական առումով աշխարհագրական մեկ միավորի մեջ՝ Անդրկովկասում, խմբավորվող հնամարդաբանական հավաքածուների ընտրույթ, որին հարում են սկյութական նյութերը:

Թվարկված գանգարանական հավաքածումերի նմանության ցուցիչների մինիմալ և մաքսիմալ արժեքների տրամաշափը քառաշաբի կարգարանական տարածքում տատանվում է 0,83-ից -8,62-ի միջև: Սա է այն վիճակագրական մասշտաբը, որի սահմաններում կարելի է արժեքավորել համեմատվող միավորների ձևաբանական նմանության կամ տարրերության աստիճանը: Վանտոսայան դամբարաններից հայտնաբերված համահավաք գանգարանական ժողովածուն (թիվ 1), համեմատվող 21 դիտարկումներից, ամենամոտ նմանության ցուցանիշը (1,20) կազմում է Սևանի ավագանի երկարեղարյան հավաքածուի (թիվ 2), ապա (1,61; 1,71) մերձական տափաստանների սկյուրական նյութերի (թիվ 11, 9), Հասանլու 3-րդից (1, 88) հայտնաբերված գանգերի (թիվ 18), Թղիի (թիվ 7) և Հոռոմի (թիվ 3) ժողովածուների (1,92; 1,96) հետ: Այսպիսով, ութ հատկանիշների համակարգում, 21 հավաքածուների տղամարդկանց խմբերի համեմատական վերլուծությունը խնդրո առարկա վանտոսայան գանգարանական ընտրույթի հետ բացահայտում է վերջինիս և Սևանի ավագանի վաղերկարեղարյան ժողովածուի նմանությունը վիճակագրական համադրության բոլոր տարրերակներում:

Ուշագրավ է վանտոսայան, սկյուրական և էտրուսկյան գանգարանական հավաքածուների վիճակագրական մոտիկության և ձևաբանական նմանության հանգանքը:

Տասնչորս հատկանիշների (1, 8, 17, 9, 45, 48, 55, 54, 51, 52, 40, 32, 72, 75/1) համակարգում Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի և Հարավորուսական տափաստանների 13 գանգարանական հավաքածուների տղամարդկանց խմբերի համեմատական վերլուծությունն ավելի ցայտուն է դրսերում ութ հատկանիշների համակարգում վեր հանված, վանտոսայան հնամարդարանական ժողովածուի վիճակագրական նմանությունը սկյուրական հավաքածուների հետ (թիվ 9, 11): Տասնչորս հատկանիշների փոխսաղարձ տատանման բնույթը I կոմպոնենտում, հետևյալ պատկերն ունի (աղ. IV): Գանգասկավառակի խոշոր չափերին համապատասխանում են դիմային կմախքի լայնության, տանձած բացվածքի, ակնակապիճների փոքր չափեր, քրոսկրերի խիստ արտահայտված պրոֆիլավորվածություն և հակառակ ձևաբանական փոխսարարերակցություն՝ գանակավառակի փոքր չափերի դիմքում:

II կոմպոնենտը, որի հատկանիշները ներկայացված են հիմնականում դրական արժեքներով, կարելի է դիտարկել որպես ընդհանուր գանգվածեղությունը կամ նրակազմությունը բնույթագրող՝ «չափի գործոն» դրսերում:

III կոմպոնենտը բացահայտում է գանգասկավառակի, դիմային կմախքի ձևերի և քրոսկրերի պրոֆիլավորվածության աստիճանի կապը: Այսինքն, բրախիկրանության միտումն ուղեկցվում է դիմային կմախքի էվրինիկ կառուցվածքով և քրոսկրերի բույլ պրոֆիլավորվածությամբ: Այսպիսով, հիմնական ինտեգրալային ձևաբանական նկարագրերը հնարավորություն են ընձեռում տարրերակել նրբակազմ և զանգվածեղ, երկարադեմ և ցածրադեմ, դոլիխոկրան և բրախիկրանության միտում ինչպես նաև խիստ ու չափավոր քրոսկրերի պրոֆիլավորվածություն ունեցող գանգարանական բնութագրերը:

Ուշագրավ է, որ տասնչորս հատկանիշների համակարգում կոմպոնենտային մեթոդը Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի և Հարավորուսական տափաստանների 13 գանգարանական հավաքածուների վիճակագրական վերլուծությունը կոորդինատների դաշտում խմբավորում է վերոհիշյալ ընտրույթն ըստ պատմա-տարածքային առանձնահատկությունների: I և II ինտեգրալային նկարագրերի համադրումը (աղ. X, նկ. 1)

հնարավորություն է ընձեռում դրական արժեքների դաշտում իրար բավական մոտ և, այսուհանդերձ, չընդմիջարկվող «կղզյակներով» առանձնացնել Հայաստանի՝ Սևանի ավազանի (թիվ 2) ու Հոռոմի (թիվ 3) խոշորակազմ և Վրաստանի (թիվ 4) ու Հարավային Օսերիայի (թիվ 7) համեմատաբար նեղադեմ համաժամանակյա երկարեղարյան հավաքածուները: Վերոհիշյալ հավաքածուների սփոման տիրույթին հարել է նաև ստորին-դնեարովյան (Նիկոպոլ) սկյութական հավաքածուն (թիվ 13): Ընդհանուր սահմանի մեջ է ամփոփվել նաև սկյութական ընտրույթը (թիվ 9, 10, 11, 12, 14): Խոկ Կորանի (թիվ 8) դոլիխոնորք, Մինգեշառուի խիստ նրբակազմ (թիվ 5) և ցածրադեմ (թիվ 6) ժողովա-ծուները ընեռացել են:

I և III ինտեգրալային նկարագրերի համադրության դեպքում (աղ. X, նկ. 2), քե-ռացված տարբերակների դիրքը մնում է անփոփոխ, իսկ սկյութական և Հայաստանի տարածքի ժողովածուները պարզապես փոխվում են իրենց տարածման դաշտերով: I և II, ապա I և III կոմպոննենտների տարածքում 13 զանգարանական հավաքածուների տղամարդկանց խմբերի համադրությունը բացահայտում է վանտոսայան (թիվ 1) և սկյութական հավաքածուների (թիվ 9, 11) նմանությունն ըստ ընդհանուր նրբակազմ ձևաբանական նկարագրերի: Երկու դեպքում էլ վանտոսայան հավաքածուն կոռոդի-նատների տարածքում ունի իր կայուն և անփոփոխ դիրքը փոքր չափեր բնութագրող բացասական արժեքների դաշտում՝ I և II գործոնների համադրության ժամանակ խմբա-վորելով սկյութական, իսկ I և III գործոնների դեպքում՝ Հայաստանի վաղերկաթե-դարյան և Թղիի նյութերի հետ: Ձևաբանական նմանության հիմքի վրա վեր հանված այս խմբավորումը ցայտուն արտահայտված է կլաստերային պատկերի վրա (աղ. X, նկ. 3):

Այսպիսով ութ, ապա տասնչորս հատկանիշներով իրագործված մարդաբանական ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել վանտոսայան զանգարանական հավաքա-ծուի և նրան անմիջապես նախորդած Սևանի ավազանի վաղերկաթեղարյան հնամարդաբանական նյութի ձևաբանական նմանությունը մի կողմից, և միևնույն ժամանակ վանտոսայանի ու սկյութական հավաքածուներինը՝ մյուս կողմից: Ըստ որում, եթե առաջին դեպքում նմանության փաստն աշխարհա-տարածական միևնույն սահման-ներում համատեղ երկարատև բնակության և պատմա-մշակութային իրողությունների ու գործընթացների միևնույն խառնարանում ձևավորվելու արդյունք է, ապա երկրորդ դեպ-քում, այդ ամենի հետ միասին չի բացառվում նաև հարավից հյուսիս ուղղվածություն ունեցած երիկական տեղաշարժի հանգամանքը: Անշուշտ, վերջին ենթադրությունն ունի թեական բնույթ, անմիջականորեն առնչվում է սկյութաբանության ոլորտին և՝ վեր-լուծական ու ապացուցային հատուկ մակարդակ է պահանջում: Սույն աշխատության մեջ մենք պարզապես հարկ ենք համարում ընթերցողի ուշադրությունը իրավիրել համեմատական վերլուծության արդյունքում, ինքնաբերաբար ճյուղավորված և վերոհիշյալ պատկերը ներկայացնող վիճակագրական տվյալների վրա, որոնք նույն խնդրի քննության աղբյուրագիտական, մշակութաբանական և մասամբ նաև հնամարդաբանական մակարդակներում արդեն, մասնագիտական գրականության մեջ, ունեն իրենց հիմնա-վորումները (Ակրտչյան Ռ., Փիլիպոսյան Ա. 2001, էջ 383-394: Ելինիցկի Լ. 1949, էջ 18: Արտամոնով Մ. 1950, էջ 38: Դյակոնով Ի. 1956, էջ 244: Արտամոնով Մ. 1974: Ելինիցկի Լ. 1977, էջ 24: Տեխով Բ. 1980, էջ 18-19: Բարցեվա Տ. 1981: Դօվատուր Ա., Կալլիստով Դ., Շիշովա Ի. 1982, էջ 170: Նեյխարդ Ա. 1982: Պոգրեբովա Մ. 1984: Կոկлина Ի. 1985, էջ 55-57: Եսայն Ս., Պոգրեբովա Մ. 1985: Ագբունով Մ. 1989: Մկրտչյան Ր., Պիլիպոսյան Ա. 1999, էջ 110-111):

ՀԱՅՈՒՄԱԿԱՆ ԱՊՅՈՒՍԱԿՆԵՐ

**ԱՊՅՈՒՍԱԿ I**

**Օգտագործված գանգարանական հավաքածուները**

№/№	Հավաքածուի անվանումը Название коллекций Collections	Թվագրություն (մ.թ.ա.) Датировка (до н.э.) Data (B. C.)	Հեղինակ Автор Author
1.	Վանտոսպանյան (Ուրարտական) (Հայաստան) Вантоспская (Урартская) (Армения) Vantospian (Urartian) (Armenia)	VIII-VI	Սկրտչյան Ռ., Ավետիսյան Պ. 1995
2.	Սևանի ավազան (Հայաստան) Бассейн оз. Севан (Армения) Lake Sevan basin (Armenia)	XI-IX	Հրատարակում է առաջին անգամ
3.	Հորոմ (Հայաստան) Ором (Армения) Horom (Armenia)	XI-IX	Հրատարակում է առաջին անգամ
4.	Արևելավրացական հարքավայր Восточногрузинская равнина Eastern lowland Georgia	XI-IX	Աբդուշeliშvili M., 1988
5.	Մինգեշաւր I (Ալրբեզան) Мингечаур I (Азербайджан) Mingechaur I (Azerbaijan)	X-VIII	Կաсимова Р., 1960
6.	Մինգեշաւր II (Ալրբեզան) Мингечавур II (Азербайджан) Mingechaur II (Azerbaijan)	VII-V	Կաсимова Р., 1960
7.	Թղի (Հարավային Օսեթիա) Тли (Южная Осетия) Tli (Southern Ossetia)	X-VIII	Աբդուշeliშvili M., 1988
8.	Կոբան (Հյուսիսային Կովկաս) Кобан (Северный Кавказ) Koban (Northern Caucasus)	XI-VII	Алексеев В., 1974
9.	Սկիութեր (Մերձսևովյան տափաստաններ) Скифы (Причерноморские степи) Scythians (Black Sea Coast Steppes)	VII-VI	Кондукторова Т., 1979
10.	Սկիութեր (Միջին Մերձնեպրյան շրջան) Скифы (Среднее Приднепровье) Scythians (The middle reaches of Dniepr)	VII-VI	Кондукторова Т., 1979
11.	Սկիութեր (Նիկոլաևկա-Կազակունք, Չոլոսայա բալկա) Скифы (Николаевка-Казацкое, Золотая Балка) Scythians (Nikolaevka-Kazatskoe, Zolotaya balka)	V-IV	Кондукторова Т., 1979
12.	Քոչվոր սկիութեր (Մերձսևովյան շրջան) Скифы кочевники (Причерноморье) Nomad Scythians (Black Sea Coast)	VI-IV	Դեբեց Գ., 1948

**Աղյուսակ I**  
(շարունակություն, продолжение, continuation)

13.	Ջոշփոր սկյութներ (Նիկոպոլ)	VI-IV	Դեբեց 1948
14.	Հողագործ սկյութներ (Միջին Սերմանիայի ջրահան)	VI-IV	Դեբեց 1948
15.	Սիկին սկիֆներ (Իրանական սարահարք)	IX-VII	Vallois H.-V., 1940
16.	Հասանլու V (Իրանական սարահարք)	XII-X	Rathbun 1972
17.	Հասանլու IV (Իրանական սարահարք)	X-VIII	Rathbun 1972
18.	Հասանլու III (Իրանական սարահարք)	VII-V	Rathbun 1972
19.	Նիպպոր (Միջագետք)	IX-VI	Swindler 1956
20.	Ալիշար (Փոքր Ասիա)	XI-VI	Angel L., 1951
21.	Էտրուսկներ (Ապենինյան թերակղզի)	VII-IV	Angel L., 1951
22.	Հյուսիսային Հունաստան	XII-VII	Angel L., 1951
	Северная Греция		
	Northern Greece		

## ԱԴՅՈՒՏԱԿ II

Գեղիովտի դամբարանից հայտնաբերված գաճագերի անհատական տվյալները

№ ըստ Մարտին ի	Հատկանշի անվանումը	♂ 1	♂ 2	♀ 3
1	Երկայնական տրամագիծ	191	185	178
8	Լայնական տրամագիծ	142	134	136
17	Բարձրության տրամագիծ	130	136	131
5	Գանգի հիմքի երկարություն	99	97	95
9	ճակատոսկրի նվազագույն լայնություն	95	95	97
10	ճակատոսկրի առավելագույն լայնություն	117	116	120
11	Գանգի ելնչի լայնություն	119	123	115
12	Ծոծրակոսկրի լայնություն	114	109	102
45	Այտոսկրային տրամագիծ	125	132	119
48	Դիմային վերին բարձրություն	-	70	-
43	Դիմային վերին լայնություն	100	104	102
46	Դիմային միջին լայնություն	88	87	89
60	Ավելյար ալեղի երկալություն	-	57	-
61	Ավելյար ալեղի լայնություն	-	54	-
55	Տնծածն բացվածքի բարձրություն	48	49	-
54	Տանծածն բացվածքի լայնություն	27	26	-
51	Ակնակապիճի լայնություն	41.5	41	40
52	Ակնակապիճի բարձրություն	32	31	33
<77	Նազոմայար անկյուն	138	144.2	140.6
< ZM	Զիգոմաքսիլյար անկյուն	132.5	122.9	-
	Քրալմատ (ըստ Մարտինի)	3	3	0.5
	Վելունքային աղեղ	1	1	0.5
8 : 1	Գանգի գործակից	74.3	72.5	76.5
48 : 45	Դիմային կմաքլսի գործակից	-	53.0	-
54 : 55	Տանծածն բացվածքի գործակից	56.3	53.1	-
52 : 51	Ակնակապիճի գործակից	77.1	75.6	82.5

## ԱԴՅՈՒՏԱԿ III

Գեղիովտի դամբարանի հնամարդաբանական նյութի սեռատարիքային տվյալները

№	Սեռ	Տարիք	№	Սեռ	Տարիք	№	Սեռ	Տարիք
1	♂	50-60	4	♂	30-35	7	-	1-2 ամս.
2	♂	45-55	5	♀	25-30	8	-	1-2 ամս.
3	♀	20-25	6	-	2-2.5	9	-	2-3 ամս.

## ԱԴՅՈՒՏԱԿ IV

Եվրասիայի մ.թ.ա. II հազարամյակի վերջի – մ.թ.ա. I հազարամյակի գանգարանական հավաքածուների միջինացված տվյալները (Ծ)

Հավաքածուներ	1		2		3		4	
	X	N	X	N	X	N	X	N
1	186.4	9	190.0	34	190.3	18	194.2	26
8	139.3	10	139.4	36	140.8	17	138.5	15
17	133.6	8	133.7	30	136.9	11	138.8	9
9	96.0	9	97.2	34	98.5	17	99.2	27
45	129.4	7	132.3	34	134.4	15	128.1	6
48	75.4	5	74.5	28	74.4	9	70.9	10
55	52.0	6	53.4	31	52.5	10	53.4	11
54	25.2	5	24.9	31	23.8	11	24.4	15
51	41.8	6	41.8	33	41.5	8	42.4	10
52	33.7	6	33.4	32	33.7	10	34.1	11
40	98.2	7	99.3	18	101.3	8	98.7	7
32	77.6	6	80.0	25	76.1	8	83.0	14
72	84.8	5	86.5	24	85.8	6	87.3	9
75/1	32.0	2	34.9	17	36.3	3	30.6	7

Հավաքածուներ	5		6		7		8	
	X	N	X	N	X	N	X	N
1	182.7	3	189.5	10	189.3	10	190.8	10
8	137.0	3	139.3	9	137.7	10	141.6	11
17	125.0	2	137.1	7	133.4	5	139.8	6
9	95.3	3	98.2	9	98.6	7	101.1	11
45	131.0	2	135.3	6	132.3	7	123.6	5
48	68.5	2	73.7	9	75.7	6	75.5	2
55	50.5	2	55.2	10	55.3	6	51.0	4
54	25.0	2	26.5	11	24.0	5	22.8	4
51	43.5	2	43.9	7	41.8	6	40.9	5
52	36.5	2	35.1	8	32.5	6	34.4	5
40	98.5	2	104.7	7	103.0	4	92.1	1
32	79.0	2	79.7	7	78.3	6	81.5	2
72	85.0	2	87.4	5	86.3	7	86.0	2
75/1	31.0	1	29.0	3	35.5	2	36.5	2

**ԱՂՅՈՒՄԱԿ 4 (շարունակություն, продолжение, continuation)**

Հավաքածումներ	9		10		11		12	
	X	N	X	N	X	N	X	N
1	186.9	28	191.6	10	185.5	89	188.2	9
8	140.5	27	135.5	10	139.6	90	142.8	9
17	134.1	18	137.6	6	134.0	72	137.2	9
9	97.7	30	97.3	9	96.2	92	97.9	9
45	135.5	25	133.2	6	133.0	88	137.1	7
48	72.1	26	71.3	6	71.1	89	69.5	8
55	51.8	25	51.2	6	51.2	89	49.4	7
54	25.2	25	25.3	7	24.8	87	25.0	7
51	42.5	19	40.2	6	41.3	89	41.7	8
52	33.3	28	31.5	6	32.9	89	31.1	8
40	97.7	15	96.6	5	96.5	72	97.0	4
32	81.7	20	82.3	6	81.2	83	-	-
72	85.3	21	85.8	6	85.6	79	-	-
75/1	32.7	21	33.2	7	32.5	62	-	-

Հավաքածումներ	13		14		15		16	
	X	N	X	N	X	N	X	N
1	190.9	9	189.2	24	182.1	10	191.3	4
8	139.5	8	136.8	24	150.2	10	138.0	4
17	138.3	6	135.8	18	134.9	7	134.0	2
9	96.5	8	96.0	24	101.0	10	97.0	3
45	136.5	6	132.2	22	137.4	9	133.3	4
48	72.4	8	69.1	22	73.6	9	67.7	3
55	51.3	7	49.6	22	54.3	8	53.0	3
54	24.7	7	25.8	22	26.6	8	28.0	3
51	42.6	8	41.0	22	-	-	-	-
52	32.1	8	31.0	22	-	-	-	-
40	99.2	6	97.5	17	-	-	-	-
32	85.7	6	84.0	21	-	-	-	-
72	86.7	6	86.1	21	-	-	-	-
75/1	34.9	8	32.6	18	-	-	-	-

**ԱԴՅՈՒԽԱԿ Կ (շարունակություն, continuation)**

Հավաքածումներ	17		18		19	
	X	N	X	N	X	N
1	188.8	34	187.2	6	193.7	23
8	132.3	28	135.4	5	136.9	22
17	135.9	11	133.3	3	136.7	19
9	90.0	33	93.0	2	96.7	9
45	121.0	18	126.7	3	133.3	22
48	69.6	28	73.8	5	71.3	23
55	51.8	30	53.2	5	53.6	22
54	23.1	29	24.0	2	26.7	24

Հավաքածումներ	20		21		22	
	X	N	X	N	X	N
1	186.5	4	185.0	26	184.0	25
8	132.4	4	143.0	27	141.8	25
17	124.0	1	135.5	19	133.7	22
9	99.7	3	96.6	5	95.3	19
45	127.7	3	133.1	17	132.5	19
48	68.8	2	70.7	17	68.0	19
55	50.5	2	51.5	16	50.3	20
54	26.0	2	24.5	15	24.4	20

**ԱԴՅՈՒԽԱԿ Վ**

Եվրասիայի մ.թ.ա. II հազարամյակի վերջի - մ.թ.ա. I հազարամյակի գանգարանական հավաքածումների I-IV գլխավոր կոմպոնենտների արժեքները  
ըստ 8 հատկանիշների ( $\delta$ )

Կոմպոնենտ	%	1	8	17	9	45	48	55	54
F I	32.0	0.190	0.743	0.535	0.780	0.613	0.592	0.547	0.231
F II	24.7	0.662	-0.368	0.534	-0.131	-0.600	0.525	0.300	-0.615
F III	16.2	0.645	-0.445	0.073	-0.035	0.179	-0.343	0.242	0.682
F IV	13.2	0.255	0.194	0.559	0.045	0.162	-0.379	-0.662	-0.171

## ԱՂՅՈՒՍԱԿ VI

Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի և Հարավուսական տափաս-տաճների  
մ.թ.ա. II հազ. վերջ – մ.թ.ա. I հազ. գանգարանական հավաքածուների I-IV գլխավոր  
կոմպոնենտների արժեքները ըստ 14 հատկանիշների ( $\delta$ )

Կոմպոնենտ	%	1	8	17	9	45	48
F I	28.3	0.687	0.265	0.768	0.616	-0.436	0.337
F II	21.5	0.562	0.229	0.444	0.077	0.263	0.502
F III	20.3	0.284	-0.613	0.228	0.289	0.368	-0.663
F IV	10.7	0.087	0.200	0.080	0.212	-0.613	-0.236

55	54	51	52	40	32	72	75/1
-0.179	-0.622	-0.745	-0.524	-0.533	0.346	0.199	0.672
0.887	0.103	0.397	0.073	0.731	-0.125	0.775	-0.081
-0.243	0.624	-0.045	-0.535	0.043	0.755	0.424	-0.439
-0.078	-0.116	0.377	0.618	-0.309	0.243	0.311	-0.424

## ԱՂՅՈՒՍԱԿ VII

Եվրասիայի մ.թ.ա. II հազ. վերջ - մ.թ.ա. I հազ. գանգարանական հավաքածուների  
կոորդինատները քառաչափ կարգարանական տարածքում ( $\delta$ )

Խմբեր Կոորդ.	1	2	3	4	5	6	7	8
I	-0.012	0.770	1.362	0.707	-2.502	1.956	1.243	1.008
II	0.329	0.665	0.944	1.842	-2.158	0.137	1.344	2.555
III	-0.829	0.017	-0.582	0.919	-0.790	1.204	-0.297	-1.794
IV	-0.916	-0.864	0.307	0.603	-0.894	-1.089	-1.807	0.992

## ԱՂՅՈՒՄԱԿ VІІ (շարունակություն, продолжение, continuation)

Խմբեր Կողմ.	9	10	11	12	13	14	15
I	0.580	-0.067	-0.436	0.475	0.701	-1.095	3.393
II	-0.821	0.567	-0.738	-1.226	0.344	-0.597	-2.380
III	-0.288	1.084	-0.669	-0.286	0.289	0.783	-1.243
IV	0.064	0.913	0.207	2.111	1.151	1.343	-0.947

Խմբեր Կողմ.	16	17	18	19	20	21	22
I	0.027	-3.684	-1.466	0.645	-2.600	0.150	-1.156
II	-1.260	2.350	1.421	0.504	-1.479	-0.832	-1.471
III	2.697	-0.267	-0.605	2.292	0.619	-1.141	-1.113
IV	-0.048	0.018	-1.319	0.113	-1.228	0.545	0.972

## ԱՂՅՈՒՄԱԿ VIII

Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի և Հարավուսական տափաստանների


մ.թ.ա. II հազ. վերջ - մ.թ.ա. I հազ. գանգարանական

հավաքածուների կոորդինատները քառաչափ կարգաբանական տարածքում (Ծ)


Խմբեր Կողմ.	1	2	3	4	5	6	7
I	-0.988	0.142	0.796	0.913	-4.184	-2.610	0.188
II	-0.880	0.918	0.789	1.565	-2.676	3.638	1.759
III	-1.716	-0.689	-2.122	1.264	-0.784	0.831	-1.186
IV	-0.413	-0.513	-1.323	2.270	1.216	0.921	-1.526

Խմբեր Կողմ.	8	9	10	11	13	14
I	4.063	-0.868	1.099	-0.484	0.737	1.198
II	-0.938	-0.626	-1.092	-1.569	0.699	-1.587
III	-2.265	-0.045	2.071	-0.020	1.424	3.238
IV	1.968	-0.295	-1.300	-0.339	-0.509	-0.156

## ԱՂՅՈՒՄԱԿ IX




Նկ. 1. Եվրասիայի մ.թ.ա. II հազ. վերջ-մ.թ.ա. I հազ. գանգարանական հավաքածուների դիրքը I և II կոռորդինատային առանցքների տարածքում:




Նկ. 2. Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի և Հարավուսական տափաստանների մ.թ.ա. II հազ. վերջ-մ.թ.ա. I հազ. գանգարանական հավաքածուների դենդրոգրամման:

## ԱՂՅՈՒՍԱԿ X




Նկ. 1 Անդրկողվասի, Հյուսիսային Կովկասի և Հարավուսական տափաստանների մ.թ.ա. II հազ. վերջ - I հազ. գանգարանական հավաքածուների դիրքը I և II, ապա I և III կոռորդինատային առանցքների տարածքում:




Նկ. 2 Եվրասիայի մ.թ.ա. II հազ. վերջ - մ.թ.ա. I հազ. գանգարանական հավաքածուների դեմքոգրամման:

ԱՊՅՈՒՍԱԿ XI



Նկ. 1 Գանգ քիվ 2 (տղամարդ 45-55 տարեկան):

- a) Էնալ-ցեմենտային սահմանի և ատամնաբնային եզրի միջև տարածության աճ:
- b) Ատամնաբնային ոսկրի անդաստակային քիթեղի 11, 21, 23-րդ ատամների շրջանի բացվածք:



Նկ. 2 Գանգ քիվ 3 (կին 20-25 տարեկան):

- a) 23-րդ ատամի շրջանի բացվածք:
- b) Ատամների ախտաբանական մաշվածություն:
- c) Ատամնաբնային ոսկրի դիմային հատվածի բացվածություն:
- d) Էնալ-ցեմենտային սահմանի և ատամնաբնի միջև տարածության աճ:

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

### ԹԱՂՍԱՆ ԾԵՍԸ

Վանտոսավի թագավորության ժամանակաշրջանին վերաբերող իրողությունների մեջ իր ուրույն տեղն ունի նաև թաղման ծեսը: Այս ուղղությամբ արված հետազոտությունները (Հմայակյան Ա. 1985, էջ 29-30: Հմայակյան Ա. 1986, էջ 125-129: Հմայակյան Ա. 1990, էջ 78-82: Մելքոնյան Ա. 1995, էջ 28: Եսայան Ա., Բիյագով Լ., Հմայակյան Ա., Կամեցյան Ա. 1995, էջ 58-59: Պուտրովսկի Բ. 1959, էջ 223, 230: Մարտիրոսյան Ա. 1974, էջ 53: Եսայն Ս., Բյայց Լ., Ամայքյան Ս., Կանեցյան Ա. 1991, էջ 19-26) մասնագետներին հնարավորություն են ընձեռել դասդասումներ ու տարրերակումներ կատարել այդ երևույթին վերաբերող և առաջմն բացառապես հնագիտական պեղումների արդյունքներով երևակվող իրողությունների համակարգում: Կոնկրետ նյութի վրա կատարված մեր ուսումնասիրությունները թույլ են տվել արձանագրել, որ վանտոսայան թաղման ծեսը ներառել է կանոնակարգված որոշակի գործողությունների երկու առանձին և ինքնուրույն համակարգեր, որոնցից մեկն անմիջականորեն առնչվել է հանգույցյալի դիակին, իսկ մյուսը՝ դամբարանային կառույցին: Հանգույցյալի դիակին անմիջականորեն առնչվող գործողություններն իրականացվել են երեք հիմնական եղանակներով:

1-ին եղանակ. - դիակում (ինգումացիա): Արարողություն, երբ հանգույցյալի դին անատոմիապես անխաթար վիճակում որոշակի դիակով տեղակայվել է դամբարանում: Նման թաղումներ հայտնի են Էրեբունի բերդամբոցի մոտ՝ «Հաստոցանորմալ» գործարանի բակում բացված դամբարանից, Նորատուսից, Սարուխանից:

2-րդ եղանակ. - դիակիզում (կրեմացիա): Արարողություն, երբ դամբարան են իջեցվել հանգույցյալի այրված դիակի մնացորդները և աճյունը: Նման թաղումներ հայտնի են Երևանի «Ավտոագրեգատ» գործարանի տարածքում բացված դամբարանից, Իգդիրից, Ալիշարից:

3-րդ եղանակ. - դիամասնատում (դեկարնացիա): Արարողություն, երբ դամբարանի տարրեր հատվածներում, իրարից անջատ տեղավորվել են հանգույցյալի մասնատված դիակի բոլոր կտորները կամ դրանց մի մասը միայն: Նման երևոյթը նկատվում է Արտաշավանում և Օշականի թիվ 3, 4, 59 և 62 դամբարաններում:

Վերոհիշյալ երեք հիմնական եղանակներից բխում են կոմբինացված երկու տարրերակներ:

1-ին տարրերակ. - դիամասնատում և դիամասնատման համատեղ կիրառում: Այն բնորոշ է խմբային թաղումներին: Հանգույցյալներից մեկը կամ մի քանիսը բաղկել են անատոմիական առումով ամրողական և անխաթար, իսկ մյուսները՝ մասնատված դիակներով: Այդպիսի թաղումներ են արվել Մեծամորի թիվ 4 և Գեղիովտի դամբարաններում:

2-րդ տարրերակ. - դիամասնատման և դիակիզում համատեղ կիրառում: Սա և բնորոշ է խմբային թաղումներին, երբ նույն դամբարանում դրված են տարրեր անհատների և մասնատված, և այրված դիակների մնացորդներ: Այս երեսույթը նկատվում է ճմինում (Ալթըն թեփե):

Ինչ վերաբերում է դամբարանային կառույցին միտված որոշակի գործողությունների համակարգին, ապա նրանում մեր ուսումնասիրությունները թույլ են տալիս առնձնացնել հիմնական վեց ձևեր:

1. Հիմնահողային խցով դամբարաններում կատարված թաղումներ (Էրեբունի, Լիճ, Ներքին Գետաշեն):
  2. Քարաշար (քարարկղ կամ սալարկղ) խցով (կամ խցերով) դամբարաններում կատարված թաղումներ (Կարճաղբյուր, Մեծամոր, Օշական, Հակո, Արգիշթիխիմիլի, Սարուխան, Նորատուս, Գուսանագյուղ):
  3. Ժայռափոր և քարանձավային (միախուց կամ քազմախուց) դամբարաններում կատարված թաղումներ (Կայալի դերե, Պալու, Մանազկերտ, Թանըրիվերմիշ, Չոկըլելին, Ջյուրդումելիք, Հաջիսելի, Գեղիովիտ, Կալէ Հոդար և այլն):
  4. Դագաղ-սարկոֆագում (կարող են պատրաստված լինել քարից կամ կավից) կատարված թաղումներ (Ծմին-Ալթըն թեփե):
  5. Կարասային թաղումներ (Արգիշթիխիմիլի-Արմավիր):
  6. Աճյունասափորով թաղումներ (Արգիշթիխիմիլի-Արմավիր):
- Վանտոսայան թաղման ժեսին առնչվող դամբարանային կառույցների այս վեց հիմնական ձևերից բխում են ևս վեց կոմբինացված տարրերակներ:
1. Դագաղ-սարկոֆագով թաղում քարաշար խուց (կամ խցեր) ունեցող դամբարանում (Ծմին-Ալթըն թեփե, Օշական՝ դամբարան 25):
  2. Դագաղ - սարկոֆագով թաղում ժայռափոր կամ քարանձավային (միախուց կամ քազմախուց) դամբարանում (Տուշպա-Վան, Դեղելի, Արծկե-Աղիջնազ):
  3. Կարասային թաղում աղյուսաշար խցով դամբարանում (Արգիշթիխիմիլի-Արմավիր):
  4. Աճյունասափորով թաղում քարաշար խուց ունեցող դամբարանում (Լիճ, Ծմին-Ալթըն թեփե, Արծկե-Աղիջնազ, Դեղելի, Երևան՝ «Ավտովագրեգատ» գործարան):
  5. Աճյունասափորով թաղում ժայռափոր կամ քարանձավային դամբարանում (Ալշար, Արծկե - Աղիջնազ, Իգդիր):
  6. Աճյունասափորով թաղում դագաղ - սարկոֆագի մեջ (Արգիշթիխիմիլի):
- Ահա հանգուցյալի դիակին անմիջականորեն ուղղված արարողությունների երեք հիմնական եղանակների և դրանցից բխող երկու կոմբինացված տարրերակների, ինչպես նաև դամբարանային կառույցին բնորոշ վեց հիմնական ձևերի և դրանցից ածանցված վեց կոմբինացված տարրերակների քազմազան համարություններով էլ, մ.թ.ա. IX-VI դարերով քվագրվող հնագիտական հուչարձաններում ներկայանում է վանտոսայան թաղման ժեսը: Ըստ այդմ, Գեղիովիտի դամբարանային համալիրի ստեղծմանը միտված գործողությունների ու արարողությունների ամբողջությունը համապատասխանում է վանտոսայան թաղման ժեսի՝ քարանձավային կառուցվածք ունեցող դամբարանախցերում դիարման և դիամանատման կոմբինացված տարրերակով իրազործված տեսակին:
- Գեղիովիտի քարայր-դամբարանի կառուցվածքային մանրամասների, ինչպես նաև նրա դամբանախցերում հայտնաբերված հնագիտական և հնամարդարանական նյութերի հետազոտությունների արդյունքները հնարավորություն են ընձեռում եզրակացություններ անել նաև վանտոսայան նմանատիպ կոնկրետ թաղումների հետ առնչվող ծիսա-պաշտամունքային ընկալումների, ինչպես նաև վերջիններիս փաստացի դրսերումը հանդիսացող՝ վերը նկարագրված գործողությունների ու արարողությունների որոշակի համակարգի իմաստային ծանրաբեռնվածության մասին: Այս առումով, առաջին

\* Կոմբինացված այս տարրերակը թույլ է տալիս ենթադրել վանտոսայան դամբարանային կառույցների ևս մեկ՝ յոթերորդ հիմնական ձևի գոյությունը, որն առաջմ, որքան մեզ հայտնի է, վկայված չէ համաժամանակյա հնագիտական համալիրներում: Այն պետք է որ ունեցած լինի աղյուսաշար դամբանախուց, ուր (առանց կարասի կամ աճյունասափորի մեջ նախապես ամփոփվելու) տեղադրվել է հանգուցյալի դին:

հերթին, կարևոր է Գեղիովտի քարայր-դամբարանի թաղման երկու սրահների ներքին դասավորության և մարդկային մնացորդների տեղադրության համայնապատկերի վերականգնումը: Տվյալ դեպքում խնդիրը բարդանում է նրանով, որ երկրորդ ավերված դամբարանասրահի և նրանում գետեղված հնագիտական ու հնամարդաբանական նյութերի ճշգրիտ քանակի ու տեղադրության վերականգնումը գործնականում անհնար է: Լավագույն դեպքում, առանց կոնկրետ տեղն ու դիրքը նշելու, կարելի է միայն փաստագրել, որ 1980 թվականին հայտնաբերված հնագիտական իրերի ողջ հավաքածուն և նորածին (1-2 ամսական, մինչև 2 ամսական և 2-3 ամսական) երեք երեխաների գաճագերի մնացորդներն ամփոփված են եղել այս սրահում: Ինչպես նշեցինք վերևում, այս ամենին հնարավոր է ավելացնել մի տվյալ ևս: Կամրջի շինարարների և ականատեսների հաղորդման համաձայն բվարկված նյութերի հետ մեկտեղ, այս սրահի ավերակներում հայտնաբերվել են նաև մեծ քանակությամբ ոսկորներ և հասուն տարիքի մարդկանց չորս գաճագեր, որոնք զյուղի բնակիչների կողմից դրվել են կառուցվող կամրջի հիմքերի մեջ, ծածկվել են քարերով և բետոնապատվել (Փիլիպոսյան Ա., Խաչատրյան Լ. 1995, էջ 83): Որևէ այլ օբյեկտիվ տեղեկություն այս սրահի վերաբերյալ այլևս չունենք:

Քարայր-դամբարանի առաջին՝ առաջին անխաթար՝ պահպանված սրահի 1993 թվականի պեղումներն ավելի արդյունավետ եղան: Թեև XX դարի սկզբին այս քարայրը կացարանի վերածած բնակիչներն անզգուշաբար մասնակիորեն քանդել են սրահի հին մշակութային շերտն ու դուրս քափել հնագիտական նյութի մի մասը, այնուամենայնիվ, վերջինիս չխաթարված մասի պեղումներով հնարավոր եղավ հիմնականում պարզել նրանում ամփոփված հնագիտական և հնամարդաբանական նյութերի նախնական դասավորությունը (աղ. 3): Դամբարանի այս սրահի արևելք կողմնորոշված մուտքից աջ, ժայռախոռոչի հյուսիսային պատի մոտ, դեպի երկրորդ սրահը տանող նեղ անցուղու առջև, մեջքով դեպի վերջինս, կծկված դիրքով, աջ կողքի վրա պառկած էր հասուն տարիքի տղամարդու գրեթե ամբողջապես պահպանված կմախք: Բացակայում էր միայն գաճագը: Տղամարդու կմախքն այնպիսի դիրքով էր տեղավորված սրահում, որ ակներևաբար փակում և, հավանաբար նաև, պահպանում էր դեպի երկրորդ՝ հիմնական սրահը տանող միջանցքը: Նրանից քիչ վեր, արևմտյան պատի հյուսիս-արևմտյան անկյունում քափված էին վերը նկարագրված երեք կավանորների (կարաս, գլանածն իրանով անոք, սափոր) բեկորները: Սրանցից մոտ 1.0մ հեռավորության վրա, առաջին սրահի արևմտյան պատի տակ, քարայրի մուտքի անմիջապես դիմաց, իրար վրա, անկանոն ու խառնիխուն վիճակում գետեղված էին անատոմիական ամբողջություն չունեցող 30-35, 45-55, և 50-60 տարեկան երեք տղամարդկանց, 20-25 և 25-30 տարեկան երկու կանաց և 2,0-2,5 տարեկան մեկ երեխայի գաճագեր ու կմախքների որոշ մնացորդներ: Այս սրահում հայտնաբերված խեցեղենի միևնույն, կոնկրետ ժամանակահատվածին պատկանելը, կավանորների և մարդկային մնացորդների մեկ հարթության վրա հայտնաբերվելու հանգամանքը և վերջիններիս կմախքների դիրքի, դասավորվածության և պահպանվածության մանրամասները թույլ են տալիս ենթարկել, որ քարայրի ներսում (երկու հաղորդակից սրահներում) իրականացվել է միաժամանակյա ակտով արված խմբային քաղում, որի ընթացքում, հիմնական հանգուցյալի մահվան կապակցության՝ սպանվել և նրա հետ միասին նույն քարայր-դամբարանի դամբարանասրահներն են տարվել ուղեկցող անձնակազմի անդամները (տղամարդիկ, կանայք, երեխաներ):

Միաժամանակյա ակտով արված խմբային քաղման այս ծեսը լավ հայտնի է Հայկական լեռնաշխարհի (Արքիկ, Ջեթի, Օսկեհասկ, Հոռոմ, Մակարաշեն, Մեծամոր, Մայնայն, Էլար, Օշական, Եղեգնաձոր, Գոլովինո, Ջրառատ և այլն) և մասնավորապես

Սևանի ավագանի (Լճաշեն, Հայրավանք, Նորատոս, Գավառ, Մոռքի ձոր, Սարուխան, Կարմիրգյուղ, Ներքին Գետաշեն, Չոլաքար, Կարճաղբյուր, Ակունք և այլն) Բրոնզի և Երկարի դարաշրջանների (մ.թ.ա. III-I հազարամյակներ) հնագիտական համալիրներից (Լալայան Ե. 1910, էջ 59-84: Լալայան Ե. 1931, էջ 67-117: Խանզադյան Է., Ակրտչյան Կ., Պարսամյան Է. 1973, էջ 175-176: Փիլիպոսյան Ա. 1989, էջ 25-27: Փիլիպոսյան Ա. 1991, էջ 29-31: Փիլիպոսյան Ա., Հովհաննիսյան Վ. 1991, էջ 33-35: Մանականյան Ա. 1952: Մանականյան Ա. 1957: Մանականյան Ա. 1961: Մանականյան Ա., Տիրացյան Գ. 1964: Մարտirosյան Ա. 1964, էջ 286-288, աղ. XXX, XXXI: Արքայն Գ. 1986, էջ 427-428: Պիլիպոսյան Ա. 1986, էջ 436: Եսայն Ս., Կալանտարյան Ա. 1988, էջ 69-70: Պետրօսյան Լ. 1989, էջ 78-79, աղ. 63: Մկրտչյան Ր., Պիլիպոսյան Ա., Պալիկյան Ա. 1997, էջ 130-141: Պիլիպոսյան Ա., Մկրտչյան Ր. 1997, էջ 103-105: Պիլիպոսյան Ա., Մկրտչյան Ր. 1998, էջ 101-103):

Մեր ուսումնասիրությունները պարզել են, որ Հայաստանի միաժամանակյա ակտով արված վերոհիշյալ խմբային քաղումները գերազանցապես առնչվում են տվյալ հասարակության վերնախավի մեջ մտնող և տոհմի կամ գերդաստանի ներսում սոցիալական բարձր կարգավիճակ ունեցող, տարեց (40 տարեկանից բարձր) տղամարդու՝ «տիրոջ» (նահապետի) բաղման ծիսակատարության հետ, որի ընթացքում սպանվել (գոհարերվել) և նույն դամբանախուցն են իջեցվել ուղեկցող անձնակազմի անդամները: Մարդիկ, որոնց մի մասը, ըստ հնամարդաբանական տվյալների, ամենայն հավանականությամբ, նաև որոշակի արյունակցական կապի մեջ է եղել «տիրոջ» հետ: Ըստ որում, «տիրոջ» (նահապետի) վերադաս և նրան ուղեկցող անձնակազմի ստորադաս կարգավիճակը, այս դամբաններում ընդգծվում է ինչպես դամբանախուցի ներսում հանգույցյալների ունեցած դիրքով («տերը» հիմնականում բաղվել է պառկած, իսկ ուղեկիցները՝ նստած կամ անկանոն իրար վրա ընկած վիճակում), այնպես էլ անձնապես «տիրոջ» (նահապետին) պատկանող տարածքի (այն սովորաբար կազմել է խոյն ներքին մակերեսի գրեթե կեսը և պարունակել բաղման գույքի գերակշիռ և մեծարժեք մասը) և ուղեկիցների համար առանձնացված հատվածի (որը գրեթե գուրկ է գույքակազմից և հիմնականում նստած կամ խառնիխուուն իրար վրա քափված մարդկային կմախքներ ու դրանց մասնատված անդամներն է պարունակում) առկայությամբ (Փիլիպոսյան Ա., Ակրտչյան Ռ. 1998, էջ 66-67: Մկրտչյան Ր., Պիլիպոսյան Ա., Պալիկյան Ա. 1997, էջ 130-141: Պիլիպոսյան Ա., Մկրտչյան Ր. 1997, էջ 103-105: Պիլիպոսյան Ա., Մկրտչյան Ր. 1998, էջ 101-103): Հայաստանում և մասնավորապես Սևանի ավագանում Բրոնզի և Երկարի դարաշրջաններում (մ.թ.ա. III-I հազարամյակներ) տարածված միաժամանակյա ակտով խմբային քաղումների վերոհիշյալ երևույթի ուսումնասիրությունը հնարավորությունը է ընձեռում այս առումով որոշակի ենթադրություններ անել նաև Գեղիովսի քարայր-դամբանական իրականացված խմբային բաղման վերաբերյալ:

Խնդրո առարկա դամբանում իրար հետ հաղորդակցված երկու սրահների գոյության փաստը, սրահներից երկրորդում հնագիտական նյութի գերակշիռ մասի տեղադրությունը, իսկ առաջինում՝ մուտքն ու սրահներն իրար կապող անցուղին հսկող տղամարդու և նրանից քիչ հեռու խառնիխուուն իրար մոտ ընկած մարդկային գանգերի մնացորդների առկայությունը բույլ են տալիս ենթադրել, որ այս դեպքում ևս գործ ունենք տվյալ հասարակության մեջ սոցիալական ընդգծված կարգավիճակ ունեցող անհատի բաղման երևույթի հետ, որի ժամանակ սպանվել և ժայռափոր դամբանարահներն են տարվել անդրաշխարհի նրա ուղեկիցները: Ցավոք, ավերված երկրորդ սրահից հայտնաբերված հասուն տարիքի անձանց կմախքների մասերի և չորս գանգերի կորուստն անհնարին է դարձնում այդ սրահում ամփոփված անհատների սեռա-տարիքային բնո-

բոշումների իրականացումը։ Կարելի է միայն ենթադրել, որ վերոհիշյալ չորս անձանցից մեկը, ամենայն հավանականությամբ, հանդիսացել է քարայր-դամբարանի տերը, իսկ նոյն սրահի փլատակներից հայտնաբերված երկանիվ մարտակառքի, կապարծի, ակինակ-դաշույնի, երկարե նիզակների, ծիասանձերի և շքեղ կահույքի մնացորդներն ակներևաբար վկայում են, որ վերջինս եղել է հասուն տարիքի տղամարդ և անկասկած՝ տվյալ հասարակության սոցիալական սանդղակի վերին աստիճանին կանգնած անձնավորություն։ Վերը նշված նյութական մշակույթի գոտածոներից զատ, այստեղ հասուն տարիքի տղամարդու՝ «տիրոջ» գոյությունն է վկայում նաև երեք նորածին երեխաների զոհաբերման փաստը։ Մանրամասների թերևս ոչ պատհական գուգադիպությամբ, գրեթե նոյն տարիքի երեք նորածիններ են զոհաբերվել նաև Սևանի ավազանի Ներքին Գետաշեն գյուղի, մ.թ.ա. XVI-XV դարերի սահմանագծով թվագրվող թիվ 21 դամբարանի խմբային քաղման «տիրոջ»՝ մոտ 50-ամյա տղամարդու (նահապետի) ուռերի մոտ (Մկրտչյան Բ., Պալուկյան Ա. 1997, էջ 130-141)։ Հանգամանք, որ գալիս է մեկ անգամ ևս հաստատելու Գեղիովտի քարայր-դամբարանում սոցիալական քարձոր կարգավիճակ ունեցող հասուն տարիքի տղամարդու՝ «տիրոջ» ու նրան ուղեկցող անձնակազմի միաժամանակյա ակտով արված խմբային քաղման փաստը և մատնանշելու ծիսա-պաշտամունքային ընկալումների ու դրանց փաստացի դրսերումնը հանդիսացող արարողությունների վաղուց մշակված որոշակի այն համակարգի երկարակեցությունը, որ նկատվում է այս տարածաշրջանում։

Եթե թվարկված հճագիտական համալիրները, որպես նյութական մշակույթի կոնկրետ դրսերումներ, բույլ են տալիս փաստագրելու Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. III-I հազարամյակներում իրագործված միաժամանակյա ակտով խմբային քաղումների և մասնավորապես Գեղիովտի քարայր-դամբարանի արարողակարգի առանձնահատկությունները, ապա գրավոր սկզբնադյուրներն ու ժողովրդական քանակոր զրույցները, իրենց հերթին, հնարավորություն են ընձեռում վերհանելու այդ երևույթի հետ կապված ծիսա-պաշտամունքային ընկալումների ու պատկերացումների համակարգն, ինչպես նաև պարզաբանելու նրանցից յուրաքանչյուրի (կամ ամեն դեպքում գոնե դրանց մի մասի) բովանդակությունն ու խմաստային ծանրաբեռնվածությունը։ Այս առումով, կոնկրետ Գեղիովտի քարայր-դամբարանի քաղման ծեփի ուսումնասիրության համար առավել տեղեկատվական ու կարևոր են հայոց դյուցազնավեպում Փոքր Սիերի և հայ պատմիչների (Մովսես Խորենացի, Եզնիկ Կողբացի, Վարդան Վարդապետ, Վանական Վարդապետ, Գրիգոր Խոյաբեցի, Կիրակոս Վարդապետ Արևելցի, Գրիգոր Անավազցի և այլոք) մոտ բազմիցս հիշատակվող Արտավազդ-Շիդարի մասին առասպելները։ Ըստ որում, երկու առասպելների միջև նկատվող ակնառու նմանությունները վաղուց արդեն ընդգծվել և ուսումնասիրության աղբյուր են հանդիսացել հայ առասպելաբանության մեջ (Սասնա ծուեր 1936: Երեջակյան Ն. 1980, էջ 35-36: Հարությունյան Ս. 1981, էջ 645: Արեդյան Ս. 1985, էջ 185 - 197: Հարությունյան Ս. 1987, էջ 40-42, 75-76: Պետրոսյան Ս. 1997, էջ 112-116: Պետրոսյան Ս. 1997ա, էջ 32-33: Հարությունյան Ս. 2000, էջ 178: Ղազիյան Ս. 2001, էջ 134-138: Օրբելի Ի. 1956: Արդյունյան Ս. 1992, էջ 106: Արդյունյան Ս. 1992ա, էջ 160):

Չանդրադառնալով վերոհիշյալ երկու առասպելների, ինչպես նաև դրանցից յուրաքանչյուրի բազմաթիվ տարբերակների համակողմանի ուսումնասիրությանը, որն, ըստ Էռիքյան, դուրս է այս աշխատանքի շրջանակներից, կանգ առնենք միայն առասպելների այն դրվագների ու մանրամասների վրա, որոնք գրեթե նույնական են և Փոքր Սիերի, և Արտավազդ - Շիդարի համար, ու, մեր կարծիքով, ընդհանրության եզրեր են մատնանշում մի կողմից վերջիններիս կերպարների ու վարքագծի, մյուս կողմից՝ Գեղ-

հովտի քարայր-դամբարանի (և լեռհանրապես Հայկական լեռնաշխարհի մյուս ժայռակերտ դամբանական կառույցների) հետ առնչվող ծիսա-պաշտամունքային ընկալումների միջև։ Այս առումով, եթե ի մի բերենք Փոքր Սիերին և Արտավազդ-Շիդարին վերաբերվող տեղեկատվությունը, կարելի է արձանագրել, որ երկուսն էլ ուժեղ ու քաջ, քայլ միևնույն ժամանակ քարդ ու հակասական, իրենց մեջ քարու և չարի երկվությունը կրող հերոսներ են (Երկվորյակների առասպելական կերպարներին բնորոշ վարքագիծ, որ պահպանվել է նաև հայոց ավանդության մեջ՝ Մեծ Սիեր-Փոքր Սիեր, Արտավազդ-Շիդար), որ հակադրվում են ու մարտնչում իրենց ծնողների հետ (դարձյալ բնորոշ վարքագիծ, որ հանդիպում է Եվրասիական և մասնավորապես հայկական առասպելույթներում (Արտաշես-Արտավազդ, Դավիթ-Փոքր Սիեր) և արդյունքում՝ ծնողական անեծքի հետևանքով դառնում են ամուլ և անմահ, և նույն անեծքի համաձայն, երբ ձին հեծած գնում են Վանա լճի մոտ կամ Մասիսի շամբուտներում (այսինքն՝ Արաքս գետի ափին) որս անելու (մի դեպքում ազրավ, մյուս դեպքում՝ վարագ-կինճ որսալու), չարքերի կողմից բռնվում կամ պատահարար մտնում ու փակվում են բարձր լեռան (Վանի քարաժայր, Ազռավաքար, Աև քար, Մութ սար, Փոքր Մասիս, Ազատն Մասիս) մեջ գտնվող անլույս քարայրում։ Այս սյուժեում, ըստ Էության, Եվրասիական և մասնավորապես նաև հայկական առասպելարանական համակարգերից լավ հայտնի Արևի (իր ծագելու և մայր մտնելու՝ նաև լեռան կամ լճի «մեջ մտնելու» հատկությամբ), Հողմի-Ռազմի և Մեռնող-Հառնող աստվածությունների զուգորդված, անձնավորված և վիավականացված կերպարն է, իրեն բնորոշ կենդանական կող-խորհրդանշներով (ազրավ-Անզուր-Ֆենիքս, կինճ-վարագ-Նինշուրուր, Ճի- Քուուկիկ Զալալի -Աշվիններ), բնավորության երկվությամբ (քարություն-չարություն, հանցանք-զղզում) և երկահակաղիր լոկուսներում (ջուրցամաք, լույս աշխարհ-մութ քարայր) գրյատևելու կարողությամբ։

Վերոհիշյալ երկու ինքնուրույն առասպելների նույնական դրվագների այս համադրված շարադրանքում առանձնակի դեր ունի քարայրը։ Խտոնիկ աշխարհի ինքնատիպ այս դրսուրումը կարևոր բաղկացուցիչ է Եվրասիական առասպելարանական համակարգերի համար (տես՝ Ուլյիկումմիի մասին խոտիհական, Պոլիկեմոսի, Պանի, Էնդիմինի, մանուկ Ջևսի, Պրետոսի երեք դուստրերի մասին հունական, Պանիի և Վալայի մասին հնդկական, Ազարյուրոսի, Գելոնոսի և Սկյուրեսի մասին հունա-սկյութական, Կուրախսանի և Այնգեղի քարայրների մասին կելտական, Ամիրանի մասին քարթվելական, Բաղինի և Բատինուկոյի մասին չերքեզական, Քնած դշխուհու մասին ոռոսական, Ալի Բարայի մասին արաքական և այլ առասպելները) և միջնադարյան Եվրոպայի որոշ ավանդությունների (տես՝ արքա Արթուրի մասին կելտական, Հենրիխ Բարբարոսայի մասին գերմանական և Գոգամի մասին աստվածաշնչյան ավանդությունները) ու առանձնակի դեր ունի դյուցազուն հերոսների պատսպարման, հասակ առնելու կամ վերակենդանանալու գործում (Դք 1985, էջ 70-72, 81, 181-183, 205: Հերոլոսոս 1986, էջ 222-226: Իվանով Բ., Տոպորով Բ. 1974, էջ 43-44: ԼҮНДԼՄԱ 1977, էջ 125-140: Տեմկին Է., Էրման Բ. 1985, էջ 21-22: Ացբունով Մ. 1989, էջ 20-21: Ճյումեզիլ Ժ. 1990, էջ 188-198, 202: ԼԾԴԳԴԲ 1990, էջ 17-23, 85-87, 236-238: Տոպորով Բ. 1992, էջ 311-312: Գրեյվս Բ. 1992, էջ 183: Կոմեյ Ջ. 1998, էջ 100, 275: Բարս Ա., Բարս Բ. 1999, էջ 346):

Մեր պարագայում, քարայրը՝ փաստորեն ապաշխարելու, մեղքերը քավելու և մաքրագործելու համար անհրաժեշտ, մարդկային աշքից լավ քաքնված, այն մութ, սահմանափակ տարածքն է՝ անդրաշխարհը (ըստ Էության՝ երկիր արգանդը), ուր անպայման պետք է տեղափոխվի մեռնող որսորդ-հերոսը՝ կրկին վերածնվելու համար։

Ահա այս համատեքստում, թերևս, բացատրելի է նաև Գեղիովուի ժայռախոռոշը դամբարանի վերածելու վանտոսալյան ծեսի իմաստային ծանրաբեռնվածությունը: Վերջինիս համաձայն, հանգուցյայը՝ բարձր սոցիալական կարգավիճակ ունեցող հասուն տարիքի տղամարդը (ի դեպքում՝ բարձր կարգավիճակ ունեն և բացառապես արական սեռին են պատկանում նաև Եվրասիական առասպելաբանական համակարգերի համանման հերոսները), ուղեկիցների շքախմբով ամվունքների է քարայր - դամբարանում, անդրաշխարհ գնալու և այնտեղից ետ վերադառնալու (վերածնվելու) մտայնությամբ: Ուստի կարելի է արձանագրել, որ Հին Արևելքում և մասնավորապես Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից հայտնի վերոհիշյալ առասպելույթը, որպես ծիսա-պաշտամունքային որոշակի ընկալումների ամբողջություն և վերջինիս արարողակարգի կոնկրետ դրսորում, իր արտահայտությունն է գտել տեղի մ.թ.ա. III-I հազարամյակների յուրահատուկ քաղումներում: Ավելացնենք նաև, որ և՛ Փոքր Սիերի, և՛ Արտավազդ-Շիդարի առասպելների առանձին դրվագներ նույնիսկ մանրամասների մակարդակում իրենց զարմանալի զուգահեռներն ունեն Գեղիովուի քարայր-դամբարանի քաղման արարողակարգի և նրա բաղկացուցիչը կազմող գույքակազմի որոշ օրինակներում: Այսպես: Ըստ հայոց դյուցազնավեպի չորրորդ ճյուղի, հերոսը՝ Փոքր Սիերը, հոր անեծքից հետո հեծնում է ձին և գնում Վանա լճի մոտակայքում որսի: Տեսնելով կլոր, մեծ քարի վրա թառած ագռավին, նետու ու աղեղով փորձում է որսալ նրան և, եթե վերջինս քարնվում է քարայրում, ինքն էլ ձիով մտնում է քարայր և փակվում այնտեղ:

Գեղիովուի դամբարանի տերը ևս թաղվել է զառիվեր քարայրում, Սևանա լճից ոչ հեռու, Գեղիովիտ զյուղի միջով հոսող գետակի ափին: Նրա հետ դամբանասրահ են դրվել երկանիվ մարտակառք, ձիու ասպազեն և կապարճ: Պատահական չէ թերևս մեկ այլ զուգադիպություն: Դամբանասրահի ավերակներում հայտնաբերված ձիասանձեռից մեկի վերին եզրին (աղ. I5, նկ. I) կա կլոր (հավանաբար քարաժայո խորհրդանշող) պատվանդանի վրա թառած ագռավ-անգոլի, իսկ ստորինին՝ թևավոր ձիու արձանիկ: Հանգամանք, որ ավելի ևս ընդգում է Փոքր Սիերի առասպելի և Գեղիովուի քարայր-դամբարանի թաղման արարողակարգի որոշ մանրամասների համադրելիությունը:

Ակնառու են զուգահեռները նաև Արտավազդ-Շիդարի առասպելի և քննարկվող դամբարանի ծիսակարգի որոշ մանրամասների միջև: Ահա դրանք:

Ըստ ավանդության, Արտավազդ-Շիդարը, սկզբում հոր՝ Արտաշեսի հրամանով արշավում ու ավերում է վիշապազունների աշխարհին ու սպանում նրանց քագավորին՝ Արգավանին (այսինքն՝ դրսորում է Հողմի-Ռեազմի աստծուն բնորոշ վարքագիծ): Այնուհետև, Արտաշեսի մահկան ու թաղման արարողակարգի ժամանակ, որն ուղեկցվում է քազմաթիվ մարդկային ինքնակամ զոհաբերություններով, նախանձում է հոր փառքին և անհծովում վերջինիս կողմից: Անեծքի համաձայն, Արտավազդ-Շիդարն անցնում է Արաքս գետն ու գնում դեպի Ազատն ի վեր Մասիսը՝ կինծեր որսալու, ուր գերվում է վիշապազունների կողմից և շղթայվում Մասիսի մութ քարայրում (այսինքն՝ հանդես է բերում ծագող ու մայր մտնող Արևի և Մեռնող-Հառնող աստվածություններին հատուկ վարքագիծ): Հավատարիմ երկու շները շարունակ լիզում են նրա շղթաները, որպեսզի մաշեն դրանք և հնարավորություն տան Արտավազդ-Շիդարին դուրս գալու լույս աշխարհ, սակայն քարայրն աշալութ հսկող դարրիններն ամեն անգամ, վերջին պահին, մուրճով հարվածում են մետաղյա կապերին և կրկին ամրացնում դրանք:

Գեղիովուի դամբարանի տերը ևս թաղված է գետափին զտնվող քարայրում: Ըստ որում, այս տարածքը ևս որոշակի կապ ունի վիշապազունների հետ:

\* Այս առումով ուշադրության արժանի են ագռավի և քարայրի ծիսական կապը մատնանշող հայ ժողովրդական ավանդույթները (Ղազիյան Ա. 2001, էջ 134-138):

Այսուեղ են գտնվել Հայկական լեռնաշխարհում հնուց հայտնի վիշտապ-կոթողների զգալի մասը և նոյն տեղում է գտնվում նաև վիշտապունիներից ամենանշանավորի՝ Աժի Դահակուի հետ անվանապես առնչվող Աժդահակ (կամ Աժդահա յուրտ) լեռնազագազքը: (Ատրպետ 1926, էջ 38-62: Արենյան Մ. 1941: Ղափանցյան Գ. 1945, էջ 111-154: Մանականյան Ա. 1952, էջ 88-93: Բարսեղյան Լ., Խաչատրյան Ժ., Քալանքարյան Ա. 1964, էջ 85 - 88: Շահիմյան Ա. 1976, էջ 286-289: Պետրոսյան Ա. 1984, էջ 33-34: Խնկիկյան Օ. 1997, էջ 148-158: Mapp H., Смирнов Я. 1931, էջ 61-104: Պուտրովսկի Բ. 1939, էջ 5-38: Մելիքսետ - Եկով Լ. 1947, էջ 27-37): Ինչպես Արտաշես թագավորին, Գեղիովտի դամբարանի տիրոջը և անդրաշխարհ ուղեկցում են զոհաբերված մարդիկ: Թեև Գեղիովտի դամբարանի երկրորդ սրահի ավերակներում չեն գտնվել շան ոսկորներ, այսուհանդերձ, մեր կողմից Սևանի ավազանի վանտոսայան այլ հուշարձաններում, մասնավորապես Սարուխան գյուղի մոտ պեղված դամբարանում Գեղիովտի քարայր-դամբարանի գույքակազմի (տարողության չափի չորս նշաններով սափորի ճիշտ նմանակի) առանձին նմուշների հետ գույզ գամփոների ամբողջական կրմախքների հայտնաբերումը, բույլ է տալիս եզրակացնել, որ նոյնատիպ կենդանիներ կարող էին տեղափորված լինել նաև քննարկվող դամբարանում և կորչել վերջինիս ավերման ժամանակ: Ավելացնենք նաև, որ նախաբազուկներին չորս բրոնզե ապարանջաններ կրող, 5-6 տարեկան շան կմախք է հայտնաբերվել նաև Ներքին Գետաշենի արդեն վերը ներկայացված, մ.թ.ա. XVI-XV դարերի սահմանագծով քագրվող, խմբային թաղումով այն դամբարանում (թիվ 21), որի «տիրոջ» մոտ 50-ամյա տղամարդու ուժերի մոտ, Գեղիովտի քարայր-դամբարանի թաղման արարողակարգի նման՝ զոհաբերվել են երեք երեխաններ (Մկրտչյան Բ., Պոլիսօսյան Ա., Պալիկյան Ա. 1997, էջ 130-131):

Գեղիովտի քարայր-դամբարանի տիրոջ և Հողմի-Ռազմի աստծո կերպարի համադրության մի ուշագրավ փաստ էլ մատնանշում է քաղման երկրորդ՝ հիմնական սրահի ավերակներից հայտնաբերված և, ըստ ամենայնի, դամբարանի տիրոջը պատկանող «սկյութական տիխափ» երկարեւ ակինակ-դաշույնը: Բանն այն է, որ ըստ Հերոդոտոսի հաղորդման, սկյութների մոտ նման երկարեւ դաշույնները (կամ կարճ սրերը) համարվում էին ռազմի աստծո՝ Արեսի խորհրդանշաննը: Սրան ձոնվում էին հատուկ արարողություններ, որոնց ընթացքում հակառակորդի գերված ռազմիկների որոշակի մասի (հարյուրից՝ մեկի) խմբովին զոհաբերման ժամանակ՝ մորթվող մահապարտների դիակներից հավաքված արյունով ցողվում էր Արեսի խորհրդանիշ հանդիսացող ծիսական ակինակը, ապա հանգուցյալների արդեն անկենդան մարմինները դիամասնատվում էին (Հերոդոտոս 1985, էջ 241: Հեյքարդ Ա. 1982, էջ 202-203: Արբունով Մ. 1989, էջ 82: Ճյումեզու Ջ. 1990, էջ 190-192): Այլ խոսքով, ակինակ-դաշույնին (ասել է, թե ռազմի աստված Արեսին) ձոնված ծիսական արարողությունների ժամանակ ևս կատարվում էին այնպիսի զոհաբերություններ (ըստ որում դիամասնատման ակտով), որպիսիք արձանագրվել են սոցիալական ընդգծված կարգավիճակ ունեցող և, թերևս ռազմական բարձրաստիճան պաշտոնյա հանդիսացող (ինչը մասնավորապես մատնանշում է մարտակառի մասերի հայտնաբերման փաստը) անձնավորության Գեղիովտի քարայր-դամբարանի պեղման ժամանակ:

Գեղիովտի վանտոսայան դամբարանի տիրոջ և Արտավազդ-Շիդարի կերպարային նմանության մեկ դրսենորում էլ, մեր կարծիքով, կապված է վերջինիս գուգանվան երկրորդ քաղաքիչի մեկնաբանության հետ: Ըստ որում, եթե քարայր-դամբարանի տերը, ինչպես նշեցինք վերևում, վանտոսայան իրականության մեջ բարձր կարգավիճակ ունեցող անհատ է, և հուղարկավորվել է Ռազմի և Մեռնող-Հառնող աստվածություն-

Աերին ձոնված ծխական արարողակարգի համաձայն, ապա Արտավազդը, ըստ առասպելաբանական պատկերացումների, հենց Ռազմի և Մեռնող-Հառնող աստվածությունների անձնավորված և պատմականացված կրկնակն է, որ հայ առասպելաբանության մեջ վերածվել է արքայորդու կամ արքայի (այսինքն՝ դարձյալ ընդգծված քարձր կարգավիճակ ունեցող անհատի): Այս պարագայում ո՞վ է վերջինիս անձնանվան երկրորդ բաղադրիչը կազմող Ծիդարը, և ի՞նչ իմաստային ծանրաբեռնվածություն է կրում իր անվան մեջ: Զննարկվող առասպելական կերպարի անձնանվան այս երկրորդ բաղադրիչը հայ սկզբնադրյուրներում կիրառվել է և որպես հատուկ անուն, ե՛ որպես հասարակ գոյական: Ըստ որում, որպես հատուկ անուն, այն փորձել են կապել «Աշխադար», «Իշքար» և «Աժդահակ-Աժդահար» անձնանումների և դիցանումների հետ (Աճայան Հ. 1977, էջ 516: Արեդյան Մ. 1985, էջ 185-197: Հարությունյան Մ. 1987, էջ 70-76: Արյություն Ս. 1992, էջ 625: Արյություն Ս. 1992, էջ 106): Ինչ վերաբերում է որպես հասարակ գոյական կիրառելուն, ապա սկզբնադրյուրներում ու հայերենի բարբառներում (հատկապես Ալաշկերտի և Ակնի) այն հանդիպում է «շիդար, շիքար» ծևերով և նշանակում է «խենթուկ»: Հ. Աճայանն այս բառարմատը մեկնարանում է՝ 1. «խենթ, խենագար, դիվահար», 2. «գե, չար ոգի» իմաստներով և կապում ասորերեն «տետար» - «խենթուկ, ապուշ», արարական «տաշիր»- «ուրախ, համարձակ, անամոք, խարերա» և «տաշար» - «գվարճություն, խեղկատակություն», իրանական «տաճա» - «խենթ» և «տաճա» - «հիմար» բառարմատների հետ (Աճայան Հ. 1977, էջ 516):

Մեր կարծիքով, անվանական և վարքագծային որոշ նմանություններ, կարծես թե թույլ են տալիս ընդհանրության եզրեր գտնել նաև «Ծիդարի» և շումերական դյուցազնավեպերից հայտնի «Սիլուրի» կամ «Ալիրտուր» դիցուհու (երբեմն կրում է նաև «Ծերիթու» և «Էրեդու» անվանումները) կերպարների միջև: Առավել ևս, որ Ալիրտի-Սիրտուրը դյուցազնավեպում երբեմն համարվում է ստորգետնյա քաղցրահամ ջրերի աստված Ենկի-Հայայի կինը և մեռնող-հառնող աստված Դումմոզիի մայրը (Բելուզկի Մ. 1980, էջ 255), որով առավել ևս մոտենում է Արտավազդ-Ծիդարին (նաև Փոքր Սիերին): Որպես մեռնող-հառնող հերոսի, ինչպես նաև ջրի (Վաճա լիճ, Արաքս գետ) հետ առնչվող նրա գործունեության միջավայրին:

Չի բացառվում, որ շումերական Սիլուրի-Սիրտուրի և հայոց Արտավազդ-Ծիդարի առասպելական կերպարների անվանական և վարքագծային ընդհանրությունների ուսումնասիրության համակարգում կարող են ներառվել ինչպես քառսի և խոտնոսի լրկուսային մակարդակներում գործող՝ աքաղական Իշքար դիցուհին, այնպես էլ վերջինիս էպոնիմային դրսևորումները կրող, իշքուգուլխյան Չագա-Աշքարա (Փիլիպոսյան Ա. 1998, էջ 17-18) և վանտոսայան Սարդուրի (ասսուրական տարբերակը՝ Սիլուրի, Սիլուր) արքաների անձնանումները: Ըստ որում, եթե առաջինը (Իշքար դիցուհին) Սիլուրի-Սիրտուրին և Արտավազդ-Ծիդարին համարվում է անվան, վարքագծի և գործունեության միջավայրի որոշ մանրամասներով, ապա հաջորդ երկուսը (Չագա-Աշքարան և Սարդուրին)՝ անձնանումների կառուցվածքով և ընդգծված քարձր կարգավիճակի առկայությամբ: Հատկանշական է, որ «Ալարդուրի» անձնանումը վանտոսայան սեպագրերում ներկայանում է «<sup>1D</sup>sar,-du-ri» վանկակապակցությամբ, որտեղ «sar,-»-ը Իշքար դիցուհու անվան, ասսուրերենից փոխառյալ, գաղափարագիրն է: Ուստի արքայի անունը կարող է ընթերցվել նաև «Իշքարդուրի» ծևով: Այսինքն, որպես հատուկ անուն, քննարկվող անվանումը («Սարդուրի-Իշքարդուրի») մի կողմից ուղղակիորեն գուգորդվում է շումերական Սիլուրի-Սիրտուր, իսկ մյուս կողմից՝ աքաղական Իշքար դիցանումների հետ: Նշվածը, մեր կարծիքով, մեկ անգամ ևս վկայում է միջագետքյան որոշ առասպելների ու դիցանումների, իշքուգուլխյան և վանտոսայան արքայանումների,

գեղիովիտյան քարայր-դամբարանի թաղման ծեսի և Փոքր Սիերի ու Արտավազդ-Շիդարի մասին հայոց ավանդապատումների նշմարվող ընդհանրություններն ու կապը:

Այս համատեքստում, թերևս, անհրաժեշտություն կա անդրադառնալ նաև հայերեն արմատական թառարանի «այր» և «անձավ» արմատներին և Վերջիններից կազմված «քարայր» և «քարանձավ» թառերին: Սրանց հոմանիշները հայերենում թագմաթիվ են (քարախոռչ, քարախորչ, ժայռախորչ, վիմախոռչ, վիմախորչ, լեռնախոռչ, լեռնախորչ, ծերպ, ժայռածերպ, որմնածերպ, քարածերպ, ժայռածերպ, քարածերպ, որմնածերպ և այլն): Թեև դատելով հրապարակի վրա առկա մասնագիտական գրականությունից, քննարկվող երկու թառերի և մասնավորապես «անձավ» թառարմատի նախնական ձևն ու ստուգարանությունն առ այսօր ներկայացվում է հարցականով (Զահուկյան Գ. 1987, էջ 112): Ինչ են մատնանշում և իմաստավորում «քարայր» և «քարանձավ» թառերը: Բանն այն է, որ նշված երկու թարդ թառերի և «-այր», և «-անձավ» թաղաղրիչները նաև ինքնուրույն թառեր են և որոշակի (ըստ որում հոմանիշ) իմաստային ծանրաբեռնվածություն կարող են դրսնորել: Այսպես. «այր» նշանակում է նաև «տղամարդ» և «քարայր» երկարմատ թառային գոյացությունը հնարավոր է նախապես ընկալվել է «քարի, ժայռի մեջ բնակվող այր՝ տղամարդ» իմաստով: Թերևս, նմանատիպ կազմություն են նաև «այրուճի»՝ «ծիու վրա նստած այր՝ տղամարդ», «այրասեր»՝ «ամուսնուն սիրող, տղամարդ սիրող», «այրընտիր»՝ «ընտիր տղամարդ, աչքի ընկնող այր՝ տղամարդ», «սկեսրայր»՝ «ամուսնու հայր, սկեսրոջ այր, ամուսնու մոր այր՝ տղամարդ» և այլ բարդ թառակազմությունները:

Նմանօրինակ մեկնարանություն կարելի է առաջարկել նաև «քարանձավ» թարդ թառի «-անձավ» թաղադրիչին: Վերջինս, հնարավոր է, «անձն»՝ «մարդ» թառի հետագա հոլովական դրսնորման մի տարրերակն է, որը, ըստ երևույթին, գոյացել է թառավերջի «ն» թաղածայնի սղման հետևանքով (օրինակ՝ ոտն-ոտ, մատն-մատ, ձեռն-ձեռ, որմնորմ, լեռն-լեռ, նաև՝ անձն-անձ, որտեղից էլ անձնամբ-անձամբ և անձնաւ-անձաւ): Եթե առաջարկվող ենթադրությունը չի հակասում հայերենի քերականական օրենքներին, ապա «քարանձավ» երկարմատ թառային գոյացությունը ևս նախապես, հնարավոր է, ընկալվել է «անձով (անձաւ)՝ տղամարդով, բնակեցված քար, ժայռ, քարախոռչ» իմաստով: Ավելացնենք նաև, որ «-այր» և «-անձավ» թաղադրիչները քննարկվող թարդ թառերը կազմում են միայն «քար» արմատի հետ («քար-այր», «քար-անձավ») և չեն միանում նրա հոմանիշներին («ժայռ», «ծերպ», «որմն», «վեմ» և այլն): Եվ սա հատկանշական է, քանի որ բերված հոմանիշներից միայն «քար»-ն՝ «ամուր, կարծր, պինդ, կոշտ» իմաստներից զատ հնդեվրոպական որոշ լեզուներում ունի նաև «ընկույզ, ընկույզի կեղև, կոկոսի ընկույզ» և «խեցգետին» իմաստները (համեմատիր սանսկրիտի «karka»՝ «կոկոսի ընկույզ», «karkata»՝ «խեցգետին», հունարեն «χαρχιγος»՝ «խեցգետին», լատիներեն «carina»՝ «ընկույզի կեղև», «carcero-cancer»՝ «խեցգետին», ինչպես նաև հայերենի «քարժանկ»՝ «խեցգետին» և բարբառային «կակալ» (գուցե «կարկար, կարկառ՝ քար» նախական ձևից)՝ «ընկույզ, պինդուկ» թառագոյացությունները (Աճառյան Հ. 1979, էջ 558-561): Այսինքն «քար» արմատն իմաստավորում է նաև կարծր մակերես և համեմատաբար փուխր կամ դատարկ միջուկ ունեցող առարկա կամ գոյացություն, որի միջից կարող է ծարծակվել ընձյուղ կամ դուրս սողոսկել կենդանի արարած: Երևույթ, որ մեկ անգամ ևս իր էությամբ համադրվում է քարայրում ամփոփված և վերածննան ունակ Մեռնող-Հառնող աստծո (նաև Էպիկական հերոսի) վարքագծին: Այս ամենը թույլ է տալիս ենթադրել, որ «քարայր» և «քարանձավ» հասկացությունների տակ նախապես ընկալվել են բնական կամ ձեռակերտ այն ժայռախոռոչները, որտեղ ըստ վաղնջական առասպելաբանական պատկերացումների, փակվել են մեռնող-հառնող դյուցազունները, կամ վերջիններիս ձոնված արարողակարգի համաձայն ամփոփվել են նրանց

հավասարեցված և սոցիալական բարձր կարգավիճակ ունեցող հասուն տարիքի տղամարդկանց (հաճախ նաև նրանց անդրաշխարհյա ուղեկիցների) դիակներն ու աճյունները:

Ի մի բերելով առասպելաբանության, հնագիտության, լեզվաբանության և հնամարդաբանության ընձեռած տվյալները, կարելի է արձանագրել, որ Գեղիովտի վաճառության քարայր-դամբարանում իրականացված թաղման ծեսը շատ հին ու խոր արմատներ ունի Հայկական լեռնաշխարհում: Ըստ որում, եթե հազարամյակների ընթացքում, աստիճանաբար, փոխվել է նրանում ներգրավված իրերի քանակն ու գույքակազմը, ապա անփոփոխ է մնացել բուն էությունը կազմող աշխարհընկալումը, գաղափարախոսությունն ու ծխակարգը, որն էլ վկայում է կոնկրետ տարածքի (Հայկական լեռնաշխարհ և հարավից շրջաններ) և կոնկրետ ժամանակահատվածի (մ.թ.ա. III հազարամյակի սկզբից մինչև մ.թ.ա. I հազարամյակի վերջերը) սահմաններում էքսոմշակութային իրողությունների ու գործընթացների անժխտելի փոխկապակցվածությունը, հաջորդականությունն ու անընդհատականությունը:

#### ԳԼՈՒԽ ՀԻՆՇԳԵՐՈՐԴ

### ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԹՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գեղիովտի քարայր-դամբարանից հայտնաբերված փաստացի հնագիտական նյութի մանրակրկիստ ուսումնասիրության արդյունքների գուգորդումը Եվրասիական առասպելաբանական համակարգերից հայտնի, հինարևելյան գրավոր սկզբնադրյուններով վկայված և որոշակի ժամանակագրական սահմաններ մատնանշող տվյալներին, մեր կարծիքով, հնարավորություն է ընձեռում անդրադառնալ նաև Գեղիովտի քարայր-դամբարանի կոնկրետ թվագրման խնդիրն: Այս առումով էապես աշխատում են երկու տվյալ.

ա) դաշույն - ակինակի հայտնաբերման պարագան,  
բ) բրոնզե սափորի վրա խեթական հիերոգլիֆային գրի սկզբունքով արված նշանագրի առկայության փաստը:

Դաշույն-ակինակները, ինչպես նշեցինք վերևում, լայն տարածում ունեին Հայկական լեռնաշխարհի, Կովկասի, Հարավուսական տափաստանների, Ղրիմի, Սիցիա Ասիայի և Իրանական սարահարքի համաժամանակյա հնագիտական համալիրներում: Դրանց վաղագույն օրինակները հանդես են եկել մ.թ.ա. VIII դ. վերջին քառորդից (Տեքով Բ. 1980, էջ 58: Պոգրեբովա Մ., Ռաևսկի Դ. 1992, էջ 204 - 205, նկ. 32) և կիրառության մեջ մնացել են մինչև մ.թ.ա. I հազարամյակի վերջերը:

Իր հերթին, խեթական հիերոգլիֆային գիրը, ըստ էության հայտնի է արդեն մ.թ.ա. II հազարամյակի կեսերից և առանց ընդհատման օգտագործվել է խեթական թագավորությունում, ապա և ուշխեթական քաղաքական կազմավորումներում և իշխանություններում ընդհուպ մինչև մ.թ.ա. VII դարի առաջին քառորդը: Ուստի դաշույն-ակինակների հանդես գալու ստորին (մ.թ.ա. VIII դարի վերջին քառորդ) և Մերձավոր Արևելքում խեթական (լուսիական) հիերոգլիֆային գրի կիրառման վերին (մ.թ.ա. VII դարի առաջին քառորդ) ժամանակագրական սահմաններն ել հանդիսանում են Գեղիովտի քարայր-դամբարանի թվագրության համար առավել ընդունելի ժամանակահատվածը: Ասվածից հետևում է, որ քննարկվող քարայր-դամբարանի բարձրաստիճան տերն, ամենայն հավանականությամբ, եղել է Վանտոսայի թագավորության գահին իրար հաջորդած

երկու արքաների՝ Ռուսա 1-ի (մ.թ.ա. 735-714 թթ.) և Արգիշտի 11-ի (մ.թ.ա. 713-685 թթ.) կամ թերևս նրանցից մեկն ու մեկի ժամանակակիցը և, ըստ այդմ էլ, հնարավոր է նաև անմիջական մասնակիցը ու զամանակական այն իրողությունների մի մասի, որ ծավալվել են Սևանի ավազանում և հարակից շրջաններում նշված ժամանակահատվածում (Գայսերյան Վ. 1985, էջ 67-79: Մելիկիշվիլի Գ. 1960, էջ 328-329: Արյունյան Հ. 1983, էջ 195-220):

## ՎԵՐՋԱԲԱՆ

Դատելով սեպագիր սկզբնադրյուրների հաղորդումներից, Սևանի ավազանը, որպես տնտեսական և ուղմավարական կարևոր նշանակություն ունեցող շրջան և մարդկային ու նյութական (հումքային) նկատելի ռեսուրսներ պարունակող աշխարհագրական տարածք, մ.թ.ա. VIII դարից դարձել է Վանտոսավի թագավորության ուղման-քաղաքական ծեռնարկումներում ամենից հաճախ ընդգրկվող շրջաններից մեկը: Ըստ որում, այդ միջոցառումները ոչ միայն ներառել են ուղմական արշավանքների ու բնակչության որոշ մասի տեղահանումն ընդունված եղանակները, այլև զուգորդվել նշված տարածքում գտնվող հին բնակավայրերի վերակառուցման ու անվանափոխման («Խալդի աստծո քաղաք», «Թեյշեբա աստծո քաղաք»), նոր ամրոցների ու պահակակետերի հիմնման, ինչպես նաև ուղմական համակազմի տեղաբաշխման միջոցառումներով: Նշված պատմա-քաղաքական համայնապատկերի ամենատարբեր մանրամասները ներկայացնում են ինչպես տեղի հնագիտական հուշարձաններից ի հայտ եկած քազմազան նյութերն, այնպես էլ Վանտոսավի թագավորության տիրակալների (Արգիշտի I, Սարդուրի II, Ռուսա I) կողմից Լճաշենում, Գավառում, Վարդաձորում, Ծովինարում և Ծովակում թողած, ապա և իրենց տարեգրությունների մեջ վերստիճ արձանագրած սեպագիր տեքստերը (YKH-127, I, 21-22: YKH-127, II, 25-26: YKH-128, A2, 1-13: YKH-155, A, 13-21: YKH-155, D, 45-53: YKH-155, F, 15-32: YKH-156, D1+D11, 1-30: YKH-160, YKH-161: YKH-265: YKH-266): Ըստ որում, վերջիններում հիշատակվում են ինչպես Սևանի ավազանի արևմտյան ու հարավային ափամերձ շրջաններում տեղաբաշխված քազմաթիվ բնակավայրերի, ցեղախմբերի ու քաղաքական կազմավորումների անվանումները (Կիեխունի-Զիխունի, Վելիքուխի-Վելիկունի, Իշտիկունի, Լիքի, Քամանի-Կամանի, Արախունի, Տուլիխու-Թուլիխու, Լուլերունի-Լուլպրունի, Արքուքինի և այլն), անպես էլ նրանց համադաշնակցության հավաքական անունը՝ Ռուդորի-Էթիունի (Բարխուդարյան Ս. 1935, էջ 164: Աղոնց Ն. 1972, էջ 206-207: Պետրոսյան Ս. 1976, էջ 191: Հմայակյան Ս. 1996, էջ 46-47: Պողոսյան Վ. 1996, էջ 32-46: Կապանցյան Գ. 1941, էջ 62: Պիոտրովսկի Բ. 1944, էջ 84: Մելիկիշվիլի Գ. 1954, էջ 56: Պիոտրովսկի Բ. 1959, էջ 80: Մելիկիշվիլի Գ. 1960, էջ 444: Արյունյան Հ. 1970, էջ 200: Արյունյան Հ. 1985, էջ 198-199):

Ահա Սևանի ավազանում Վանտոսավի թագավորության տիրակալների այս քազմաբնույթ ծեռնարկումների մի կոնկրետ դրվագի վերհանմանն էլ նպաստում են Գեղիովտի քարայր-դամբարանից հայտնաբերված հանգիտական նյութերն ու դրանց հիման վրա արված մշակութային, հնամարդաբանական, առասպելաբանական և լեզվական մեկնաբանումներն ու վերակազմությունները:

Խնդրո առարկա տարածքի հետազոտումն ու Սևանի ավազանում թողած սեպագիր արձանագրությունների ուսումնասիրությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Գեղիովտի քարայր-դամբարանի տեղի ընտրությունը պատահական չէ: Այս տարածքի կարևո-

բության ու նրա մշտապես վերահսկման անհրաժեշտության մասին է խոսում նաև վաճառության կողմից Գեղիովուում, քննարկվող քարայր-դամբարանի հարեւանությամբ, ուազմական տեսանկյունից անշափի հարմար տեղադրություն ունեցող բլիփ վրա կառուցված ամրոց-հենակետը, որը հայկական միջնադարյան ճեռագրերում (մասնավորապես Ստ. Ասորիկի մոտ) հիշատակվում է «Ալրերդ» անվամբ (ՀՀԸՆԹ, հ. 1, 1986, էջ 71):

Արված դիտարկումները, ինքնարերաբար, առաջադրում են մեկ հարցի քննարկում ևս. Սևանի ավազանում տեղաբաշխված Ուդուրի-Եթունի համադաշնության մեջ մտնող ցեղային կամ վաղպետական կազմավորումներից որի՝ տարածքում են կառուցվել Ալրերդ ամրոցն ու Գեղիովուի քարայր-դամբարանը:

Այս առումով առավել կարևոր տեղեկատվություն է ամփոփում Սարդուրի II-ի (մ.թ.ա. 764-735թթ.) Սևանի ավազանում թողած և, ըստ նրա սեպագիր տարեգրության տվյալների, մ.թ.ա. 753-752 թվականների իրադարձությունները ներկայացնող արձանագրությունը: Ակզբանդարյուր, որի նախնական տեղադրության կոնկրետ վայրի մասին տեղեկությունները որոշ հակասական տվյալներ են պարունակում:

Այսպես. արքեպիսկոպոս Մեսրոպ Սմբատյանցը հայտնում է, որ արձանագրությունը հայտնաբերել է 1863 թվականին Նոր Բայազետից 20 վերատ հեռավորության վրա գտնվող Աղամիսան գյուղի մոտակայքում, այնտեղ գտնվող ժայռից ինչ-ինչ պատճառով պոկված և գետնին ընկած մի քարարեկորի վրա: Այս փաստը հաստատում է նաև պատմաբան Ք. Պատկանյանը, ավելացնելով, որ 1866 թվականին արձանագրությունը տեղափոխվել է Թիֆլիս՝ քանզարան (Պատկան Կ. 1883, էջ 11, նկ. II): Մ. Նիկոլայի տվյալների համաձայն, արձանագրությունը փորագրված է եղել Աղամիսան գյուղի մոտ գտնվող ժայռի վրա, որտեղից պոկվել է Գուստավ Ռադդեի կողմից և տեղափոխվել Թիֆլիս (ՅՈԼԿԱ, թ. 1, 1875: Բադդե Գ. 1891, էջ 21: Պիոտրովսկի Բ. 1959, էջ 12): Ըստ որում, Մ. Նիկոլային պախարակում է այդ արարքը և հայտնում, որ արձանագիր հուշարձանները տեղեկատվական առումով առավել արժեքավոր են, երբ պահպանվում են իրենց նախնական տեղում (Հիկոլյսկի Մ. 1896, էջ 11I-116): Մ. Նիկոլային ավելացնում է, որ այդ արարքից շատ տարիներ անց քննարկվող տարածքն է այցելել նաև Անդրկովկասն ուսումնասիրող արևելագետ Ա. Իվանովսկին, և Աղամիսանի տարեց բնակչությունը նրան ցույց են տվել այն ժայռերը, որոնցից մեկի վրայից իբրև թե հանվել է վերոհիշյալ արձանագրությունը (Հիկոլյսկի Մ. 1896, էջ 115):

Այսպիսով, XIX դարի երկրորդ կեսին վերաբերող տեղեկատվությունների մեջ հակասական է այն, որ դրանցից վաղերում նշվում է քննարկվող արձանագրության բեկորային վիճակն ու գետնին ընկած լինելու պարագան, իսկ համեմատաբար ուշերում՝ ժայռի վրա փորագրված լինելն ու Գ. Ռադդեի կողմից իր նախնական տեղից հատվելը: Եթե 1863 թվականին արձանագրությունն արդեն բեկորային վիճակում էր, ինչպես կարող էր 1866 թվականին վերստին հայտնվել ժայռի վրա և հատվել Գ. Ռադդեի կողմից...

Վերոհիշյալ տեղեկատվություններում ընդհանուր է Աղամիսան-Ատամիսան (ներկայիս՝ Վարդաճոր) գյուղի մոտ սեպագիր արձանագրության հայտնաբերման փաստն ու հետագա փոխադրումը Թիֆլիս: Ահա այն էլ հիմք ընդունելով, Սարդուրի II-ի խնդրության կողման արձանագրությանն աղամիսանյան տեղորոշում են վերաբերել հետագա ուսումնասիրողների հիմնական մասը (Սիբայելյան Գ. 1968, էջ 31, հանույթ 55: Աղոնց Ն. 1972, էջ 179, 207: Հ. Կարագեղեան 1998, էջ 227-228: Церетели Գ.В. 1939, № 21: Պիոտրովսկի Բ. 1944, էջ 28, 82: Պիոտրովսկի Բ. 1959, էջ 12: Մեծանինով Ի. 1978, էջ 372-374: Արդյունյան Հ. 1985, էջ 131-132, 187-188: Diakonoff I., Kashkai S. 1981, էջ 85-86 և այլոք):

Բերված փաստերի համատեքստում անհասկանալի են և անձանոր այն դրդապատճառները, որոնց հիման վրա, արևելագետ-սեպագրագետ Գ.Ա. Սելիքիշվիլին խնդրու առարկա արձանագրությունը տեղադրել է Աղամիսան (ներկայիս՝ Վարդանոր) գյուղից մոտ 15 կմ հարավ, Սևանա լճի հարավ-արևմտյան ափին գտնվող Աղիաման (ներկայիս՝ Ներքին Գետաշեն) գյուղի մերձակայքում (YKH – 160): Իրարից ոչ այնքան հեռու տեղավորված այս երկու բնակավայրերի հետ կապված պրոբլեմը, թերևս կարող էր առաջանալ Աղիաման (Ատիաման) և Աղամիսան (Ատամիսան) տեղանվանումների որոշ ննանության ու դրանից բխող պատահական շփորմունքի հետևանքով...

Սարդութիւնը կազմված է պատճենագիր և պատճենագրագիր գործություններուց:

Dhal - di - ni - ni      ba - ú - s̄i - ni  
<sup>1</sup>sar - du - ri - še      <sup>1</sup>ar - giš - te - hi - ni - še  
 a - li      URU tú - li - hu - ni      URU · LUGÁL - nu - si  
<sup>1</sup>si-na-li-bi-i      <sup>1</sup>Lu - e - [ri] - hi - ni - i  
 gu - nu - šá      ha - u - bi      <sup>1</sup>si-na-li-bi-i  
 LUGÁL      UKU<sup>MES̄</sup> - ra - ni      SAL lu - tú - bi  
 ku-tu-be      pa - ri      KUR u - du - ri - e      ti - ni

Իր գրելաձևով (սեպանշանների ընտրության սկզբունքով), ինչպես նաև քերականական կառուցվածքով (այս արձանագրությունը որոշակիորեն տարբերվում է Վանտոսայի թագավորների և մասնավորապես Սարդուրի II-ի մյուս սեպագիր տեքստերից և անվանաձևների ու դարձվածքների մի քանի ուշագրավ (և անսովոր) դրսերումներ է պարունակում: Ուստի, մինչև տեքստի թարգմանությունը տալը, կարիք կանորադանալ վերջիններիս քննարկմանն ու մեկնաբանությանը:

1. Աշը է զարնում այն հանգամանքը, որ վաճառոսայի արձանագրությունների մեջ առաջին (և միակ) անգամ Սարդուրի անձնանվան առաջին վանկը տրված է ոչ թե ընդունված *sar-* - Ա (Բշբար դիցուհու անունը ներկայացնող) գաղափարագրով, այլ *sar-* բայց սեպանշանով, ինչի պատճառով էլ անվանումից առաջ օգտագործվել է ոչ թե “ID”- Ա (անձնանվան+դիցանվան), այլ “I” - Ա (անձնանվան) բացահայտիչը:

Այս ամենի հետևանքով Սարդուրի Ա-ի անվանունը քննարկվող արձանագրության երկրորդ տողում վանտոսայլան սեպագրով ներկայացվել է ոչ թե տարածված <sup>10</sup> Sar - du - ր, այլ անսովոր Sar - du - ր վանկակապակցությամբ (Պատկանու Կ. 1983, արձանագրություն Ա: ՍԿՀ-160): Այնպիսի տպագրություն է ստեղծվում, որ արքայի անձնանունից, կարծես թե միտումնավոր կերպով զատվել են աստվածային խորհրդանիշն ու իմաստը...

2. Струнти չորրորդ տողում, նվաճված ցեղամիության անվանումը ներկայացնող սեպանշաններից երրորդը վնասված է: Այս փաստն արձանագրված է ինչպես Ք. Պատկանյանի կողմից արված զժանկարում (Պատկան Կ. 1883, արձանագրություն II, տող 4), այնպես էլ Մ. Նիկոլսկու հրատարակած լուսանկարում (Никольский М. 1896, աղ. XXVIII): Երկու արևելագետներն էլ վնասված վանկը կարդում են -Ա- -Ռ- , իսկ ողջ երկրանումը <sup>ԿՈՐ</sup>Լուերի ին - «Լուերի» կամ «Լուերի» տոհմի երկիր»: Գ.ր. Սելիքիշվիլին, ըստ Սարդուրի II-ի տարեգրության համապատասխան հատվածի (УКН - 156, DI + DII, 5 - 6) վնասված սեպանշանը վերականգնում է որպես -Վ- «հս» և համապատասխանաբար արձանագրված երկրանումն ոնթեռոցում <sup>ԿՈՐ</sup>Լուշիլի-

«Լուելիսու» տոհմի երկիր»: Ըստ ամենայնի, Սարդուրի Ա-ի վերոհիշյալ տարեգրության մեջ, ու և կանկերի սեպանշանների նմանության պատճառով, փորագրող վարպետի կողմից քոյլ է տրվել տեխնիկական սխալ՝ -Ռ- - ու վանկի փոխարեն, ուղղահայաց մեկ սեպի բաց քոյնման պատճառով արձանագրվել է՝ -Վ- -ի: Ուստի մենք հավանական ենք համարում Զ. Պատկանյանի վերականգնումը, առավել ևս, որ քննարկ-վող երկրանունը, գրեք նույն ձևով (<sup>KUR</sup>Lueruhi - «Լուերուխի երկիր» կամ «Լուերու տոհմի երկիր») հանդիպում է նաև Սարդուրի Ա-ի հաջորդ՝ Ռուսա 1-ի Ծովինարում (Սևանա լճի հարավային ափի) քողած արձանագրության մեջ (УКН - 2664):

3. Դարձյալ առաջին (և միակ) անգամ տեքստի 6-րդ տողում օգտագործված է <sup>SAL</sup>lu - tu - bi արտահայտությունը, որը կազմված է «<sup>SAL</sup>lu-tu -» - «կին» արմատից և բայի առաջին դեմքի, եզակի թվի, անցյալ ժամանակի «-bi» վերջավորությունից: Նմանատիպ հոլովում ունեցող վանտոսայան մի խումբ բառերի (օրինակ՝ «a-gu-bi»՝ «անցկացրի, տարա», «a-nia-aš-tu-bi»՝ «այրեցի», «ha-ú-bi»՝ «նվաճեցի», «ka-ru-bi»՝ «հաղթեցի», «ku-tu-be»՝ «ուսղություն վերցրի, հասա», «ši-di-iš-tu-bi»՝ «կառուցեցի, շինեցի», «te-ru-bi»՝ «դրեցի, տվեցի, շնորհեցի», «za-du-bi»՝ «արեցի, կատարեցի», «za-aš-gu-bi»՝ «սպանեցի» և այլն) համայնքությունը քոյլ է տալիս «<sup>SAL</sup>lu-tu-bi» արտահայտության համար հավանական համարել «կին դարձրի»՝ այսինքն «ամորձատեցի» իմաստը: Վանտոսայան սեպագիր տեքստերում հանդիպում է այս արտահայտության հոմանիշը՝ «uediadubis», որը կազմված է «uedianis»՝ «կին» և «dubis»՝ «արեցի» բառարմատներից (УКН - 128, B15,39: УКН - 156C<sub>14</sub>: УКН, էջ 410): Ի դեպ, նման վերծանության կողմնակիցն էր նաև Գ. Ծերեթելին (Церетели Գ. 1939, տեքստ 21):

Արքած մեկնարանությունները մեզ հնարավորություն են ընձեռում մերժել Գր. Մելիքիշվիլու այն ենթադրությունը, թե իբր քննարկվող տեքստը փորագրող վարպետը «<sup>SAL</sup>lu-tu»-բառի և եւ վանկի միջնամասում մոռացել է արձանագրել «րա-րս»՝ «քշել» երկվանկ բայը և, դրանով իսկ խաթարել «րա-րս»՝ «քշեցի» արտահայտությունը (УКН - 160, ծանոթություն 1):

4. Տեքստի 7-րդ տողում արձանագրված «<sup>KUR</sup>udurietini» երկրանունը Գր. Մելիքիշվիլին ընթերցում է «<sup>KUR</sup>uduri eti[ú]ni» ձևով, գտնելով, որ փորագրող վարպետի կողմից ու ու վանկերի միջնամասում սխալմամբ բաց է քոյնվել ն սեպանշանը և, որ տեքստում, փաստորեն, խոսվում է Սևանի ավազանի արևմտյան ու հարավային ափամերձ շրջանում տեղակայված ցեղամիությունների համադաշնության՝ Ռուրի-Եթունի երկրի մասին, առավել ևս, որ նույն արքայի սեպագիր տարեգրության մեջ այնպես՝ «<sup>KUR</sup>udurietiunip» («Ռուրի-Եթունի երկիր»):

Քննարկվող արձանագրության (УКН - 160) համապատասխան հատվածի ընթերցման մի այլ տարբերակ է առաջարկել Գ. Ծերեթելին: Ըստ նրա «<sup>KUR</sup>udurietini» անվանումը կարող է բաղկացած լինել «<sup>KUR</sup>udurie»՝ «Երկիրն Ռուրիի» և «tinip»՝ «անուն» ինքնուրույն հատվածներից և բառացիորեն նշանակի «Երկիրն Ռուրիի անվան»՝ այսինքն «Ռուրիի անունը (կրող) երկիրը» (Мещанинов И. 1978, էջ 387):

Արքած քննարկումներն ու մեկնարանությունները քոյլ են տալիս Վարդանորի (Աղամիսանի) արձանագրությունը քարզմանել հետևյալ կերպ:

Խալդյան հրամանով  
Սարդուրի Արգիշթորդին  
ասում է. «Թուլիխուն՝ արքայական քաղաքը  
Ծինալիրիի՝ Լուելիի ցեղի առաջնորդի,  
կովով գրավեցի: Ծինալիրի

թագավորին ժողովրդի առջև կիմ դարձրի («ամորձատեցի»):

Հասա մինչև Ուղուրի - Երի(ու)նի երկիրը (կամ՝ Ուղուրի անվամբ երկիրը):

Արձանագրության մեջ հիշատակվող Ծինալիքի թագավորի Լուերիխի երկիրը, ինչպես նշեցինք Վերևում, Սարդուրի 2-րդի սեպագիր տարեգրության մեջ համդիպում է մ.թ.ա. 753-752 թթ. իրադարձությունների նկարագրության մեջ Լուեխու(ուխի) (ՍԿՀ - 156 DI + DII<sub>5-6</sub>), մ.թ.ա. 744 - 741թթ. իրադարձությունների ժամանակ՝ Լուերունի (ՍԿՀ - 155D<sub>48</sub>) և մ.թ.ա. 741-739 թթ. դեպքերի առնչությամբ՝ Լուիպրունի (Լուիքրունի) (ՍԿՀ - 155F<sub>23</sub>) ձևերով: Արևելագետների միահամուռ կարծիքով Վարդաճորի արձանագրության մեջ և Սարդուրի II-ի տարեգրության տարրեր հատվածներում հանդիպող այս տեղանունները, միևնույն երկրի կամ ցեղամիության անվանական տարրերակներն են (Աղոնց Ն. 1972, էջ 207: Կարագեզեան Յ. 1998, էջ 263-265: Церетели Գ. 1939, № 21: Կառաջյան Գ. 1941, էջ 11: Պուտրովսկի Բ. 1959, էջ 80: ՍԿՀ, էջ 433: Արցունյան Հ. 1970, էջ 264-265: Մեծանին Ի. 1978, էջ 384-387: Արցունյան Հ. 1985, էջ 127, 131-132 և այլն): Նույն երկրանունը Լուերուխի ձևով հիշատակվում է նաև Ուուսա I-ի (մ.թ.ա. 735-714թթ.) կողմից Սևանա լճի հարավային ափին գտնվող Ծովինար (նախկին՝ Ջյուլաղրան) գյուղի մոտ քողած արձանագրության մեջ (ՍԿՀ - 266<sub>4</sub>):

Սևանի ավագանում տեղաբաշխված ցեղախմբերի և նրանց համադաշնության՝ Ուղուրի-Երիունիի վերաբերյալ Վանտոսայի թագավորների արձանագիր տվյալները բոյլ են տվել արևելագետներին այդ համադաշնության մեջ մտնող Լուերունի (Լուերիխի-Լուիքրունի-Լուերուխի) ցեղամիությունը (երկիրը) տեղորոշել Սևանա լճի հարավ-արևմտյան անկյունում: Ըստ որում, նրանից արևելք՝ Սևանա լճի հարավային ափի երկայնքով տեղաբաշխված են եղել Քամանի, Արքուրինի և դեպի Արցախ՝ Ուրտեխինի, իսկ հյուսիսի՝ Աղախունի և Վելիքուխի երկրները: Դատելով այս տվյալներից Լուերուխի/նի/ երկիրը, ամենայն հավանականությամբ, գրադեցրել է Արգիճի, Ծակքար և Վարդաճոր գետերի ավագանուներն ու Վերջիններիս միջնամասը ներառող տարածքը: Այս սահմաններում ներկայումս, հյուսիսից հարավ հաջորդականությամբ տեղաբաշխված են Վարդաճոր (Աղամիսան), Ծակքար, Լիճք (Գյոլ), Ներքին Գետաշեն (Ներքին Աղիաման), Վերին Գետաշեն (Վերին Աղիաման), Գեղիովիտ (Վերին Ղարանլուղ) և Քարաձի (Մաղինա) բնակավայրերը: Ուստի «Ալբեր» ամրոց-պահակակետն ու քննարկվող քարայր-դամբարանը, ամենայն հավանականությամբ, կառուցվել են իրենց հպատակեցված Լուերուխի/նի/ երկրի տարածքում:

Սեկ անգամ ևս նշենք, որ Գեղիովիտի քարայր-դամբարանի, ինչպես նաև «Ալբեր» ամրոց-պահակակետի Լուերուխի/նի/ երկրի տարածքում կառուցելու հանգամանքը պատահական չէ, ինչը, մեր կարծիքով, հնագիտական և աշխարհագրական մի շարք փաստերին զուգահեռ, անուղղակի կերպով վկայում են նաև քննարկվող երկրի և նրա մայրաքաղաքի անվանումների, ինչպես նաև դրանց տիրակալի անձնանվան ստուգաբանությունները: Այս ուղղությամբ արդեն արված աշխատանքներն ավարտուն և ամբողջական չեն, որի պատճառով էլ նպատակահարմար ենք գտնում քիչ ավելի մանրամասն ներկայացնել քննարկվող խնդրին առնչվող մեր նկատառումները:

Սկսենք Լուերուխի/նի/ երկրի տիրակալ՝ Ծինալիքի/նի/ անվան ստուգաբանությունից: Դեռևս ժամանակին Ն. Աղոնցն անդրադառնալով վանտոսայան (ուրարտական) Ծինուխարդի (տարբերակ՝ Ծինույարդի) դիցանվան ստուգաբանությանը, Վերջինս դիտարկել է որպես «ծինուի» և «արդի» (ըստ նրա՝ «արև») քաղաքիներից կազմված քարդ բառ և բնականորեն առաջարկել համանման վերաբերմունք հանդես բերել նաև Ծինալիքի (Ծինա-լիքի) անձնանվանը (Աղոնց Ն. 1972, էջ 228): Գ. Զահուկյանի կարծիքով ևս Ծինուխարդի դիցանվանը կազմված է «Ծինուի» (հայերեն՝ «ծին», զարմ, սերմ,

սերունդ» իմաստով, վաղագույն տարբերակը՝ «ծինո») և «-արդի» (ըստ Գ. Զահուկյանի հավանաբար «աստված») բաղադրիչներից (Զահուկյան Գ. 1987, էջ 444):

Չարունակելով Ն.Աղոնցի Ենթադրությունը, մենք նպատակ ունենք հիմնավորել Ծինալիրի(նի) անվան «ծինա-» և «-իրի(նի)» բաղադրիչներից կազմված լինելու վարկածը: Նախ նշենք, որ ինչպես Ծինուխարդի դիցանունը, այնպես էլ Ծինալիրի(նի) անձնանունը սուկ վանտոսայան տեքստերում «ծինա-», «ծինուի-» բաղադրիչներով հանդիպող եզակի դրսերումներ չեն: Որպես բառարմատային համանման բարդ գոյացություններ, թերևս, Վերջիններիս խմբին են դասվում Իօվանի Երկրի տիրակալ Դիուծինի (Դաստի) անձնանունը, ինչպես նաև վանտոսայան արձանագրություններում հիշատակվող Տուարածինի Երկրի (<sup>KUR</sup>Tuarasini) և աստորական սեպագիր սկզբանբյուրներում հանդիպող Արմարիլ Երկրի Ծինունակ և Ծինիշպալա քաղաքների անվանումները (ΥΚՀ – 155C<sub>51</sub>: Արտյոնյան Ի: 1985, էջ 16, 38, 40, 59, 196, 233, 235, 238, 239): Այս շարքն առավել ներկայացուցչական կլինի, եթե Վերջիններիս ավելացնենք նաև Սանգիրուսու Երկրի (Ուրմիա լճից հյուսիս) Ծաղիշծինա, Կիծուվատնա Երկրի տարածքում՝ Խեթական պետության սահմանի մոտ տեղաբաշխված Ծինծիլուվա, ինչպես նաև բուն Խեթական տեքստերում մաս կազմող Պարպածինա, Ծինիթնուվա և Ծինխուրա քաղաքների անվանումները (Խաչագրյան Բ. 1971, էջ 91: Արձնինգա Բ. 1982, էջ 32-33, 75: Արտյոնյան Ի. 1985, էջ 238):\*

Վերը բերված բոլոր հատուկ անուններում իսկապես աչք են զարնում «ծին-», «ծինու-», «ծինա-» և «-ծինի-» բաղադրիչները, որոնք, ինչպես դիպուկ նկատել է ալրոֆ. Գ. Զահուկյանը, իմաստով իրոք կարող են առնչվել հնդեվրոպական «g'ēn-»՝ «ծին, զարմ, սերունդ» բառարմատին: Եթե առաջարկված Ենթադրությունը ճիշտ է, ապա հետևում է, որ Դաստի անձնանունը պետք է որ նշանակած լինի «ոփվածին, աստվածածին, ոյուցազն, ոյուցընկեց» կամ «զուսածին, շողածին», քանի որ նրա «diu-» առաջին բաղադրիչի մեջ ևս նշմարելի է հնդեվրոպական «\*dei-» (1. «շողալ, օր, տի, լոյս», 2. «աստված, ոփի» իմաստներով) բառարմատի գոյությունը (Զահուկյան Գ. 1987, էջ 84): Նույն տրամաբանությամբ <sup>KUR</sup>Tuarasini («Երկրի Տուարածինի») անվանումն իր «tuara-» (համապատասխանում է հնդեվրոպական «tūar» և հայերեն «տուուր > տավար» բառարմատներին) բաղադրիչի շնորհիվ պետք է որ ստուգաբանվի «Տավար (տուր, ցոլ) ծնող Երկիր», այսինքն, ըստ Էտիռյան, համահունչ է Մեծ Հայքի Տուրությունա աշխարհի (բառացիորեն՝ «Տուր (տավար) բերող-ծնող Երկրամաս») և Վասպուրական աշխարհի Ասրեթանի գավառի (բառացիորեն՝ «Առ-արու (նաև՝ ցոլ, տավար) բերող-ծնող տարածք») անվանումներին: Ըստ Երևույթին նույն սկզբունքով են մեկնաբանվում նաև աստորական տեքստերում հանդիպող «Ծինունակ» (թերևս «ծին» և «ունակ, կարող» բառարմատներից) և «Ծինիշպալա» («ծին» և «իշպալա»՝ գուցե «ասպ, ծի» բառարմատներից) տեղանունները:\*\*\*

\* Այս համատեքստում ամելորդ չէ իշատակել խեթական տարբեր ծխակատարություններում հանդես եկող «ծինթուխի» կարգավիճակ ունեցող աղջիկների, ինչպես նաև արարողակարգերի ժամանակ կիրառվող «ծինար» («ծինիր») և «խանծինարա» առարկաների անվանումները (Արձնինգա Բ. 1982, էջ 27, 71, 72, 75, 113, 129-132, 134, 202, 209):

\*\* Այս առումով տե՛ս Գ.Ր.Ղափիսնցյանի և Ս.Հարությունյանի իրապարակումները (Հարությունյան Ս. 2000, էջ 95: Կապահպահ Դ. 1956, էջ 222-223):

\*\*\* «Ծին-» բաղադրիչով տեղանունները բազմաթիվ են նաև պատմական Հայաստանի գավառներում: Մասնավորապես, Ծնառիծ գյուղ (նաև՝ Ծնառնի վանք) գոյություն ուներ Բարձր Հայքի Հարանաղյաց գավառում, Ծնավոր գյուղ՝ Երզրումի նահանգի Թորթումի գավառակում, Թորթում գետի ափին, Ծնավտկոս (Ծնոտկույս) գյուղ՝ Այրարատ աշխարհի Գարեյյան գավառում, Ծնի անվանմբ գյուղ՝ Վանի նահանգի

Այս համատեքստում, մեր կարծիքով, հնարավոր է մեկնաբանել նաև Լուերու (Խի/նի) երկրի թագավոր Ծինալիրի(նի)ի անձնանունը: Ինչպես նշեցինք վերևում, մենք համամիտ ենք Ծինալիրի(նի) անձնանվան՝ Ն. Աղոնցի կողմից արված, «Ծինա-» և «-լիրի(նի)» մասնատմանը: Ըստ որում, եթե «ծինա-» բաղադրիչը, այստեղ ևս, ըստ ամենայնի, կրում է «ծին, զարմ, սերունդ, ազգ» իմաստն, ապա «-լիրի(նի)» բաղադրիչի համար, մեր կարծիքով, առավել համադրելի են հայերենում հանդիպող «լիրս» կամ «լիփս» և «լիբանոտոս» կամ «լիանոտոս» բառարմատները, որ բառացիորեն նշանակում են «հարավ-արևմտյան քամի»: Հր. Աճառյանի կարծիքով վերոհիշյալ բառերը կարող են փոխառնված լինել հունարեն «λιφ» և լատիներեն «lībs»՝ «հարավ-արևմտյան քամի», ինչպես նաև եբրայերեն «lebānōn» «սպիտակ» (ավելի ուշ նաև՝ «խնկարույր ծառ, կնդրուկ») բառարմատներից (Աճառյան Հ. 1973, էջ 280, 287): Թերևս ավելի հավանական է, որ «-լիրի(նի)» բաղադրիչն անմիջական կապ ունենա հնդեվրոպական «\*alb<sup>III</sup>o»՝ «սպիտակ, լուսավոր» արմատի հետ, այնպես ինչպես խեթերեն «alra-» «ամպ», հունարեն «αλφο-ζ»՝ «մաշկի վրա սպիտակ նշան, հետք», լատիներեն «albus»՝ «սպիտակ, ճերմակ», ումբրերեն «albu»՝ «սպիտակ, ճերմակ», ոուսերեն «օլովօ»՝ «ամագ (բառացիորեն՝ սպիտակ, փայլուն մետաղ)» և հնդեվրոպական այլ լեզուներում հանդիպող բառերը (Տոպորօ Բ. 1975, էջ 81: Գամկրելինձ Դ., Իվանօ Բ. 1984, էջ 783): Եթե բերված զուգահեռները համապատասխանում են իրականությանը, ապա Լուերու(Խի/նի) երկրի տիրակալի անվան երկրորդ բաղադրիչը պետք է որ նշանակած լինի «սպիտակ, ճերմակ» կամ «քամի, հողմ»: Այսինքն՝ «Ծինալիրի(նի)» անձնանունը հնարավոր է «ճերմակածին, Լուսածին» կամ էլ «Հողմածին, Փոքրկածին, Քամուց ծնված» իմաստներն արտահայտած լինի:

Այս մեկնաբանությունն ուշադրության արժանի մեկ այլ եզրահանգման է բերում: Բանն այն է, որ Մերձավոր Արևելքի մի շարք պետություններում հնամենի սովորույթ կար, ըստ որի թագավորների, թագաժառանգների և արքայազնների մի զգալի մասի անձնանունները կամ անմիջապես կրկնում էին հողմի և տարերքի աստծո անվանումը, կամ էլ իրենց մեջ ներառում էին այնպիսի բառարմատներ, որոնք ուղղակի նշանակում էին քամի, հողմ, փոքրորիկ: Այս առումով մերձավորարևելյան Բել (Բալու, Բաալ, Վաալ) աստծո (հողմի-տարերքի աստված) անունը հանդիպում է Ասորեստանի (Բելր, Բելուրանի, Աշուր-Բել-Նիշեշու, Աշուր-Բել-կալա), Բարելոնի թագավորության (Մարդուկ-Բել-կերի, Բել-իրնի) և Տյուրոսի թագավորության (Բաալ) արքայանուններում (Բիկեր-մահ Է. 1976, էջ 184-188: Ռիֆմահ Ի. 1987, էջ 157, 221): Հողմի և տարերքի աքադական աստված Ադադի (Ադրու) անվանումը մեկ հազարամյակից ավել (մ.թ.ա. XIX-VIII դր.) ժամանակահատվածում 13 անգամ կրկնվում է ասսուրական արքայացուցակներում. այդ բվում 5 անգամ՝ Չամշի-Ադադ, 2 անգամ՝ Չարմա-Ադադ, 3 անգամ՝ Ադադ-Ներարի, 2 անգամ՝ Երիքա-Ադադ և 1 անգամ՝ Ադադ-Ծալուլու համադրությամբ (Բիկերմահ Է. 1976, էջ 187-188): Նույն աստծո անունը Նուր-Ադադ, Ծիլ-Ադադ, Ադադ-շում-իդդին, Ադադ-շում-ուծուր, Ադադ-ափլա-իդդին անձնանվանական տարբերակներով վկայված է նաև Բարելոնի թագավորության մ.թ.ա. XIX-XI դարերի արքայացուցակներում (Բիկերմահ Է. 1976, էջ 182-184): Ըստ որում, այս անվանումների հետ միասին, հատկապես Կասսիտական հարստության շրջանում (մ.թ.ա. 1742-1155 թթ.), Բարելոնում հանդիպում են նաև հնդեվրոպական Բորեաս աստծո (դարձյալ Հողմի-տարերքի աստված) անվանումից ածանցված արքայանուններ

---

Ծատախի գավառակում, Ծերկ (Ծնկագեղ) անվանք գյուղ Խարբերդի նահանգի Ակնի գավառակում և այլն (ՀՀԾՏԲ, 1988, էջ 858):

(Բուրնա-Բուրաշ կամ Բուրնա-Բուրարիաշ, Ուլամ-Բուրաշ կամ Ուլամ-Բուրարիաշ) (Բներման Յ. 1976, էջ 183): Հանգամանք, որ առանձին և խորն ուսումնասիրության խնդիր է: Ավելացնենք նաև, որ Կասսիտական հարստության վերջում և հատկապես Խսինի II հարստությունից (մ.թ.ա. 1150-1027թթ.) սկսած ընդհուած մինչև Նորրարելոնյան թագավորության վախճանը (մ.թ.ա. 626-539), այս տերության արքայանուններում մոտ երկու տասնյակ անգամ, տարբեր համարումներով, սկսվում են գործածվել հողմի և փոքրորդի հետ առնչվող մեկ այլ աստծո՝ Մարդուկի անվանումը (Մարդուկ-ափլա-իդդին, Մարդուկ-կարիտ-ախսեշու, Խոտի-Մարդուկ-քալատի, Մարդուկ-նադին-ախսեն, Մարդուկ-շապիք-զերի, Մարդուկ-ախսե-էրիքա, Մարդուկ-գաքիր-շումի, Մարդուկ-քալասսու-իքի, Մարդուկ-ապլա-ուծուր, Էրիքա-Մարդուկ, Սուշեգիք-Մարդուկ, Ամել-Մարդուկ, Լաբաշի-Մարդուկ և այլն) (Բներման Յ. 1976, էջ 183-185):

Մերձավոր Արևելքի մ.թ.ա. II-I հազարամյակների մի շարք տերություններում լայն տարածում ունենալ խեթա-խոտիխական Թեշուր աստծո (Դարձյալ Հողմի-Տարերքի աստված) անվանումից ածանցված արքայանունները: Մասմակորապես խեթական թագավոր Մուվարալի (մ.թ.ա. XIV-XIII դարերի սահմանագիծ) որդին կրում էր Ուրիսի-Թեշուր անունը (Գենրի Օ. 1987, էջ 27, 35, 44, 47, 60 և այլն):

Այս առումով տարբերակներն ավելի մեծարիկ էին Արրապխայի արքայանուններում (Շիլվա-Թեշուր, Կիայի-Թեշուր, Իրխի-Թեշուր, Խիշմի-Թեշուր, Սուշ-Թեշուր և այլն) (Վիլխելմ Գ. 1992, էջ 84-85, 89):

Վերոհիշյալ խեթա-խոտիխական դիցանունն իր տարբերակներն ուներ նաև Հայկական լեռնաշխարհի հարավում տեղաբաշխված Շուբրիայի արքայանուններում: Վերջինիս թագավորը կոչվում էր Նիք-Թեշուր, Եղբայրը՝ Խու-Թեշուր (ինն ընթերցումը՝ Բագ-Թեշուր), արքայազները՝ Շերփի-Թեշուր և Լիզի-Թեշուր (Տարկուսյան Դ. 1989, էջ 28-29, 61-62): Զննարկվող խնդրի շրջանակներում, առաջին հայացքից այն տպավորությունն է ստացվում, որ Մերձավոր Արևելքի Վերոհիշյալ տերություններից կարծես թե առանձնանում էր Վանտոսափի (Ուրարտու) թագավորությունը: Վերջինիս դիցարանում թեև կար խեթա-խոտիխական Թեշուրին և՝ անվանապես, և՝ ֆունկցիայի առումով համարժեք Թեյշեթա աստված (ի պատիկ որի անվանակոչվում էին նույնիսկ քաղաքներ և ամրոցներ), սակայն վանտոսայան արքաների անձնանվանական համակարգում, վերջինս որպես անվանակերտ քաղաքիչ չէր կիրառվում: Թերևս պատճառն այն էր, որ «հողմ, քամի, փոքրորիկ» հասկացությունները անուղղակի կերպով ամփոփվում և ներկայացվում էին վանտոսայան մեկ այլ արքայանվան մեջ: Խոսքը վերաբերում է «Արգիշթի» (տարբերակներ՝ «Արգիշտի», Արգիստի, Արգիսրի, Արգիշթե, Արգիսրե») անձնանվանը: Այն կրում էին Վանտոսափի թագավորության գահին քաղմած երկու արքաներ՝ Արգիշթի I-ը (մ.թ.ա. 786-764 թթ.) և Արգիշթի II-ը (մ.թ.ա. 713-685 թթ.): Այս անձնանունը վանտոսայան սեպագիր տեքստերում հանդիպում է «Ar-gi-iš-ti», «Ar-giš-ti», «Ar-giš-te» տարբերակներով (ΥԿՀ, էջ 418-419): Վաղուց արդեն արևելագետների մեջ շրջում է այն տեսակետը, որ «Արգիշթի» անվան հիմնամասը «argi-» կամ «argiš-» քաղաքիչը կարող է լինել: Սրան ամենից ավելի համապատասխանում են հնդեվրոպական «\*arg-» կամ «\*ar(e)g-»՝ «սպիտակ, փայլուն», կոկորդայինների հաշվառմամբ «\*Hark'-»՝ «սպիտակ, փայլուն, արծար» և թերևս «(a)rg<sup>[hi]</sup>a-»՝ «արժեք, գիճ, հարգ» (հմմտ. հայերեն «արկաք»երկաք», «արձաք», «արծաքագիճ», «յարգեմ», «յարգուն», «անարգ» բառերի հետ) բառարմատները (Աճառյան Հ. 1971, էջ 301-302: Զահոնկյան Գ. 1987, էջ 56-57: Պետրոսյան Ա. 1997, էջ 12-15: Ղամկրելիձե Տ., Իվանով Վ. 1984, էջ 217, 229, 713, 919, 925): Այսինքն՝ <sup>1</sup>Argisti անձնանունը, ըստ վերը

բերված զուգահեռների ստուգաբանվում է «սպիտակ, փայլուն» իմաստով: Այս համատեքստում ուշագրավ է՝ Argist անվան մի այլ զուգահեռ ևս: Բանն այն է, որ «\*arg-» հնդեվրոպական արմատից հայերենում ունենք նաև «արգեստես»՝ «հյուսիսարևմտյան քամի» և «արգիտես»՝ «արագ անցնող կայծակ» բառերը: Ըստ Հ. Աճառյանի, դրանցից առաջինը կապված է հունարեն «օրգեստիչ»՝ «արևելյան կամ հյուսիս-արևմտյան քամի», իսկ երկրորդը՝ «օրգութէչ»՝ «փայլող, փայլատակող» բառագոյացությունների հետ: Մրանք երկուսն եւ, մեծանուն լեզվաբանի կարծիքով ածանցված են «\*arg-» հնդեվրոպական բառարմատից և, ըստ Էության, խորհրդանշում են մի գործողություն կամ երևույթ, որի ընթացքում քամին ու հողմը կայծակների օգնությամբ քշում են ամպերն ու բացում լուսափայլ երկինքը (Աճառյան Հ. 1971, էջ 305): Միակ ավելացումն այն է, որ հայերենի և հունարենի վերոհիշյալ նույնիմաստ բառերը, հանձին վանտոսայան «\*argist»-ի, թերևս ունեն՝ դարձյալ հնդեվրոպական «\*arg-» կամ «\*ar(e)g-» արմատից սերող, իրենից առավել վաղ հոմանիշը:

Հարադրանքից հետևում է, որ «Արգիշթի» անձնանվան հիմքում ընկած «argi-» կամ «argis-» բաղադրիչը կարող էր ունենալ 1. «սպիտակ, փայլուն» և 2. «քամի, հողմ» իմաստները, որոնք միաժամանակ ներառվելով մեկ ամբողջության (տվյալ դեպքում հատուկ անվան) մեջ, ամենայն հավանականությամբ խորհրդանշել են վերջինիս կրողիմ՝ բազավորին անցնող, վանտոսացիների Հողմի-Տարերքի և Արևի ասավածների (Թեյշերա+Շիվինի) զուգորդված ֆունկցիան: Նույնական իմաստային ծանրաբեռնվածություն աստորական արքայացուցակներում կրում է Շամշի-Աղադ (Արևի աստված+Հողմի-Տարերքի աստված) անձնանունը:

Ահա այս համատեքստում առավել քան խոսուն է Լուերու(խի/նի) երկրի բազավոր Ծինալիքի(նի)ի անվան «Ծինա-»՝ «ծին, ծնունդ» և «-լիքի(նի)»՝ 1. «սպիտակ, փայլուն, լուսավոր», 2. «քամի, հողմ» բաղադրիչների ստուգաբանությունը: Ամբողջապես քըն-նարկվող անձնանունը հավանաբար ընկալվել է «(Արևի) լույսից և հողմից ծնված» իմաստով, ինչը միանգամայն համարժեք է աստորական «Շամշի-Աղադ» և վանտոսայան «Արգիշթի» արքայանուններին:

Եթե արված եօրականգումները մոտ են իրականությանը, ապա թեականորեն կարելի է ենթադրել նաև, որ Ծինալիքի(նի) արքայանվան մեջ, «-լիքի(նի)» բաղադրիչի տեսքով առկա է ոչ միայն «հողմ, քամի, փոքրիկ» իմաստավորող բառարմատը, այլ թերևս հենց Լուերու(խի/նի) երկրի (և միգուցե ոչ միայն նրա) Հողմի-Տարերքի աստծո անունը՝ Լիքի (կամ Լիքինի)\*: Գուցե հենց այս ենթադրվող դիցանվան արձագանքներն են կրում Հայկական լեռնաշխարհի մի շարք շրջաններում հանդիպող տեղանունները. այդ քվուն Լիքի (Լիք) անվամբ գյուղը Կարսի մարզի Օլքիի շրջանում, Լիքանոս գյուղը Երգրումի նահանգի Քարերդ գավառակում՝ Շորոխս գետի վերին հոսանքում, Լիկանա (Լիկանե, Լիկանիա) քաղաքը Քարումի մարզում, Լիկանա անվամբ դաշտը Շորոխսի ավազանում, Լիկանա գավառը Ախլցիսայի փաշայությունում, Լիկան գյուղը Քիթլիսի նահանգի Սղերդ գավառում և այլն (ՀՀԸՏԲ, 1988, էջ 584, 591):

Ոչ պակաս հետաքրքրական է նաև Լուերու(խի/նի) երկրի մայրաքաղաք Թուլիխուի (տարբերակ՝ Տուլիխու) անվանական ստուգաբանությունը: Մեր կարծիքով այս քաղաք-

\*Այս առումով, համեմատության համար կարելի է քերել դարձյալ վանտոսայան արձանագրություններում հիշատակվող Պուլուսի երկրի (Քրանական սարահարքի հյուսիս-արևմտյան հատվածում) Li-ib/ip-li-ս-ա բնակավայրի անվանումը, որում հնարավոր է «Li-ib/ip-»-ը ներկայացնում է վերոհիշյալ Հողմի-Տարերքի աստծո անունը, «-լի-»-ն՝ հոգնակիսկերտ ածանց է, իսկ «-սու»-ն՝ երկրակերտ վերջածանց: Ուստի Ծինալիքի(նի) բնակում են հողմերը, կամ ավելի ստույգ՝ «Հողմաշատ քաղաք»:

անունը համադրելի է հայերեն արմատական բառարանում առկա և, ըստ Հր. Աճառյանի հնդեվրոպական «stol»՝ արմատից ծագող «ստող», «տիլ», «տողիո», «տողխ»՝ «տոլ, տիլ, տիղմ, ցեխ» (Աճառյան Հր. 1979, էջ 414, 418), ինչպես նաև «դեղեխ»՝ «քամուց, ալեկո-ծությունից պղուրված, ապականված ջուր» (Աճառյան Հր. 1971, էջ 650-651) և «տա-ղախ»՝ «տիղմ, ցեխ» (Զահուկյան Գ. 1987, էջ 591, 596) բառարմատներին: Եթե առաջա-դրված հիմնավորումները մոտ են իրականությանը, ապա պետք է ենթադրել, որ Լուերու(Խի/նի) երկրի մայրաքաղաքն իր նման իմաստային մեկնարանություն ունեցող անվանումը պետք է որ ստացած լինի Սևանա լճի առավելյա հատվածում՝ քամուտ, տղմոտ և ալեծուփ մի տեղ կառուցված լինելու պատճառով: Այն հանգամանքը, որ Թուլիխու-Տուլիխուն իմաստաբանորեն կարող էր կապված լինել ջրի, տիղմի ու ճահճու-տի հետ անուղղակի կերպով կարծես թե վկայում են նաև հայերեն գրավոր սկզբնադր-յուրները: Վերջիններում Թուլիխու-Տուլիխուի տեղանվանական գուգահեռները կամ գետեր են, կամ էլ բնակավայրեր, որ անմիջականորեն կառուցված են ծովեզրին կամ գետափին (այսինքն՝ երկու դեպքում էլ այս կամ այն շափով առնչվում են ջրի և տիղմի հետ): Այսպես. Թուղիս անվամբ գետ և վերջինիս մոտ գտնվող Թուղիս անվամբ գյուղ հայտնի էր Բիրլիսի նահանգի Բիրլիս գավառում՝ Վանա լճի հարավ-արևմտյան ավին (ՀՀԾՏԲ 1988, էջ 491): Դեկը անվամբ գյուղ գտնվում էր Փոքր Հայքում, Գյումուշխանեի գավառում, Սև ծովը թավվող վտակներից մեկի ափին (ՀՀԾՏԲ 1988, էջ 73): Խարբերդի լճի շրջակայքում տեղորշվող Տլուք գավառն ու նրանում գտնվող Ծով կամ Ծովք կա-թողիկոսական բերդն է հիշատակում Մատքեռս Ուտիայեցին, ըստ որում, ուղղակիորեն կարծես հուշելով նաև ջրի ու ճահճուտների հետ վերջիններիս կապը (Մատքեռս Ուտիայեցի 1973, էջ 143, 189, 239, 249, 292, 346, ծանոթություն 56): Հավանաբար այս գավառի հետ ինչ-որ առնչություն ունի նաև հայկական պատմական սկզբնադրյուր-ներում Կիլիկիայի և Սիրիայի սահմանագծին հիշատակվող Դոլիխե (տարբերակներ՝ Դելուկ, Դելուք, Դոլիք, Տլուք) բնակավայրը (ՀՀԾՏԲ 1988, էջ 132): Թվարկված տեղա-նունների շարքը, թերևս, կարող են դասվել նաև Երևանի արվարձանում հիշատակվող Տոլք տեղամասի և Սյունիքում գտնվող Տոլքը բնակավայրի անվանումները: Պատկերն առավել ամրողական կլինի, եթե վերոհիշյալ տեղանուններին ավելացնենք նաև Դիար-բերիի նահանգի Արդանա-մաղենի գավառում հանդիպող Թլխըռը գյուղի և Դիարբ-քի քաղաքի մոտ գտնվող Թլխաս գյուղի, Չորրորդ Հայքում վկայված Թլխե (տարբե-րակներ՝ Թլխում, Թլխուտ՝ հավանաբար «ճահճոտ») բնակավայրի, Էրզրումի նահանգի Երզնկայի գավառով հոսող Թլխասօոր գետի և նրա ափին գտնվող Թլխաս գյուղի և Կիլիկիայում՝ Այնքապ-Մարաշ ճանապարհի վրա տեղաբաշխված Թլխում իջևանի անունները (ՀՀԾՏԲ 1988, էջ 455-456): Այն հանգամանքը, որ Թուլիխու-Տուլիխուի ան-վանական գուգահեռները միայն հայկական տեղանուններում հանդիպող պատա-հական գուգադիպություններ չեն, այլ թերևս հնդեվրոպական հնագույն հիմք և որոշակի իմաստ ունեցող «stol»՝ բառարմատի կոնկրետ դրսևորումներ, կարելի է հիմնավորել Հոմերոսի, Մովսես Խորենացու և Անանիա Շիրակացու փաստացի վկայություններով: Հոմերոսն իր «Իլիականում» հիշատակում է Իքակե կղզուց ոչ հեռու գտնվող՝ Դուլիքիոն անունվ (այսպես է կոչվել, հավանաբար, տղմոտ ափ ունենալու պատճառով) մի կղզի (Հոմերոս 1987, էջ 484), որի տեղադրությունն առ այսօր կոնկրետացված չէ: Ավելի սուույգ են Մովսես Խորենացին, Անանիա Շիրակացին և Հովհաննես Դրասխանակերտ-ցին: Այ Խորենացին, ներկայացնելով Պապ թագավորից հետո Հայոց աշխարհում բյու-զանդացիների կողմից գահ բարձրացված Վարազդատ Արշակունու ժամանակաշրջա-նը, նշում է, որ անհնազանդության պատճառով նույն բյուզանդացիների կողմից վեր-

Չինս աքսորվել է Օվկիանոսում գտնվող Թուղիս\* կղզին (Մովսես Խորենացի 1968, էջ 277-278): Նոյն փաստերը կրկնում է նաև Հովհաննես Դրախսանակերտցին (Հովհաննես Դրախսանակերտցի 1996, էջ 54-55): Օվկիանոսում գտնվող Թուղիս կղզին կարծես թե Բրիտանական կղզիների մերձակայքում է տեղորոշում վաղ միջնադարի հայ մեծանուն աշխարհագրագետը (Անամիա Շիրակացի 1979, էջ 258, 266, 270): Այս համատեքսում հարկ է հիշատակել նաև Էգեյան ծովի Ռոդոս կղզուն և բնակչության Ստրառնի կողմից տրվող «Տելիսինիդա» և «Տելիփիններ» անվանումները, որոնք, թերևս, նոյն պես կարող էին ձևավորված լինել տեղանքի (տիղմ, ջուր, ալեկոծություն) առանձնահատկություններից (Страбон 1964, էջ 443, 449, 611, 612, 924): Չի բացառվում, որ նախապես նման բովանդակություն ամփոփված լինի նաև Տուլիար (գտնվում է Տաջիկստանում, Չիլուչչոչաշմա գետակի ավազանում) կոչվող վայրի և հայտնի հնագիտական հուշարձանի անվան հիմքում (Մահմելևտամ Ա. 1968, էջ 6): Թվարկված բոլոր տեղանուններն եւ, ըստ էության, գտնվում են հնդեվրոպական ցեղերի տարածման աշխարհագրական սահմաններում և, հնարավոր է, որ իսկապես վերջիններիս նախալեզվին պատկանող մեկ ընդհանուր բառարմատից սկզբանվորված լինեն:

Բերված տվյալներն ու մեկնաբանությունները մեզ բույլ են տալիս չհամաձայնվել արևելագետ Հ. Կարազյողյանի այն կարծիքին, ըստ որի Թուղիսու տեղանունը կազմված է «քուլ-» (իմաստն անհայտ) և հյուսիսկովկայան (դաղստանյան) «-իխու»՝ «զետ» բաղադրիչներից: Վերջինս իբր վկայում է Հայկական լեռնաշխարհում (մասնավորապես Սևան և Վան լճերի ավազաններում) հյուսիսկովկայան եկվոր ցեղային միավորումների առկայությունը: Բնակչություն, որն, արևելագետի կարծիքով, տեղի հոծ հնդեվրոպական զանգվածների մեջ հարատևելու հնարավորություն չի ունեցել (Կարազեղյան Յ. 1998, էջ 227-228):

Այս ենթադրությունն առավել քան անընդունելի է, քանի որ Թուղիսուն անհնար է բաժանել «քուլ-» և «-իխու» բաղադրիչների հենց միայն այն պարզ պատճառով, որ կազմված է Տս-ի-իս երեք սեպանշաններից: Սրանցից յուրաքանչյուրը մեկ ամբողջություն կազմող ինքնուրույն վաճկ է և կարող է խմբավորվել «Տս-ի-իս»՝ «Թու-ի-իխու» կամ «Տսլ-ի-իս»՝ «Թուկի-ի-իխու», բայց ոչ երեք «Տս-ի-իս»՝ «Թուկ-ի-իխու» ձևով, քանի որ այդ դեպքում ստիպված կլինենք կամայականորեն կիսել մեկ ամբողջություն կազմող «լի-»- Ք վաճկը, իմչը՝ նախ սեպագրության հանրահայտ օրենքների խախտում է, բացի այդ նույնիսկ նման մոտեցման դեպքում անգամ չի վերածվի «լ» և «օ» առանձին հնչյունների, այլ նայած երկատման ձևից, առաջ կրերի նոր վաճկեր (օրինակ Ք -la, Ք -se, Ք -ma և այլն), որոնք ոչ մի կապ չունեն Թուղիսու քաղաքանվան, առավել ևս Թուղիսու արհեստական և կամայական արմատաժանման հետ:

Գեղիովտի վանտոսայան քարայր-դամբարանի և Ալեքրդ ամբոց-պահակակետի Լուերու(խի/նի) երկրի տարածքում կառուցված լինելու հանգամանքը հիմնավորելու գործում, մեր կարծիքով, կարևոր դեր ունի նաև վերոհիշյալ երկրանվան ստուգաբանությունը: Այս առումով ուշադրության է արժանի Լուերու(խի/նի) երկրանվան «Լուերու-» (տարբերակ՝ «Լուերի-») հիմնամասի համարդությունը հայերենի արմատական բառարանում պահպանված և հազվադեպ կիրառվող «լաւրա» (հանդիպում է նաև «լռոայ», «լռոա» ձևերով՝ «քնակավայր, վանք» իմաստով բառարմատին (Աճայան Հ. 1973, էջ 269): Ավելորդ չէ հիշատակել նաև էտրուսկյան առասպելաբանության մեջ նախնյաց հոգիների տեր հանդիսացող Լարենտա (Լարունդա) աստծո և լարերի (դեպի անդրաշխարհ գնացող հոգիների պահապան և ուղեկից դիցեր), կելտական

\* Կիրառված է հավանաբար հոգմակի թվի սեռականով, ուղղականը կլինի՝ Թուղիք, որն եւ, թերևս, ծագել է նախնական Թուղիսու ձևից:

աստվածային նահապետ Լիդի (Լեր, Լեյր) ու հռոմեական Լար աստվածության (ընտանեկան օջախի պահապան դից) անվանումները, որոնք հնարավոր է անվանականից զատ նաև իմաստային ծանրաբեռնվածության և գործելակերպի առումով մոտ են քննարկվող նյութին (Словарչ միֆօվ 1999, էջ 174, 179: Հացուցակ A. 2000, էջ 368-370, 382-388, 399-400, 486): Ըստ Վաստակաշատ լեզվաբանի, այն ծագում է հին հունարեն «λαύρα»՝ «փողոց, նեղ ճանապարհ» բառից, որը միջին հունարենում նաև «վանախցերի շարք» իմաստն է ձեռք բերել: Այս բառարմատին համադրելի են անգլոսաքսոնական «læg», իին գերմաներեն «gilæg», իոլանդերեն «larach» (բոլոր լեզուներով էլ «բնակություն, բնակավայր» իմաստով) բառերը (Աճառյան Հ. 1973, էջ 269): Բացառված չե, որ Վանտոսայան (ուրարտական) սեպագրերում հանդիպող «lueru-» (տարբերակ՝ «lueri-») բառարմատը, իին հունարենում հանդիպող «λαύρα»՝ «փողոց, նեղ ճանապարհ, արահետ, շառավիդ» բառի, Հայկական լեռնաշխարհում (մասնավորապես Սևանի ավազանում) կիրառված՝ հնդեվրոպական ծագում ունեցող առավել իին նույնիմաստ դրսնորումը լինի: Այս ենթադրության համար միգուցե անուղղակի հիմնավորում կարող է ծառայել հայերենի արմատական բառարանում «աղուրայ», «աղուրայնոյ», «աղոր» տարբերակներով պահպանված և «շառավիդ, սերունդ» իմաստն արտահայտող բառը (Աճառյան Հ. 1971, էջ 135), որը բերևս իին «lueru-» արմատի յուրօրինակ դրսնորումն է հայերենում: Որպես հնդեվրոպական նախալեզվի բառարմատ, չի բացառվում, որ այն պահպանված լինի նաև գալլերի երկրում (ժամանակակից Ֆրանսիայի տարածքում) գտնվող Լուարա և բասկերի (ապրում են ժամանակակից Խսանիայի հյուսիսում) ավանդագրույցներում հանդիպող Լառաուն (Բասկյան ավանդագրույցներ, 1996, էջ 15) գետերի անվանումներում: Առավել ևս հավանական է, որ նույն արմատից ծագած լինի նաև Հայկական լեռնաշխարհի հյուսիսում ճորոխ գետի ավազանում, Շավշեր գետի Արդանուճ վտակի մեջ բափկող Լոռի գետակի անունը (ՀՀ ՀՏՏԲ 1988, էջ 599):

Ուստի Վանտոսայան արձանագրություններում հանդիպող <sup>KUR</sup><sub>Lueruhi/ni</sub> երկրանունը տեղաբնիկների լեզվով բառացիորեն պետք է որ նշանակած լինի գետի (գետերի) երկայնքով՝ ինչ-որ կարևոր «ճանապարհի շրջանում տեղաբաշխված երկիր» կամ ինչ-որ կարևոր «ճանապարհի մերձակայքում բնակվող ցեղամիություն», իսկ ավելի կարճ՝ «ճանապարհի երկիր»:

Եթե Լուերու(խի/նի) երկրի և նրա թուլիխու մայրաքաղաքի տեղանվանական, ինչպես նաև տիրակալ Ծինալիքի(նի)ի անձնանվանական ստուգաբանությունները հավաստի են, ապա վերջիններիս հիման վրա կարելի է ենթադրել, որ տվյալ դեպքում գործ ունենք Սևանի ավազանի հարավ-արևմտյան անկյունում տեղաբաշխված և, թերևս, հնդեվրոպական լեզվաբնակության պատկանող ինչ-որ լեզվով խոսող ցեղամիության հետ: Ըստ որում, եթե վերջինիս տիրակալ Ծինալիքի(նի)ի անձնանվան մեկնությունը հնարավորություն է ընձեռում կցկություններ քաղել խնդրո առարկա երկրի կրոնի, տոնա-ծխական պատկերացումների ու սովորույթների մասին, ապա տեղանվանական ստուգաբանություններն անմիջականորեն վկայում են աշխարհագրական միջավայրից դրանց սերված լինելը և տեղանունների ենթադրվող բովանդակության մեջ կողավորված ձևով ներկայացնում են այն կոնկրետ տարածքը, որն իր ուղիեցի առանձնահատկությունների, բնակլիմայական պայմանների և առևտրա-տնտեսական համակարգում ունեցած կարևոր դերի շնորհիվ պատճառ է դարձել Լուերու(խի/նի) երկրանվան ու թուլիխու բաղաքանվան ձևավորմանը:

Հատկապես վերջին մեկնարանությունները հույժ կարևոր են և հատկանշական, քանի որ Լուերու(խի/նի) երկրի և նրա թուլիխու մայրաքաղաքի անվանումներում, մեր կարծիքով, կողավորված տեղեկատվությունն այսօր էլ միանգամայն համապատաս-

խան է Սևանա լճի հարավ-արևմտյան անկյունում՝ Վարդածոր, Ծակքար, Ներքին Գետաշեն, Մարտունի, Գեղիովիտ, Վերին Գետաշեն և Քարածի բնակավայրերի միջնամասն ընդգրկող տարածքի բնակլիմայական պայմաններին և ռելիեֆին:

Բանն այն է, որ Վարդածոր, Ծակքար, Լիճը, Ներքին Գետաշեն և Մարտունի բնակավայրերի մոտ ընկած ափամերձ ցածրադիր շրջանները ժամանակին մշտապես ողողվել են Սևանա լճի ջրերով: Ըստ որում, այսօր էլ վերոհիշյալ տարածքների մի մասում տեղումներով առատ տարիներին նկատվում են ցեխից և տիղմից կազմված ճահճանման գոյացություններ (մասնավորապես Լիճից Մարտունի տանող ներկայիս մայրուղու մերձակայքում): Այս ամենին եթե ավելացնենք նաև Ներքին Գետաշեն գյուղի մոտով հոսող Արգիճի գետի վերին հոսանքում երկրաբանների ու աշխարհագրագետների կողմից ֆիքսված և այժմ էլ գոյություն ունեցող՝ Արգիճի ճահճապատ գոգավորությունը (Գրիգորյան Տ., Հովհաննիսյան Դ. 1981, էջ 352), ապա, ըստ մեզ, պատկերն առավել քան ամբողջական և համադրելի կիմի թուլիխու քաղաքանվանն ու նրա սոուզարանությանը:

Ոչ պակաս ուշագրավ է նաև Lueru(հի/ու) երկրանվան մեջ կողավորված և ինչ-որ ճանապարհ կամ ճանապարհներ մատնանշող տեղեկատվությունը: Բանն այն է, որ մոտավորապես Luitերու(խի/նի) երկրի հյուսիսային սահմանի մոտից (ներկայիս Վարդածոր և Երանոս գյուղերի միջնամասով, ապա Վարդածոր և Ծակքար գետերի հովիտներով) դեպի արևմուտք, ինչպես նաև նոյն երկրի հարավային սահմանի երկայնքով (Ներքին Գետաշեն→Մարտունի→Գեղիովիտ→Սելիմի լեռնանցք→ Սյունիք ուղղությամբ) դեպի հարավ ձգվում էին հնագույն ժամանակներից գործող այն ճանապարհները, որոնք Սևանի ավազանը կապում էին Հայկական լեռնաշխարհի հարակից շրջաններին: Վարդածոր և Երանոս գյուղերի միջնամասով, ապա Վարդածոր և Ծակքար գետերի հովիտներով դեպի արևմուտք ձգվող ճանապարհը, հավանորնեն նշված գետերի վերին հոսանքում երկատվում էր և ուղիներից մեկը՝ շրջանցելով Աժդահակ լեռնազագագթը, Գեղամա լեռների այդ հատվածում գտնվող լեռնահովիտներից մեկով դուրս էր գալիս ներկայիս Կոտայքի մարզի տարածքը, ապա Հրազդան գետի ավազանը և շարունակվում դեպի արևմուտք (թերևս նաև հյուսիս), իսկ մյուսը՝ Գեղամա լեռներին զուգահեռ իջնում էր հարավ, շրջանցում դրանք և, մոտավորապես ներկայիս Խոսրովի արգելոցի շրջանում մուտք գործելով Արարատյան դաշտ, հավանաբար ուղղություն վերցնում դեպի հարավ կամ հարավ-արևմուտք: Զննարկվող ճանապարհի և նրա երկու ճյուղավորումների գոյությունը, թերևս կարելի է հիմնավորել վերջիններիս շրջանում հնագույն ժամանակներից գոյություն ունեցող պաշտամունքային երկու կարևոր համալիրներով, որոնցից առաջինն իր մեջ ներառում էր քուն Աժդահակ լեռն ու նրա լանջերին տեղակայված վիշապ-կորողների համակարգը, իսկ երկրորդը՝ հնագույն ժամանակներից հայտնի և Մովսես Խորենացու մոտ հիշատակվող Սոսիների ծիսական անտառն ու նրանից ոչ հեռու գտնվող Դվին հնավայրի վաղերկաթեղարյան պաշտամունքային խոշորագույն կենտրոնը: Ավելացնենք նաև, որ Վարդածոր և Երանոս գյուղերի միջնամասից սկիզբ առնող և դեպի Հրազդանի ավազանն ու Արարատյան դաշտը գնացող ճանապարհն, իր երկու ճյուղավորումներով հնարավորություն էր ընծեռում Սևանի ավազանի արևմտյան ափին գտնվող ցեղային և վաղետական կազմավորումներին գործնական կապեր պահպանել վերոհիշյալ շրջանների առավել զարգացած կենտրոնների հետ և, որ ամենակարևորն է, ամենակարծ ճանապարհով հասնել Հրազդանի ավազանի (մասնավորապես Մարմարիկ գետի հովտում տեղավորված և շահագործվող) պղնձի և ոսկու հանքերին: Այս առումով, Luitերու(խի/նի) երկրից սկիզբ առնող և նշված ուղղությամբ ձգված ճանապարհի գոյության թերևս մի յուրօրինակ վկայություն կարող է հանդիսանալ Աղվերան բնակավայրի անվանումը, որի և Luitերու(խի/նի) երկ-

րանվաճ հնարավոր զուգահեռներն արդեն անց են կացվել իայ պատմագրության մեջ (Պետրոսյան Ս. 1976, էջ 190): Այստեղ ավելորդ չէ ավելացնել, որ դեպի արևմուտք և հյուսիս ճյուղավորված այս ենթադրյալ առևտրական ճանապարհի գոյության անուղղակի վկաները կարող են հանդիսանալ «ևեր» (տարբերակ՝ «ևեր») Վերը քննարկված արմատից թերևս բխող Լոռի միևնույն անվամբ չորս գյուղերը Կարսի մարզի Արդահանի շրջանում, Երզրումի նահանգի Բարերդ գավառում, Տրավիզոնի մարզի Գյումուշիստեղի գավառակում և Շորոխ գետի ավազանում (ՀՀԸ 1988, էջ 599), ինչպես նաև Ալուարցա (հմնտ. Սյունիքի Աղուերծ, Ծղուերծ և Աղուերց տեղանվանական տարբերակներին) գյուղն Արածանի գետի մերձակայքում (ՀՀԸ 1986, էջ 103), ապա և հանրահայտ Լոռի (տարբերակներ՝ Լոռե, Լորե, Լորի) բերդամբոցը, քաղաքը, գավառը, գետը և նշանավոր հնագիտական հուշարձանը Հյուսիսային Հայաստանում (ՀՀԸ 1988, էջ 597-600):

Այսուհետերծ, եթե Լուերու(խի/նի) երկրի հյուսիսով անցած այս ճանապարհի և նրա երկու ճյուղավորումների մասին եզրակացություններն առայժմ, մեծավ մասամբ, ենթադրելի են ու թեական, ապա նույն երկրի հարավային սահմանով՝ մոտավորապես ներկայիս Ներքին Գետաշեն գյուղից ոչ հեռու, Արգիճի գետի գետաբերանից սկիզբ առնող ու ժամանակակից Մարտունի և Գեղիովիտ բնակավայրերի միջով դեպի Սելիմի լեռնանցքը տանող ճանապարհը գործում է առ այսօր: Սա այն կարեոր և, ըստ Էության, առավել հարմար, կարծ և համեմատաբար անփառ միակ ուղին էր, որը Սևանի ավազանից տանում էր դեպի Սյունիքի պղնձի հարուստ հանքավայրերը, այնուեւու հասնում Ուրմիա լճի ավազանում շահագործվող ուկու կենտրոններին և վերջապես միանում քննարկվող ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհի համար առաջնահերթ նշանակություն ունեցող, պարսիցծոցյան առևտրական ճանապարհին: Ահա թե ինչու, ուզմակարական առումով առանձնակի նշանակություն ունեցող այս ճանապարհի երկայնքով էր տեղաբաշխվել իրար հետ փոխկապակցված և, հավանաբար, քննարկվող ժամանակահատվածում Լուերու(խի/նի) երկրի կազմի մեջ մտնող ամրոցների (Կորթավանք, Մթնաձոր, Չոջ կող, Գեղիովիտ 1, Գեղիովիտ 2, Ալբերդ, Վերին Գետաշեն, Քարաձի և այլն) լավ հաշվարկված ու արդյունավետ պաշտպանական համակարգը: Հենց Լուերու(խի/նի) երկրից (բառացիորեն «ճանապարհի երկրից») սկիզբ առնող և դեպի հարավ գնացող այս ուղու տեղանվանական արձագանքները թերևս կարելի է նշմարել միջնադարյան Հայաստանի Սյունիք աշխարհի Ծղուկ գավառի Ծղուերծ (Ծղուերծ, Ծղվերծ, Ծղվերծ) և Հարանդ գավառի Աղուերծ (Աղուերծ, Աղվերծ, Աղվերծ) գյուղերի անվանումներում, ինչի վրա արդեն ուշադրություն է հրավիրել արևելագետն Հ. Կարազյոյշանը (Ստեփանոս Օքբելյան 1986, էջ 199, 236, 237, 394, 400, 466, 479: ՀՀԸ 1986, էջ 201: ՀՀԸ 1988, էջ 377: Կարագեողեան Յ. 1998, էջ 125-126):

Կարծում ենք, որ այս տեղանուններին կարելի է ավելացնել նաև Սյունիք աշխարհի Ծղուկ գավառի Լոռու ծոր գավառամասի, Որոտան գետի աջակողմյան վտակ Լոր (տարբերակ՝ Լորաձոր) գետի, Սիսիան քաղաքի մոտ գտնվող Լոր լեռնագագարի, ինչպես նաև Լոր (տարբերակներ՝ Լար, Լորա գյուղ, Լորաձոր) գյուղի և Լորադարա ձորի (Արաքս գետի ավազանում, հավանաբար Արփա գետի վերին հոսանքում) անվանումները (ՀՀԸ 1988, էջ 601-602):

Ուստի միանգամայն հասկանալի է, որ <sup>KUR</sup>Լուերու(խի/նի) «ճանապարհի երկիր»՝ որոշակի իմաստային ժանրաբեռնվագծություն ունեցող, անվամբ երկրի հպատակեցումն անկասկած կարևոր նշանակություն պետք է ունենար ողջ Սևանի ավազանում (նաև հարակից շրջաններում) ուզմաքաղաքական գերիշխանություն հաստատելու համար:

Այստեղ արժե ընդգծել, որ ինչպես Սևանի ավազանի, այնպես և Սելիմի լեռնանցքի վերահսկումը Վանտոսայի բազավորության համար հատկապես կարևոր էր մ.թ.ա. 735

թվականի ծանր դեպքերից հետո: Բանն այն է, որ Ասորեստանի հետ մ.թ.ա. 743 և 735 թվականներին ունեցած անհաջող բախումներից հետո, Վանտոսափի թագավորությունն ամբողջապես կորցրել էր գերիշխանությունը դեպի արևոտք և հարավ-արևմուտք տանող մերձավորարևելյան բանուկ առևտրական ճանապարհների նկատմամբ և, ըստ Էության, զրկվել Աղձնիքի մետաղի հարուստ հանքերից օգտվելու և նույն տարածքով անցնող ոսկու տարանցիկ առևտրին հաղորդակից լինելու հնարավորությունից: Այս ամենի պատճառով Վանտոսափի թագավորության համար առաջնային սլան պետք է մղվեր առևտրական կապերի ու մշակութային փոխառնչությունների, տվյալ պահին խոշընդուներից գրեթե զերծ ճանապարհը, որն ապահովում էր գերիշխանություն Սևանի ավագանից հարավ-արևելք ընկած (Ուշկիանի լեռներ՝ «Ոսկու լեռներ», Սյունիք) և հրանական սարահարթի հյուսիս-արևմուտքում գտնվող (Համադանի շրջան) պղծնի և ոսկու հարուստ հանքավայրերի նկատմամբ և հնարավորության ընձեռում, շրջանցելով Ասորեստանը՝ Թալիշի, Գիլանի, Լուրիստանի և Խորդիստանի վրայով, դրւու գալ առևտրական գործառնությունների այնախսի բանուկ մի շրջան, ինչպիսին Պարսից ծոցն էր: Թերեւս սա էր հիմնական պատճառը, որ արևմուտքում Ասորեստանից պարտություն կրելուց հետո, Վանտոսափի տիրակալներն անընդհատ պայքարում էին Իրանական սարահարթի հյուսիս-արևմուտյան հատվածում գտնվող Մանա երկրի և Վերջինիս հովանավորող Ասորեստանի դեմ, վերը նշված տարածքներում գերիշխանություն պահպանելու համար:

Սեկնարաբանությունների այս համատեքստում միանգամայն հասկանալի են մ.թ.ա. VIII դարի երկրորդ կեսի և մ.թ.ա. VII դարի առաջին կեսի Վանտոսափի արքաների ջանքերը Ներքին Գետաշեն-Մարտունի-Գեղիովիտ-Սելիմի լեռնանցք-Եղեգնաձոր-Սյունիք ճանապարհի վրա ամեն կերպ գերիշխանություն պահպանելու գործում, ինչը լավ փաստագրվում է Ներքին Գետաշենում, Գեղիովտում, Եղեգնաձորում, Մալիշկայում, Հարժիսում և Արևիսում (Սիսիան քաղաքից 17կմ արևմուտք) հայտնաբերված վանտոսայան բազմաթիվ և բազմաբնույթ հնագիտական նյութերով (Գայսերյան Վ. 1985, էջ 67-79: Փիլիպոսյան Ա., Հովհաննիսյան Վ. 1991: Ենգիբարյան Ն. 1991, էջ 69: Խնկիկյան Օ. 1998, աղ. CIX-CXI: Արյունյան Ի. 1985, էջ 195-229: Esayan Տ. 1984, էջ 136-138, աղ. 27, նկ. 86 և այլն):

Այս ճանապարհի վրա առաջնային դեր պիտի վերապահված լիներ հատկապես Գեղիովտին, քանի որ այն, ըստ Էության, պահպանում և վերահսկում էր ուազմա-քաղաքական կարևոր հանգույցի՝ Սելիմի լեռնանցքի հյուսիսային մատույցները: Այդ են մատնանշում այս տարածքում գոյություն ունեցած ամրոցների վերակառուցումները վանտոսագիների կողմից և հատկապես Գեղիովտի տարածքում ուազմական ամրոց-հենակետի հիմնումը.\*

Առաջմ դժվար է հաստատապես փաստել, եղե՞լ է արյոյք Գեղիովտի քաղայր-դամբարանում ամփոփված բարձրաստիճան անձնավորությունը, քննարկվող հուշարձանից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա կառուցված, Ալբերդի վանտոսայան ամրոց-պահակակետի տերը կամ դեկավարը: Այդ մասին ավելի հիմնավոր ու հավաստի տեղեկություններ կարող են տալ քննարկվող ամրոցում 1994 թվականից սկսված և մինչև օրս շարունակվող հայ-իտալական հնագիտական արշավախսմբի հետագա աշխատանքները (Հակոբյան Հ. 1996, էջ 39-40: Հակոբյան Հ., Վարդանյան Ս., Պարմե-

\* Ավելացնենք նաև, որ ուազմավարական առումով եզակի այս ճանապարհն իր դերը չէր կորցրել նաև Անտիկ լրացաշրջանում, ինչի մասին է վկայում հենց քննարկվող շրջանում (այսինքն՝ վանտոսայան տեքստերի Լուերու(խի/նի) երկրի տարածքում՝ Շակբար գյուղի մոտ հայտնաբերված Արտաշես I-ի (մ.թ.ա. 189-160 թթ.) արամեատառ սահմանաքարը:

զիանի Ն. 1996, էջ 40-42): Սակայն այսօր արդեն, հենց նույն արշավախմբի ձեռք բերած տվյալներից պարզ է, որ ուղմակարական առումով բացառիկ դեր ունեցած այս ամրոցն ու նրա մերձակայքն իրենց նշանակությունը պահպանել են Վանտոսափի թագավորության անկումից հետո էլ և, դատելով քննարկվող տարածքում պեղումների ընթացքում հայտնաբերված ու որոշակի ժամանակագրական սահմաններ ցուցանող նյութերից, նշանակալի դեր խաղացել և՝ Երվանդումիների թագավորության տարիներին, և՝ աքեմենյան գերիշխանության ընթացքում, և՝ հելլենիստական ժամանակաշրջանում, և՝ Արտաշեսյանների հարստության օրոք:

### ՀՆԱԳԼԾԱԿՄՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

#### ԱՂՅՈՒՍԱԿ 1

Մերձավոր Արևելքի քարտեզը (մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին կես):

#### ԱՂՅՈՒՍԱԿ 2

1.Գեղինվուի վանտոսայան (ուրարտական) քարայր-դամբարանի ընդհանուր տեսքը: 2.Հատակագիծը: 3.Ուղղահայաց կտրվածքը:

#### ԱՂՅՈՒՍԱԿ 3

Գեղինվուի քարայր-դամբարանի առաջին սրահի ընդհանուր պատկերը պեղումներից հետո:

#### ԱՂՅՈՒՍԱԿ 4

1.Վան: Խորխորյան մեծ քարայրի հատակագիծն ու կտրվածքը (Пиотровский Б. 1959, էջ 210, նկ. 58):

2.Վան: «Նավք-քույու» քարայրի հատակագիծն ու կտրվածքը (Пиотровский Б. 1959, էջ 212, նկ. 60):

#### ԱՂՅՈՒՍԱԿ 5

1.Վան: Խարխարյան փոքր քարայրի հատակագիծն ու կտրվածքը (Пиотровский Б. 1959, էջ 211, նկ. 59):

2.Վանի ժայռի հյուսիսային քարայրի հատակագիծն ու կտրվածքը (Пиотровский Б. 1959, էջ 216, նկ. 64):

#### ԱՂՅՈՒՍԱԿ 6

1.Պալու: Քարայր I (Charlsworth M. 1980, էջ 91-97):

2.Պալու: Քարայր II (Koro g lu K. 1996, էջ 38-39, նկ. 6):

3.Պալու: Քարայր III (Sevin V. 1994, էջ 58-67):

#### ԱՂՅՈՒՍԱԿ 7

1.Վան: «Զինանոցին» կից քարայրի հատակագիծն ու կտրվածքները (Казна-ков А. 1917, էջ 28-32, աղ. I և II):

2.Վանի ժայռի վերին հարթակի հատակագիծն ու կտրվածքը (Пиотровский Б. 1959, էջ 213, նկ. 61):

### ԱԴՅՈՒՍԱԿ 8

Վան: «Բչկալա» քարայրի հատակագիծն ու կտրվածքը (Պիոտրովսկի Բ. 1959, էջ 214, նկ. 62):

### ԱԴՅՈՒՍԱԿ 9

1. Թանրիվերմիշ (Խարբերդի շրջան): Քարայր I (Koro g 1u K. 1996, էջ 44, նկ. 8):
2. Թանրիվերմիշ: Քարայր II (Koro g 1u K. 1996, էջ 43-45, նկ. 8):
3. Թանրիվերմիշ: Քարայր III (Koro g 1u K. 1996, էջ 43-45, նկ. 8):
4. Մանազկերտ (Կալեքյոյ) (Օ ցու B. 1978, էջ 639, նկ. 2):
5. Ջյուկրելեն (Ջերանի ջրամբարի մոտ) (Sevin V. 1989, էջ 456, նկ. 14):
6. Ջյուրդումելիք (Ելազղյի մոտ) (Sevin V. 1987, էջ 10, նկ. 32):
7. Հաջիսելի (Խարբերդի մոտ) (Sevin V. 1987, էջ 287, նկ. 18):

### ԱԴՅՈՒՍԱԿ 10

Վանի ժայռի հարավ-արևմտյան կողմի «մեծ քարայրի» հատակագիծն ու կտրվածքը (Պիոտրովսկի Բ. 1959, էջ 215, նկ. 63):

### ԱԴՅՈՒՍԱԿ 11

1. Մակու: Մանգարի գյուղի մոտ գտնվող քարայրի հատակագիծն ու կտրվածքը (Kleiss W. 1976, էջ 28-43, նկ. 6):
2. Կալեն Հողար քարայրի հատակագիծն ու կտրվածքը (Հովհաննիսյան Կ. 1996, էջ 152, աղ. 35, նկ. Բ):

### ԱԴՅՈՒՍԱԿ 12

1. Դողութայագետ (Պիոտրովսկի Բ. 1959, էջ 238, նկ. 76, UMCFM 1991, էջ 124, նկ. 6)
2. Ալիշար (Պիոտրովսկի Բ. 1959, էջ 218, նկ. 66)

### ԱԴՅՈՒՍԱԿ 13

Կայալիղերեի քարայրի (Մշո դաշտ, Վարդո քաղաքի մոտ) հատակագիծն ու կտրվածքները (Burney C. 1996, էջ 55-111; Հովհաննիսյան Կ. 1996, էջ 152, աղ. 35, նկ. Ա, էջ 180-181):

### ԱԴՅՈՒՍԱԿ 14

- Գեղիովսի քարայր-դամբարանից հայտնաբերված սպառագինության նմուշներ:
1. Երկարեն ակինակ: 2,3. Երկարեն նիզակներ: 4. Բրոնզե կապարճի մնացորդներ (վերակազմություն): 5. Երկմետաղյա ճարմանդ՝ զլխարկածն վերնամասը բրոնզից, մերակը՝ երկարից:

### ԱԴՅՈՒՍԱԿ 15

- 1-4. Գեղիովսի քարայր-դամբարանից հայտնաբերված ձիասանձերի մնացորդներ (Փիլիպոսյան Ա., Խաչատրյան Լ. 1995, էջ 88, աղ. 2, նկ. 1-3):

### ԱԴՅՈՒՍԱԿ 16

- 1-5. Մարտակառքի անիվների անուրածն բրոնզե ամրակներ Գեղիովսի քարայր-դամբարանից (Փիլիպոսյան Ա., Խաչատրյան Լ. 1995, էջ 89, աղ. 3, նկ. 3):

### ԱԴՅՈՒՍԱԿ 17

1-4. Մարտակառքի անհվերի անուրածև բրոնզե ամրակներ, յուրաքանչյուրը երկուական երկարեն գամերով (պատահական գտածո) (Merhav R., Seidl U. 1991, էջ 64-65, նկ. 3a-b):

### ԱԴՅՈՒՍԱԿ 18

Մարտակառքի անհվերը սոնուն ամրացնող պահանակներ:

1. Արևմտյան Հայաստան (պատահական) (Merhav R., Seidl U. 1991, էջ 58, նկ. 6):
2. Գեղիովտի քարայր-դամբարան (Փիլիպոսյան Ա., Խաչատրյան Լ. 1995, էջ 89, աղ. 3, նկ. 2): 3,5. Պատահական (Merhav R., Seidl U. 1991, էջ 66): 4. Սալամիս (դամբարան 79) (Merhav R., Seidl U. 1991, էջ 57, նկ. 5): 6-9. Պատահական (Merhav R., Seidl U. 1991, էջ 60-61, նկ. 7): 10,11. Գեղիովտի քարայր-դամբարան (Փիլիպոսյան Ա., Խաչատրյան Լ. 1995, էջ 97, աղ. 11, նկ. 5):

### ԱԴՅՈՒՍԱԿ 19

Գեղիովտի քարայր-դամբարանից հայտնաբերված մարտակառքի մասեր:

- 1,2. Առեղի եղջուրածև բրոնզե հարմարանքներ (Փիլիպոսյան Ա., Խաչատրյան Լ. 1995, էջ 90, աղ. 4, նկ. 1,3): 3. Փականածև բրոնզե հարմարանք մարտակառքի առեղջ թափքին ամրացնելու համար (Փիլիպոսյան Ա., Խաչատրյան Լ. 1995, էջ 89, աղ. 3, նկ.1): 4,5. Առեղի կիսագլանածև բրոնզե մասեր (Փիլիպոսյան Ա., Խաչատրյան Լ. 1995, էջ 90, աղ. 4, նկ. 4):

### ԱԴՅՈՒՍԱԿ 20

Վանտոսայյան (ուրարտական) և ասսուրական մարտակառքերի օրինակներ:

1. Կալախ (Նիմրու): Ասսուրական արքայական մարտակառք (Merhav R., Seidl U. 1991, էջ 55, նկ. 3): 2. Անուրածև զույգ ամրակներով վանտոսայյան (ուրարտական) մարտակառքի անիվ (Վերակազմություն) (Merhav R., Seidl U. 1991, էջ 62-63, նկ. 8/2):
3. Վաղ վանտոսայյան (ուրարտական) մարտակառք (Merhav R., Seidl U. 1991, էջ 54, նկ. 2): 4. Ասսուրական մարտակառքի ծիեր (Merhav R. 1991, էջ 78-79, նկ. 10):
5. Վանտոսայյան (ուրարտական) մարտակառքի թափք, անհվերին անուրածև զույգ ամրակներով (Taşyürek O. 1975, աղ. 32): 6-8. Վանտոսայյան (ուրարտական) մարտակառքեր (Wartke R.-B. 1993, էջ 78, նկ. 31-32, էջ 97, նկ. 42):

### ԱԴՅՈՒՍԱԿՆԵՐ 21-22

Գեղիովտի քարայր-դամբարանից հայտնաբերված գահավորակների բրոնզե ոսոքեր (Փիլիպոսյան Ա., Խաչատրյան Լ. 1995, աղ. 6)

### ԱԴՅՈՒՍԱԿՆԵՐ 21-23

Վանտոսայյան (ուրարտական) և ասսուրական կահույքի նմուշներ:

1. Ասսուրական գահավորակի մաս (Hrouda B. 1965, նկ. 145 f): 2. Թոփրաք-կալե (Վան) (Akurgal E. 1968, նկ. 55): 3. Ալթըն-թէփեն (Ozgüç T. 1969, 15 65-72, աղ. XIX): 4. Աղանա (Taşyürek O. 1975, աղ. 21): 5. Պատահական (Merhav R. 1991, էջ 248-249, նկ. 2/2): 6. Ալթըն թէփեն (Пиотровский Б. 1962, էջ 54, նկ. 25): 8,10. Աղիլօնազ (Արծկե) (İşik C. 1986, նկ. 7,8): 9. Ալթըն թէփեն (դամբարան III) (Kyrieleis H. 1969, նկ. 3):

### ՄՊՅՈՒՍԱԿՆԵՐ 24-27

Գեղիովտի քարայր-դամբարանից հայտնաբերված կահույքի բրոնզե տարրեր մասեր (Փիլիպոսյան Ա., Խաչատրյան Լ. 1995, աղ. 7-8):

### ՄՊՅՈՒՍԱԿ 28

Վաճտոսայան (ուրարտական) և աստորական աշտանակներ:

1,2. Գեղիովտի քարայր-դամբարանից (Փիլիպոսյան Ա., Խաչատրյան Լ. 1995, աղ. 8, նկ. 1): 3. Կարմիր բլուր (Թեյշերախնի) (Պիոտրովսկի Բ. 1950, նկ. 4): 5. Վան (Պիոտրովսկի Բ. 1959, էջ 174, նկ. 35):

### ՄՊՅՈՒՍԱԿ 29

Վաճտոսայան (ուրարտական) գահավորակների օրինակներ:

1. Պատկեր գուտու վրա (Miyashita S. 1983, աղ. 1): 2. Պատկեր կիսալուսնաձև կախիկի վրա (Kellner H.-J. 1991, էջ 166, նկ. 2): 3. Վան: Պատկեր արծաթե կիսալուսնաձև կախիկի վրա (Meyer G. 1995, էջ 209): 4. Պատկեր գուտու վրա (Caltmeyer P. 1991, էջ 317, նկ. 4): 5. Պատկեր արծաթե մեղալիոնի վրա (Kellner H.-J. 1991, էջ 167, նկ. 3):  
6. Պատկեր բրոնզե թիթեղի վրա (Barnett R. 1954, աղ. XI): 7,8. Պատկերներ բրոնզե թիթեղների վրա (Meyer G. 1995, էջ 210, Merhav R. 1991, էջ 247, 249):

### ՄՊՅՈՒՍԱԿ 30

1-7. Գեղիովտի քարայր-դամբարանից հայտնաբերված անորոշների մնացորդներ (1-6. կավ, 7. բրոնզ) (Փիլիպոսյան Ա., Խաչատրյան Լ. 1995, էջ 90, աղ. 4, նկ. 6, էջ 97, աղ. 11, նկ. 3,4):

### ՄՊՅՈՒՍԱԿ 31

Վաճտոսայան (ուրարտական) խեցանորների նմուշներ:

1. Արգիշտիխնիի (Ավետիսյան Գ. 1992, էջ 98, աղ. II, նկ. 6): 2. Կարմիր բլուր (Թեյշերախնի) (Ավետիսյան Գ. 1992, էջ 98, աղ. II, նկ. 2): 3. Կարմիր բլուր (Թեյշերախնի) (Եսայան Ը. 1964, էջ 62, աղ. X, նկ. 5): 4. Կարմիր բլուր (Թեյշերախնի) (Ավետիսյան Գ. 1992, էջ 154, աղ. LVIII, նկ. 2): 5. Արին բերդ (Էրեբունի) (Ավետիսյան Գ. 1992, էջ 154, աղ. LVIII, նկ. 2): 6. Երևան (պատահական) (Եսայան Ը. 1964, աղ. VIII, նկ. 7): 8-10. Կարմիր բլուր (Թեյշերախնի) (Եսայան Ը. 1964, աղ. IX, նկ. 1,2,4):

### ՄՊՅՈՒՍԱԿ 32

Խեթական աստվածությունների հիերոգլիֆային անվանումները (Masson E. 1981: Güterbock H. 1982):

### ՄՊՅՈՒՍԱԿ 33

Աստվածությունների հիերոգլիֆային անվանումները:

1-12. Խեթական: 13. Վաճտոսայան (ուրարտական):

### ՄՊՅՈՒՍԱԿ 34

1. Նորբաբելոնյան կնիքի արտատպություն (Brentjes B. 1983, էջ 156): 2. Կարմիր բլուրից գտնված կնիքի արտատպություն (Պիոտրովսկի Բ. 1962, էջ 106, նկ. 71):

3. Միջինքրոններաբան կավանոք Մեծամորից (դամբարան 83) (Khanzadian E. 1995, էջ 26, նկ. 11): 4. Եզիջտական Կա աստվածը (Լորկեր Մ. 1998, էջ 81): 5. Կնիք-կախիկ

Կարմիր բլուրից (Պիոտրովսկի Բ. 1962, էջ 105, նկ. 69): 6. Ծիվինի ասածո պատկերը (Պիոտրովսկի Բ. 1959, էջ 225, նկ. 70): 7. Հազոր: Քանանեական ծխական կառույցի մնացորդներ (Pritchard J. 1975, նկ. 103):

### ԱՂՅՈՒՍԿ 35

Գեղենվարի քարայր-դամբարանից հայտնաբերված պերճանքի առարկաներ: 1, 2. Բրոնզե ապարանջաններ (Փիլիպոսյան Ա., Խաչարյան Լ. 1995, էջ 97, աղ. 11, նկ. 1): 3-8. Ուղինքներ (կավ, ապակի, ուկոր): 9. Ուկրե վզնոց (Փիլիպոսյան Ա., Խաչարյան Լ. 1995, էջ 97, աղ. 11, նկ. 2):

Ա. Ս. Պիլիպօսյան      Ր. Ա. Մկրտչյան

## ՎԱՆՏՕՍՊՍԿԱՅԱ (ՈՐԱՐՏԸԿԱՅԱ) ՊԵՇԵՐՆԱՅ ԳՐՈԲՆԻՑԱ ԳԵԽՈՎԻՏԱ (Հետաքրքրություն)

### ՎՎԵԴԵՆԻԵ

В истории и культуре Армении последняя четверть II – середина I тыс. до н.э. представляет собой период, в течении которого сложившиеся в отдельных областях Армянского нагорья и уже проявляющие ростки государственности племенные образования постепенно объединялись в прочные и боеспособные союзы (Наири, Уруатри, Шубрия, Этиуни и др.). Тем самым была подготовлена основа создания нового военно – политического образования, которое выступило на историческую арену в середине 9 в. до н.э., за короткое время став одной из наиболее могущественных держав Ближнего Востока.

Специалисты по истории, письму и культуре древнего Востока, взяв за основу разноязычные свидетельства ряда первоисточников, дали рассматриваемому государству разные (но, по существу и синонимичные) названия – Урарту – Урашту – Ванское царство – Биайнили (Биайнеле) – Аракат.

С целью избежать подобного разнобоя, мы находим целесообразным ввести в научный оборот для обозначения упоминаемой на Армянском нагорье с последней четверти II тыс. до н.э. и достигшей в IX-VI вв. до н.э. государственности страны термин "Ванtospskое (Ван – Тосpsкое) царство".

Около полутора столетий вопросы материальной культуры, истории, пантеона, архитектуры и градостроительства, письма и языка, быта и пр. Ванtospskого царства находятся в центре внимания многочисленных востоковедов, историков, искусство – ведов, языковедов и археологов.

Настоящая работа посвящена изучению чрезвычайно своеобразного и имеющего важное значение для исследования истории и культуры Ванtospskого царства археологического памятника – пещерной гробницы Геховита.

## МЕСТОНАХОЖДЕНИЕ И КОНСТРУКЦИЯ ПАМЯТНИКА

Исследуемый археологический памятник был случайно открыт в 5 км к югу от юго-западной прибрежной черты оз. Севан (табл. 1), с правой стороны дороги, ведущей к Селимскому перевалу, на левом берегу протекающей через современное село Геховит реки, во время строительства моста.

Исследование местности и изучение ассортимента раскопанных археологических материалов позволяет заключить, что находящаяся на высоте 15–20 м над уровнем реки на ее крутом берегу образовавшаяся в результате выветривания в базальтовой скале естественная ниша была подвергнута частичной обработке и превращена в состоящую из двух смежных залов пещерную гробницу (табл. 2). Она имела подчеркнутую ориентацию по оси юг–север и открытый на восток полуovalный естественный вход, который, вероятно, был немного обработан строителями погребения (табл. 2, рис. 1). На основании сделанных наблюдений, обмеров и предположений в настоящем исследовании восстановлены возможные вертикальный (табл. 2, рис. 3) и горизонтальный (табл. 2, рис. 2) разрезы пещерной гробницы Геховита.

Подобные пещерные погребальные сооружения – распространенное явление в ванtosпском погребальном строительстве; они известны в археологических комплексах Тушпы–Вана, в частности, Большая и Малая Хорхорские пещеры (табл. 4, рис. 1, табл. 5, рис. 1), Нафткую (табл. 4, рис. 2), пещера под верхней площадкой Ванской скалы (табл. 7, рис. 1–3), Ичкала (табл. 8, рис. 1–2), пещера Арсенала (табл. 7, рис. 1), Большая пещера на юго-западной стороне Ванской скалы (табл. 10, рис. 1–2), а также пищевые комплексы Палу (табл. 6, рис. 1–3), Танривермиша (табл. 9, рис. 1–3), Маназкerta (Калекей) (табл. 9, рис. 5), Кюрдумелика (у Элязыга) (табл. 9, рис. 6), Хаджисели (табл. 9, рис. 7) Маку–Сангара (табл. 11, рис. 1), Кале Ходер (табл. 11, рис. 2), Алишара (табл. 12, рис. 2), Каяли дере (табл. 13, рис. 1–3), Эски Догубаязита (табл. 12, рис. 1), Бостан Кая, Айкаберда (Чавуш тепе) и Адилджеваза (Арцке).

## АРХЕОЛОГИЧЕСКИЕ НАХОДКИ

Коллекция археологических предметов, обнаруженных в пещерной гробнице Геховита, включает образцы вооружения, остатки отдельных частей мебели и утвари, предметы украшения и палеоантропологический материал.

Наиболее многочисленны образцы вооружения. В эту группу входят железный акинак (табл. 14, рис. 1), два железных втульчатых наконечника копья (табл. 14, рис. 2, 3), два биметаллических (с железным трензелем и бронзовыми псалиями), одно бронзовое зооморфное и одно железное удила (табл. 15, рис. 1–4), фрагменты бронзового колчана (табл. 14, рис. 4), биметаллическая (бронзовое туло и железная петля) дисковидная бляха от конского убora (табл. 14, рис. 5), и остатки колесницы. В числе последних

пять хомутообразных закрепок (табл. 16, рис. 1 – 5), биметаллический штырь с железным стержнем и бронзовой протомой коня (табл. 18, рис. 2), две железные гвозди с пластинчатой головкой и массивным стержнем (табл. 18, рис. 10, 11), часть бронзового крепления (табл. 19, рис. 3), два бронзовых роговидных предмета (табл. 19, рис. 1, 2) и две бронзовые полые полуцилиндрические накладки дышила (табл. 19, рис. 4, 5).

Детали мебели представляют окончания и обкладки ножек, спинок, сидений и планок кресел, стола и носилок (табл. 21, рис. 1 – 3, табл. 22, рис. 1 – 4, табл. 24, рис. 1 – 8, табл. 25, рис. 1 – 5, табл. 26, рис. 1 – 7, табл. 27, рис. 1 – 4), а также части двух канделябров (табл. 28, рис. 1, 2).

Утварь, обнаруженная в пещерной гробнице Геховита, представлена остатками светло- и темнокоричневых и красно-ангобированных сосудов (табл. 30, рис. 1 – 6). На одном из них сохранилось иероглифическое обозначение емкости (табл. 30, рис. 4). В этой группе артефактов особый интерес представляет верхняя часть металлического сосуда. Чуть ниже его венчика сохранился выгравированный знак, который представляет изображение пары ладоней и вверху овал, пересеченный парой параллельных линий (табл. 30, рис. 7). Соответствующие аналоги хеттских иероглифических надписей Язылы Кая (табл. 32, табл. 33) позволяют предположить, что на нашем бронзовом сосуде также нанесена иероглифическая надпись, верхняя часть которой представляет идеограмму "бог", а пара ладоней – имя конкретного божества. В ванtosпской иконографии солнечный диск над головой держит "<sup>D</sup>Šiunii" (табл. 34, рис. 6) бог Шивини, что позволяет нам предположить, что рассматриваемый знак может быть иероглифическим обозначением его имени (табл. 33, рис. 13).

Предметы украшения представлены парой браслетов из бронзового прута, ожерельем, составленным из костяных квадратов, и стеклянных, пастовых и сердоликовых бус различной формы и размера (табл. 35, рис. 1 – 9).

## ПАЛЕОАНТРОПОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ

Вследствие отсутствия материала антропология ванtosпского времени мало исследована. В настоящем исследовании в сравнительном контексте обобщен весь фактический материал, относящийся к рассматриваемому вопросу.

Для выяснения места и роли выявленного на основе усредненных значений измерительных данных палеоантропологических материалов Геховита и других ванtosпских (урартских) памятников Армении (Норатус, Аргиштихинили – Армавир, Арташаван) ванtosпского антропологического типа в водовороте историко-культурных процессов, проявляющихся на древнем Востоке и в бассейне Средиземноморья с последней четверти II тыс. до н.э. по середину I тыс. до н.э., мы нашли целесообразным в этой работе в качестве общего сравнительного фона использовать средние данные палеоантропологических материалов тех этно-политических образований Евразийского региона, которые в контексте этнических,

политических и культурных процессов проявляют черты общности с вантосскими реалиями и могут являться первоисточником достоверных историко-культурных реконструкций (табл. I).<sup>\*</sup>

Статистическое сопоставление отмеченных коллекций осуществлено с применением компонентного метода, по восьми важнейшим признакам черепной коробки и лицевого скелета (табл. II).

Размещение краинологических коллекций рассматриваемого региона железного века в пространстве I и II координатных осей четырехмерного таксономического пространства не позволяет группировать материал по культурным и территориальным общностям. На графическом изображении (табл. IX, рис. 1) в каждой из четырех плоскостей, соответственно I и II интегральным характеристикам, поляризуются пять коллекций с противоположными морфологическими чертами. Это массивная, брахицранная коллекция Сиалка В (№ 15) и чрезвычайно грацильная, долихокранная (в диапазоне значений от -4 до +4) коллекция Хасанлу IV (№ 17), далее высококолицая коллекция Северного Кавказа (№ 8) и низколицые (в диапазоне значений от -3 до +3) коллекции Алишара (№ 20) и Мингечаура (№ 5). Остальные 17 групп сравнительной выборки интерполируются в границах вышеперечисленных наблюдений (в диапазоне значений -2 до +2 и от -1 до +1). На графике вантосская (урартская) краинологическая коллекция наиболее близка к центру координат (табл. IX, рис. 1), то есть по своей морфологии в данном сравнительном масштабе она занимает наиболее нейтральное место. Вокруг нее наиболее близко (в диапазоне значений от -1 до +1) группируются скифские (№№ 9, 10, 11, 13), севанская раннекорейская (№ 2), этруссская (№ 21) и нишпурская (№ 19) краинологические коллекции. Отметим, что при кластеризации вантосская (урартская) коллекция проявляет другой вариант группировки, помещаясь наиболее близко к севанской (№ 2) раннекорейской группе, далее объединяясь с соответствующими материалами Южной Осетии (Тли, № 7) и Мингечаура (№ 6).

На дендрограмме (табл. IX, рис. 2) специального внимания заслуживает выделяемая на 14 ступени группа палеоантропологических коллекций, которая включает армянскую раннекорейскую (№№ 2, 3), вантосскую (№ 1), южногрузинскую (№ 4), мингечаурсскую ("лежа на спине", № 6), а также скифские (№№ 10, 13) коллекции. То есть, по существу, получается морфологически близкая, группируемая в пределах одного географического региона – Закавказья, – выборка палеоантропологических коллекций, к которой примыкают скифские материалы.

Примечательны статистическая близость и морфологическое сходство вантосской (урартской), скифской и этрусской краинологических коллекций.

Сравнительное изучение мужских групп тринацати краинологических коллекций Закавказья, Северного Кавказа и Южнорусских степей в системе четырнадцати признаков делает более четким выявленное в системе восьми признаков статистическое сходство вантосской палеоантропологической коллекции со скифскими коллекциями (№№ 9, 11).

\* Антропологические таблицы, в отличии от археологических пронумерованы римскими цифрами.

Примечательно, что статистический анализ тринадцати краниологических коллекций Закавказья, Северного Кавказа и Южнорусских степей компонентным методом в системе четырнадцати признаков группирует вышеприведенную выборку в поле координат по историко-территориальным особенностям. Сопоставление I и II интегральных характеристик (табл. X, рис. 1) позволяет в поле положительных значений отделить довольно близкими и, тем не менее, не соприкасающимися "островками" синхронные коллекции – относительно массивную Армению – Севанского бассейна (№ 2) и Орома (№ 3) и сравнительно узколицую – Грузии (№ 4) и Осетии (№ 7) железного века. К ним примыкает также нижнеднепровская (Никополь) скифская коллекция (№ 13). В общих границах помещается также скиф-ская выборка (№№ 9, 10, 11, 13, 14), а кобанская (№ 8) долихоморфная, мингечаурские чрезвычайно грацильная (№ 5) и низколицая (№ 6) коллекции поляризованы.

